

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍՐԱՆ**

**ԿԱՐԻՆԵ ՀԱՅԿԱՋԻ ՔՈՉԱՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

**ԺԸ.00.01 – «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»**

**մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական**

**աստիճանի համար**

**Գիտական**

**դեկավար՝**

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

Մ. Ա.

Գասպարյան

ԵՐԵՎԱՆ 2018

**ԲՈՎԱՆԴԻ ԻԹՅՈՒՆ**

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

4

### **ԳԼՈՒԽ I. ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1.1 Թանգարանների ճարտարապետական զարգացման պատմական հիմնական  
փուլերը

11

1.2 Ժամանակակից թանգարանային շենքերի ճարտարապետական ձևաստեղծման  
ուղղությունները

23

1.3 Թանգարանային շենքերի նախագծմանն առաջադրվող հիմնական արդի  
պահանջները

30

1.4 Թանգարանային շենքերի արդիականացման հեռանկարները

61

Եզրակացություն Առաջին գլուխ

66

**ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

**2.1 Թանգարանների ճարտարապետական կազմավորման փուլերը**

2.1.1. Թանգարանային շենքերի նախատիպերը

69

2.1.2. Միջնադարյան թանգարանները

70

2.1.3. XIX – XXդդ. հիմնադրված թանգարանները

71

2.1.4. Խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի

թանգարանաշինությունը

72

**2.2 Թանգարանների տիպաբանական դասակարգումը**

74

**2.3 Թանգարանների ճարտարապետահատակագծային լուծումները**

79

Եզրակացություն Երկրորդ գլուխ

122

**ԳԼՈՒԽ 3. «ՀԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ**

**ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ**

**ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

124

3.1. Արդիականացման հիմնախնդիրները և հնարավորությունները

125

3.2. Արդիականացման ընթացիկ իրադրությունը, արդիականացման հայեցակարգային առաջարկներ

127

Եզրակացություն Երրորդ գլուխ

139

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

140

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

143

**ՀԱՎԵԼՎԱԾ**

150



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### Ուսումնասիրության արդիականությունը

Թանգարաններն անցել են կայացման երկարատև ուղի և կարևոր նշանակություն ունեն մարդկության մշակութային ժառանգության պահպանման, ցուցադրության և հանրահոչակման, կրթական և գիտական զարգացման գործում: Դրանք իրենց գոյությամբ և բովանդակությամբ արտացոլում են տվյալ հասարակարգի զարգացման մակարդակը և վկայում քաղաքակիրթ անցյալի մասին: Թանգարանային շենքերը՝ անտիկ ծագումնաբանություն ունենալով հանդերձ, զարգացել են որպես արևմտաեվրոպական մշակույթի օջախներ, տարածվել տարբեր երկրներում՝ կրելով այդ երկրների ազգային առանձնահատկությունների ազդեցությունները:

Մեր օրերում թանգարանաշինությունը ողջ աշխարհում հսկայական մասշտաբների է հասել և բազմազանությամբ հանդերձ թանգարանների մեծագույն մասը ներգրավված է շարունակական արդիականացման գործընթացներում:

Թանգարանների հիմնադրման և զարգացման կայուն ընթացքը Հայաստանում սկիզբ դրվեց Խորհրդային ժամանակաշրջանում: Շենքերի գերակշիռ մասը (80%)՝ հարմարեցված, խորհրդային տարիներից պահպանված նյութական ժառանգություն են պատմական շենքեր կամ վարչական տարածքներ (Ե. Զարենցի անվ. գրականության և արվեստի, Գյումրիի ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարանները, Ա. Իսահակյանի տուն-թանգարանը Երևանում և այլն): Միաժամանակ, առանձնանում են այդ տարիներին նախագծված և կառուցված ազգային ինքնատիպ ոճով կառուցներ (Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան, Հովհ. Թումանյանի տուն-թանգարանը, "Էրեբունի" պատմահնգիտական արգելոց-թանգարանը և այլն):

Թանգարանների դերը, ուղղվածությունը, աշխատանքը և ճարտարապետությունը էապես փոխվեցին անկախությունից հետո, սակայն այդ գործընթացը դեռ չի

ավարտվել և անցնում է տարերայնորեն՝ առանց հստակ պատկերացնելու իրավիճակը և ծագած խնդիրները: Փաստորեն, թանգարանաշինության ներկա իրավիճակը կարելի է բնութագրել որպես ճգնաժամային: Խորհրդային Միության ճարտարապետության բաղադրիչը լինելով՝ այն համապատասխանում էր այդ ոլորտում գործող ճարտարապետաշինարարական նորմերին և այսօր, չնայած թանգարանների մասնակի վերակառուցումներին, որանց մեծամասնության ճարտարապետական լրացներն ու ոչ լիարժեք նյութատեխնիկական հագեցվածությունը թույլ չեն տալիս թանգարանների գործունեությունն իրականացնել ամբողջական ծավալով:

Խորհրդային տարիներին թանգարանների մեծամասնությունը «Երկաթյա վարագույրի» պայմաններում նախատեսված էր հիմնականում ներքին այցելուների համար, ապա այսօր աշխարհի տարբեր երկրների թանգարաններում շրջած այցելուն չի գոհացնի եղած վիճակը: Փոփոխվել են նաև ցուցադրության կազմակերպման ձևերն ու մատուցվող թանգարանային ծառայություններին ներկայացվող պահանջները՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ներառելով ICOM-ի ստրատեգիական ծրագրերին համապատասխան կրթադաստիարակչական գործունեություն:

Հայաստանում այսօր իրատապ է ոչ միայն գործող թանգարանների ճարտարապետության ներկա վիճակի ուսումնասիրության ամփոփումը, այլև որպես նախագծային աշխատանքներին նախորդող հետազոտություն, արդիական է դրանց ճարտարապետական կերպարի պատմական և համալիր քննությունը՝ ճարտարապետական ձևագոյացման դասակարգումը, ծավալատարածական հորինվածքի, հատակագծային, գործառնական և տիպաբանական կառուցվածքի, ոճական առանձնահատկությունների ուսումնասիրումն ու գործառնական կառուցվածքի վերլուծությունը, հիմնախնդիրների բացահայտումն ու համակարգումը:

Անհրաժեշտ է մշակել նաև արդիականացմանն ուղղված առաջարկություններ և գիտականորեն հիմնավորել նոր կառուցվելիք թանգարանային համալիրներին ու շինություններին ներկայացվող պահանջները:

### **Թեմայի ուսումնասիրվածությունը**

Հետազոտության համար տեսական հիմք են ծառայել արտերկրի մասնագետների արժեքավոր իրապարակումները, հետազոտությունները, այդ թվում Ա. Չուգունովայի, Մ. Զեյզերի, Մ. Գիբելիհաուսենի, Ս. Մակ Լեոդի աշխատությունները, որոնցում յուրահատուկ մոտեցմամբ են արձարձվել թանգարանային ճարտարապետության ընդհանուր խնդիրները: Թանգարանների նախագծմանն առաջադրվող պահանջների համակարգման համար ուսումնասիրվել են թանգարանային ճարտարապետության միջազգային՝ այդ թվում ոռոսական շինարարական նորմատիվներն ու կանոնակարգերը, Վ. Ռեվյակինի աշխատությունը:

Հայ գիտնականներն անդրադարձել են թանգարանային ճարտարապետության հետ կապված առանձին հարցերի լուսաբանմանը: Դրանց թվում է Կ. Ղաֆադարյանի «Հայաստանի թանգարանների պատմությունից» աշխատությունը: Է. Տիգրանյանը ուսումնասիրել է թանգարանների ճարտարապետությունը տիպաբանական տեսակետից՝ հասարակական շենքերի և կառուցվածքների ճարտարապետական նախագծման հիմունքներին նվիրված մենագրությունում:

Որպես ճարտարապետական առանձին ստեղծագործություններ որոշ թանգարանային շենքեր նկարագրված են խորհրդային ճարտարապետությանը և առանձին ճարտարապետներին նվիրված Ա. Գրիգորյանի և Մ. Թովմասյանի [21, Եջեր 103, 151, 180-182], Լ. Բաբայանի և Յոլ. Յարալովի [16, Եջեր 16-50, 72-83], Վ. Հարությունյանի, Մ. Հասրաթյանի և Ա. Մելիքյանի [15], աշխատություններում: Այս ցուցակին կարելի է ավելացնել «Հայաստանի և Արցախի թանգարանները» երկեղութեղեկագիրը (2016), Ա. Աճառյանի «Երևանի

թանգարանների ինտերիերի դիզայնը» ատենախոսությունը (2017):

Այսպիսով, չնայած թանգարանային շենքերի կառուցման հսկայածավալ փորձին, այսօր լուրջ խնդիր է դրանց նվիրված մասնագիտական ամփոփ, համակարգված ժամանակակից գրականության բացակայությունը: Թանգարանային ճարտարապետությանը նվիրված բոլոր աշխատությունները հրատարակվել են մինչև 1990-ական թթ., և փաստորեն, 1990-2017 թթ. կառուցված թանգարանների նշանակալի օրինակները մասնագիտական ճարտարապետական գրականությունում տեղ չեն գտել: << թանգարանների ճարտարապետական կերպարի պատմական և համայիր հետազոտությունն արդիական է և հրատապ թանգարանային ճարտարապետության աննախադեպ զարգացումների, գոյություն ունեցող պարադիգմայի փոփոխվելու և գրականության մեջ ամբողջական դասակարգման բացակայության պատճառով: Այդ դասակարգման շնորհիվ կարելի է հստակ պատկերացնել << թանգարանային ճարտարապետության արդի վիճակը, համեմատել այն համաշխարհային միտումների հետ և ուրվագծել ժամանակին համահունչ զարգացման ուղիները:

Հետազոտվող թեմայի արդիականությունն այսպիսով պայմանավորված է երկու հիմնական խնդիրներ կարգավորելու անհրաժեշտությամբ:

- XX և XXI դարերի ճարտարապետության պատմության շրջանակների ընդլայնում (բաց էջերի լրացում)
- մի շարք գործնական, հրատապ խնդիրների լուծում՝ կապված գոյություն ունեցող թանգարանային շենքերը վերակառուցելու և արդիականացնելու, ինչպես նաև տեղական պայմաններում ժամանակակից, առաջարիմական չափանիշներ պարունակող նոր թանգարանային շենքերի կառուցման համար:

**Ուսումնասիրության նպատակն է՝ վերլուծել << թանգարանային շենքերի ճարտարապետական կազմակերպման առանձնահատկությունները, տալ դրանց**

զարգացման և արդիականացման առաջարկություններ՝ հաշվի առնելով համաշխարհային թանգարանաշխնության ժամանակակից սկզբունքները և դրանց օգտագործման հնարավորությունները:

### **Ուսումնասիրության խնդիրներն են.**

- Նկարագրել հայրենական և արտերկրյա թանգարանների պատմաճարտարապետական զարգացման հիմնական առանձնահատկությունները,
- Վերլուծել ժամանակակից թանգարանային շենքերի ճարտարապետական ձևաստեղծման ուղղությունները,
- համակարգել արդի նախագծային լուծումների օրինաչափությունները, պահանջները և բացահայտել թանգարանային շենքերի վերակառուցման, արդիականացման համար անհրաժեշտ հիմնախնդիրները, նախադրյալները, հնարավորությունները,
- սահմանել նախագծային սկզբունքային առաջարկներ, հանձնարարականներ և գործառնական գոտևորման համանշանակ մոդելի հայեցակարգ:

### **Ուսումնասիրության օբյեկտը՝ թանգարանային շենքերի ճարտարապետությունը:**

**Ուսումնասիրության առարկան՝ << թանգարանային շենքերի գործառնական կազմակերպման, ճարտարապետական ձևաստեղծման և զարգացման առանձնահատկությունները:**

**Հետազոտության մեթոդաբանությունը** հիմնված է արխիվային և հրատարակված փաստաթղթերի, գրական աղբյուրների, լուսանկարչական նյութերի, նախագծային փաթեթների և գծագրերի ճարտարապետական վերլուծության վրա: Առանձին օբյեկների կարգավիճակի և շահագործման խնդիրների վերաբերյալ կիրառվել է թանգարանագիտության ոլորտի մասնագետների հարցման մեթոդը:

Ուսումնասիրվող շենքերի ներկայիս վիճակի փաստագրումն իրկանացվել է << մշակույթի նախարարության ենթակայության թանգարանների, «Հայնախագիծ

ԲԲԸ»-ի մի շարք ճարտարապետական արվեստանոցների կողմից տրամադրած նյութերի հիման վրա:

### **Գիտական նորույթը.**

Ատենախոսությունը Հայաստանի թանգարանային շենքերի ճարտարապետահատակագծային խնդիրների և դրանց լուծման առաջին համապարփակ ուսումնասիրությունն է: Աշխատանքում ի մի է բերվել թանգարանային շենքերի ճարտարապետական ժառանգությունը և ստեղծվել է տեղեկատվական-վերլուծական տվյալների շտեմարան. նկարագրվել են թանգարանների բնույթը, տիպը, պատմական տվյալները, ճարտարապետահատակագծային առանձնահատկությունները, արդի վիճակը և այլն: Մշակվել են զարգացման, արդիականացման ու ժամանակակից պահանջների միջազգային չափորոշիչներին և ազգային առանձնահատկություններին համապատասխան առաջարկություններ:

Կազմվել է թանգարանի ճարտարապետական կազմակերպման և կառավարման կառուցվածքային մոդել՝ հաշվի առնելով դիզայնի, նորագույն տեխնոլոգիաների կիրառման ժամանակակից պահանջները և քաղաքաշինական նորմերը:

Առաջին անգամ գիտական շղանառության մեջ են դրվում արխիվային փաստաթղթեր, նախագծային նյութեր՝ համապատասխան ուսումնասիրություններով:

### **Պաշտպանության են ներկայացվում.**

- հայրենական և արտերկրյա թանգարանների պատմաճարտարապետական զարգացման հիմնական առանձնահատկությունները,
- արդի թանգարանաշինության և թանգարանների արդիականացման համաշխարհային փորձը,
- << թանգարանների ներկա վիճակը, դրանց գործառական կազմակերպմանն

առաջադրվող հիմնական պահանջները, արդիականացման հնարավոր հայեցակարգային առաջարկներ:

### **Աշխատանքի գործնական նշանակությունը.**

Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել թանգարանային շենքերի ճարտարապետական, հատակագծային նոր հայեցակարգի մշակման, նախագծային առաջարկների ձևավորման, վերակառուցման և արդիականացման ճարտարապետանախագծային առաջադրանքների կազմավորման և նորմատիվ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքների հիմնավորման համար:

Ուսումնասիրության տեսական նյութերը կարող են օգտագործվել համաշխարհային և հայ արդի ճարտարապետության պատմության դասընթացներում, ինչպես նաև մշակութային ժառանգության վերականգնման նախագծերին նախորդող հետազոտական ուսումնասիրություններում:

### **Աշխատանքի հավաստիությունը.**

Ատենախոսության հիմնական դրույթները տպագրվել են 8 գիտական հոդվածներում, տարբեր ժողովածուներում:

Ատենախոսության առանձին դրույթներ ներկայացվել են «Ճարտարապետություն և շինարարություն» 7-րդ միջազգային գիտաժողովում (Ֆլորենցիա, 2015 ), ինչպես նաև Հայաստանի կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների ուշադրությանը՝ «Մշակույթի նախարարության, «ԻԿՕՄ-ի Հայակական թանգարանների ազգային կենտրոն» ՀԿ, Թանգարանային կրթության կենտրոն»:

Ատենախոսությունը քննարկվել է ՃՇՀԱՀ-ի ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի 2018թ. մայիսի 17-ի նիստում (արձանագրություն թիվ 9):

**Աշխատանքի կառուցվածքը.** Ուսումնասիրության տեքստը բաղկացած է 150

Էջերում շարադրված ներածությունից, երեք գլխից՝ իրենց եզրակացություններով և ընդհանուր եզրակացություններից, 90 անուն մատենագիտությունից,  
պատկերազարդման ցուցակից: Հավելվածը՝ 116 էջ, ներառում է աղյուսակներ,  
լուսանկարներ, գծապատկերներ:

## ԳԼՈՒԽ 1.

### ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ճԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1.1 Թանգարանների ճարտարապետական զարգացման պատմական հիմնական

##### փուլերը:

Թանգարանը հավաքագրում, պահպանում, ցուցադրում է տվյալ պատմական, հոգևոր, մշակութային հուշարձանները, զբաղվում լուսավորչական և հանրահոչակման գործունեությամբ և լուծում է մի շարք այլ կարևոր խնդիրներ, ինպիսիք են՝

- գիտահետազոտական աշխատանքներ,
- պահպանվող թանգարանային առարկաների թվագրումը, նկարագրումը, բնօրինակության հաստատումը,
- թանգարանային նոր արժեքների ձեռքբերումը,
- վերականգնողական աշխատանք, տպագիր նյութերի հրատարակում:

Թանգարանների առաջացման պատմությունը որպես յուրատեսակ հասարակական կազմավորումներ, որոնք բավարարում էին քաղաքական, գիտական, մշակութային, տնտեսական պահանջմունքներ, սկսվել է հնագույն ժամանակներից [33]: Թանգարան՝ (հունարեն՝ μουσεῖον, *mouseīon* /մուսեյոն/, բառացի՝ մուսաներին նվիրված վայր, մուսաների<sup>1</sup> տաճար) [37, էջ 30]: Թանգարանների նախատիպերն առաջացան մարդկային հասարակության զարգացման այն փուլում, երբ բնությունից և հասարակական կյանքից վերցված բնօրինակ առարկաները սկսեցին պահպանվել ոչ թե կենցաղային, կիրառական նպատակներով կամ որպես նյութական արժեքներ, այլ որպես փաստագրական, մեմորիալ-հուշային վկայություններ և էսթետիկական արժեքներ: Դիտարկելով թանգարանների պատմաճարտարապետական ձևավորման

---

<sup>1</sup>Մուսաները հնում համարվում էին գիտությունների, արվեստների և պոեզիայի հովանավորուիչներ[37]

ու զարգացման ուղին, ակնհայտ երևում է, որ թանգարանների նախատիպերում առկա էին այն հիմնական, գլխավոր գործոն գոտիները, որոնք կարևորվում և արժևորվում են նաև այսօր:

Կարելի է առանձնացնել թանգարանների ճարտարապետական կազմակերպման հիմնական 6 շրջան.

1) Հնագույն ժամանակներից մինչև XIV – XV դարերի սահմանագիծը կարող ենք անվանել Նախաթանգարանային հավաքչական գործունեություն:

Ամենահին հայտնաբերված թանգարանի նախատիպը Եգիպտոսում՝ մ.թ.ա. III-րդ հազարամյակ, Կրետեում՝ Կնոսոսյան պալատի գանձարանը՝ մ.թ.ա. XV-րդ դար, Զինաստանում՝ մ.թ.ա. XIII-XII դդ., Ասորեստանում՝ Նինվեյի պալատի գրադարանը՝ մ.թ.ա. VII-րդ դար: Առաջին Մոսեյոնը որպես ուսումնական հաստատություն հիմնադրվել է Ալեքսանդր Պտղոմեոս I-ի կողմից մոտավորապես մ.թ.ա. 290թ. [62] (Հավ. 2.1): Հին Հունաստանում «թանգարանի» գործառույթն իրենց վրա վերցրին աստվածների և մուսաների տաճարները, ուր տեղադրվում էին նրանց նվիրված արձաններ, նկարներ, արվեստի այլ գործեր: Մարդը հոգևոր արարումը համարում էր աստվածային շնորհ, ուստի՝ թանգարանը ևս պետք է լիներ ի պատիվ Աստծո: Անտիկ Հոռոմում արվեստի գործերը տեղադրվում էին նաև քաղնիքներում, թատրոններում, այգիներում<sup>2</sup>: Հոռոմում առաջացան առաջին մասնավոր հավաքածուները՝ բաց հանրային այցելության համար: Դրանցից էր Ադրիանոս կայսեր (117–138 թ.): Տիբուրտինական վիլլան (Հավ. 2.1): Կար միայն մեկ սահմանափակում՝ այցելուները պետք է հոռմեական քաղաքացիներ լինեին [19, Էջեր 46-64]: Մեր թվարկության 1000թ.-ից Զինաստանում և Ճապոնիայում թագավորական պալատներում և տաճարներում սկսեցին ստեղծել արվեստի գործերի հավաքածուներ: Առավել

<sup>2</sup> Հունաստանում և Հոռոմում այգիները նշանակալի դեր էին խաղում փիլիսոփաների և պոետների, կրթված քաղաքացիների և պետական գործիչների կյանքում[19]:

հետաքրքրական է Նառայի տաճարի *Shōsōin* հավաքածուն, ուր կան առավելապես կրոնական նշանակության իրեր և արվեստի ստեղծագործություններ [35] (Հավ. 2.1):

2. Թանգարանի կազմավորումը որպես սոցմշակութային ֆենոմեն, հավաքչական գործունեության՝ որպես մշակույթի յուրահատուկ ճյուղի ձևավորումը, Էլիտար /«փակ» տիպի/ թանգարանների առաջացում՝ XVII.-XVIII.դ.-ի վերջ:

Վաղ Վերածննդի շրջանում մեծ մասայականություն են ձեռք բերում պալատական հավաքածուները՝ /kunstkamera, myuntskabinet, naturalien-kabinet/ (Հավ. 2.1), որոնցում կենտրոնացված էին բնագիտական, ազգագրական և պատմագեղարվեստական հազվագյուտ արժեքներ [48, էջ 86-87]: Առաջացան առաջին թանգարանների նկարագրությունները, ինչպես նաև թանգարանագիտական տեսական ուսումնասիրությունները: Այդ ժամանակահատվածին են վերագրվում անտիկ արվեստի հուշարձանների հավաքածուները.

- Ֆլորենցիայում, ուր Լորենցո Մեդիչին, Պալացցո Պիտիի մերձակայքում հիմնում է Բոբոլի այգին /XVI.դ./: Այստեղ հավաքված էր անտիկ քանդակների հոյակապ հավաքածու: Այգին նաև քանդակագործների հավաքատեղի և աշխատատեղի էր [23] (Հավ. 2.1):

- Հռոմում՝ Վատիկանյան թանգարանները / XVI դ. /,
- Դրեզդենում՝ Ավգուստ Սաքսոնացու հավաքածուն / XVI դ. / և այլն:

Վերածննդի դարաշրջանում Եվրոպայում հայտնվեցին թանգարաններ, որոնց արդեն բնորոշ են որոշ գիտական գործառույթներ, ինչը կապված էր ինչպես աշխարհագրական մեծագույն բացահայտումներով, այնպես էլ զարգացող գիտական և արտադրական պահանջմանունքերով: Այստեղ իրականացվում էին նաև գիտական ուսումնասիրություններ՝ հիմնված այս հաստատություններում պահպող բացառիկ նյութերի վրա: Հավաքածուների նմուշներ էին հանդիսանում կենդանական և բուսական աշխարհի առարկաներ, հանքանյութեր, գեղդեզիական և

աստղադիտական գործիքներ, ազգագրական հետաքրքրություն ներկայացնող առարկաներ:

XVI դ. պալատների մեծ և երկար միջանցքներում ընդունված էր գեղանկարչական և քանդակային գործեր տեղադրել՝ նվիրված հերոսներին, գիտնականներին, պոետներին, քաղաքական գործիչներին՝ «ի նշան երախտագիտության, և այլոց մեջ այդ ձգտումներն ու արիությունն արթնացնելու համար» [13, էջ 266]: Եվ սա թանգարանների և տաճարների ևս մեկ ընդհանրությունն է՝ սրանք երկուսն էլ փաստագրական վկայություններ էին՝ կոչված պահպանելու մարդկային հիշողությունը:

Եվ, XVII դ. պալատների շինարարության ժամանակ սկսեցին նախագծվել հատուկ սրահներ՝ «գալերեաներ» նկարների, քանդակների, գրքերի և փորագրանկարների համար. Ավելի ուշ «գալերեա» բառը սկսեց շրջանառվել նաև առևտրային իմաստով: Սրահավոր շենքերը հարմարէին թանգարանների կարիքները հոգալու համար: Պատուիաններին հանդիպակաց, որպես կանոն խոլ պատը օգտագործվում էր արվեստի ստեղծագործությունների տեղակայման համար և ապահովում էր բնական լուսավորություն: XVII դարի վերջում և XVIII դարի սկզբում գալերեաները և կարինետները ստացան հասարակական բնույթ և «թանգարան» արդեն նշանակում էր ոչ միայն արվեստի և գիտական առարկաների հավաքածու, այլ նաև՝ պահոց, ուր ցանկացողները հրավիրվում էին այցելության [40, էջեր 11-13]: XVIII դարում թանգարաններում գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման արդյունքում տարածվեց թանգարանների հատակագծային ատրիումաձև սխեման, որը պահպանվեց մինչև XX դարի 20-30-ական թվականները: Այսօրինակ թանգարանները ստեղծվում էին շենքերի մեծ բակերում՝ ձևավորելով պատշգամբներով շրջապատված կենտրոնական տարածք: Այսպիսին է Փարիզի բնագիտության թանգարանը՝

պաշտոնապես հիմնադրված 1793թ.<sup>3</sup>(Հավ. 2.1):

3. Թանգարանային գործի՝ որպես ինքնուրույն մշակութային ոլորտի կազմավորում, նոր ուղղվածության թանգարանների առաջացում, թանգարանի աստիճանական վերափոխումը իբրև հասարակական-մշակութային կենտրոնի՝ XVIIIդ. վերջ - XIX դ. առաջին կես:

Թանգարանի՝ որպես հասարակական-մշակութային օջախի վերջնական ձևավորումը տեղի ունեցավ XIX դարում: Այս ուղղությամբ բուռն աշխատանքներ էին ծավալել լուսավորականները. Զոն Կոլինզը՝ Անգլիայում, որտեղ և առաջացել էր շարժումը, Մարի Ֆրանսուա Վոլտերը, Շառլ Մոնտեսֆիոն, Ժան-Ժակ Ռուսոն, Շենի Դիդրոն և այլք՝ Ֆրանսիայում, Գոթելիլ Լեսինզը, Յոհան Վոլֆգանգ Գյոթեն՝ Գերմանիայում, Ալեքսանդր Ռադիչչևը՝ Ռուսաստանում, որոնք արժենորեցին թանգարանների կրթադաստիարակչական դերակատարումը և ձեռնարկեցին խոշոր հավաքածուները, որոնք մինչ այդ պատկանում էին թագավորական ընտանիքին, ազգայնացնելու, թանգարանները լայն հանրության առջև բացելու գործընթացը: Թանգարանային շենքերի յուրահատուկ տիպ ձևավորվեց XIX դարում, եթե թանգարանները ներկայացվում էին իբրև տաճար և թանգարանային շենքերի նախագծերը ժառանգել էին տաճարային ճարտարապետության սկզբունքները. Վեհաշուրջ նախամուտք՝ սյունաշարով, մոնումենտալ աստիճաններով, հանդիսավոր նախարարով, բարձր առաստաղներ, դեկորի ծանրաշուրջ մանրամասներ, բնական լուսավորություն, մասսիվ ծավալներ, և մարդը թվում է փոքր մասնիկ այստեղ պահվող առարկաների անհամեմատ հսկայական արժեքի համեմատությամբ [77, Էջ 1]:

<sup>3</sup>1975թ.վերակազմավորվեց սրահների դասավորությունը, խմբավորվեցին փորձասենյակները, հիմնադրվեց ստորգետնյա կենդանաբանական սրահը, իսկ 1994թ. կենդանաբանության հին ցուցասրահը վերածվեց Էվոլյուցիայի մեծ սրահի: Այսօր էլ այս թանգարանը կարևոր նշանակություն ունի բնական գիտությունների գարգացման գործում թե՛ ազգային, և թե՛ միջազգային մակարդակով[52]:

Շենքերը ծևավորվեցին կամ ամֆիլադաներով, կամ 1-2 ներքին բակերի շորջ: Սյունասրահները շրջապատում էին բակը: Քանդակների ցուցադրման համար նախատեսված կենտրոնական բակը ծածկելու գաղափարը առաջացրեց նոր հատակագծային հորինվածքներ: Սյունասրահները զարդարվում էին քանդակազարդերով, ինտերյերներն ունեին վերին լուսավորություն և ճոխ ծևավորում, շքամուտքի հանդիսավոր աստիճանները շենքերում կենտրոնական տեղ էին գրավում: Այդպես էին թանգարանները պատկերացնում ճարտ.-ր Ֆոն Կլենցեն՝ 1816 թ. կառուցեց գլխավորութեկան<sup>4</sup>, 1830թ.<sup>5</sup> Պինակոտեկան Մյունխենում, Կ. Շինկելը՝ ով 1823 – 1830թթ. կառուցված Բեռլինի Հին թանգարանի հեղինակն էր (Հավ. 2.2):

Առաջին մասնագիտացված թանգարանային շենքը Գերմանիայում դարձավ Պոտսդամի Սան-Սուսի ցուցասրահը (ճարտ.<sup>6</sup> Ի. Բրյուխնգ, 1755–1764) (Հավ. 2.2): Շենքերի ճարտարապետությունը, ներքին և արտաքին ողջ ծևավորումը, նկարազարդումները՝ ամեն ինչ ծառայում էր գեղեցիկին՝ անանց արժեքներին հաղորդակցվելուն: Արվեստի ստեղծագործություններն արարվում էին սերունդների համար՝ «նրանց համար, որ հետո են գալու»[20, էջ 10]: Եվ հենց XVIII դարի վերջից հավաքածուների պահպանման և ներկայացման նպատակով կառուցված շենքերը սկսեցին կոչվել «թանգարաններ» [43, էջ 80]:

XIX դարի երկրորդ կեսից թանգարանները հիմնականում կառուցվում էին որպես ցուցադրական դահլիճների, ֆոնդադարանների, գրադարանների, լսարանների համար: Ճակատներին հանդիսավոր տեսք էր հաղորդվում ազգային կամ դասականության ոճով, իսկ ինտերյերները սովորաբար հարդարվում էին ցուցադրվող առարկաների ոճին համապատասխան:

4. Թագարանային ճարտարապետության հանդեպ վերաբերմունքն ամբողջովին փոխվեց XX դարում, երբ ինքն արվեստը ձեռք բերեց նոր արտահայտչաձևեր և

<sup>4</sup> Քանդակների թանգարան, ինչպես նաև բազմազան քարերի, փոքր պլաստիկայի հավաքածու

ճարտարապետները սկսեցին թանգարանային շենքեր կառուցել հատուկ քաղաքի, հավաքածուի, ցուցանմուշի համար [44, էջ 8]: Պատմագրությունը փաստում է, որ XX դարի առաջին կեսին թանգարաններ հազվադեպ էին հիմնադրվում. Եվրոպան ապրում էր XIX դարի ձեռքբերումների հաշվին, թույլ էր պետական և մասնավոր հիմնադրամների աջակցությունը, իսկ պատմական իրադարձությունները՝ համաշխարհային պատերազմը, քաղաքական անկայունությունն ավելի աղետալի դարձրին իրավիճակը [9, էջ 85]:

Ըստ Նիկոլաս Նաուգի, 1900-1940թթ. թանգարանն ընկալվում էր որպես քաղաքի կենտրոնում տեղադրված հասարակական հուշարձան և ճարտարապետական նորարարական մոտեցումներից իրաժարվում էին: Այդ թվականներին շենքի ճկունությունը՝ ցուցադրությունների փոփոխությունները կատարվում էին սրահների վերահատակագծումների, ձևափոխությունների միջոցով: Ըստ Նաուգի, կար երկու բացառություն՝ ԱՄՆ և ԽՍՀՄ: Առաջինն առանձնանում էր արագ զարգացող տնտեսությամբ և բարեգործական վերնախավի առկայությամբ, երկրորդը՝ քաղաքական ուժով և գաղափարական մղումներով: 1910-1950 թթ. ԱՄՆ-ում ստեղծվեցին 2000 թանգարան [86], Ցարական Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում՝ 1914-1950 թթ. ընթացքում 937՝ ըստ իրապարակված վիճակագրական տվյալների:

Այդ ժամանակահատվածի թանգարանների մեծամասնությունը արտաքնապես էկլեկտիկ են՝ մոնումենտալությամբ հարելով վերածննդի կամ կլասիցիզմի պատմական ոճերին ու սկզբունքներին: Աստիճանաբար նաև նոր հատակագծային լուծումներ էին որոնվում:

Արդյունքում ի հայտ եկան հետևյալ հատակագծային սխեմաները՝

- **Շառավղային սխեման՝** թանգարանի կենտրոնում գտնվում է մշտական ցուցադրությունը այցելուների հիմնական հոսքի համար, դրանից շառավղաձև տեղակայված են մասնագիտական բաժինները, պարապմունքների սենյակներն ու

պահոցները [40, էջ 17]: Այսպիսին է նորգոթական ոճով նախագծված Նյու-Յորքի Մետրոպոլիտեն թանգարանը (ճարտ.՝ Կ.Վո, Զ.Մոլդ, 1870<sup>5</sup>): Այս թանգարանն առանձինն էր, որ նախագծված էր կենտրոնական մասնաշենքի շուրջը ինքնուրույն բլոկներով և առանձնացած մուտքերով: Այս մոտեցումն արդեն սկզբունքայնորեն բացառում էր լրացուցիչ կցակառույցների ավելացումը [63] (Հավ. 2.2):

- **Սեգմենտային սխեման՝** թանգարանը բաղկացած էր մի քանի ինքնուրույն տարրերից: Դրանցից յուրաքանչյուրը բաղկացած էր ցուցադրական գոտուց և պահուստային սենյակներից: Խոշոր թանգարաններում այս էլեմենտները կարող էին զարգանալ և դառնալ առանձին մասնագիտացված թանգարաններ: Այսպիսի հատակագծային սխեմա ունի Բոստոնի Գեղեցիկ արվեստների թանգարանը(ճարտ.՝ Գ. ԼոուԷլ, 1909): Այս կառույցում հինգ ինքնուրույն բաժիններ տեղակայված են առանձին շենքերում [31] (Հավ. 2.2): 2000-ական թվականներին նորդասական ոճով իրականացված այս շենքին կցվեց 53 դահլիճներով թև՝ նվիրված ամերիկյան արվեստին: Հսկայական կցակառույցի նախագծի հեղինակն էր Ն. Ֆոստերը: Ներքին բակն ապակեպատված է: Այդ տարածքում են գտնվում տեղեկատվական կենտրոնը, սրճարանը, դրանց տակ տեղադրված է ժամանակավոր ցուցադրությունների ստորգետնյա դահլիճը: Մուտք է բացված հարավային կողմից և վերաբացվեց նաև վաղուց չօգտագործվող հյուսիսային մուտքը: Ինչպես Ֆոստերի մյուս աշխատանքներում, նոր լուծումներում ևս շատ է օգտագործված ապակին, ինչի արդյունքում առավելագույնս օգտագործվել է բնական լուսավորությունը: Ցուցանմուշները պաշտպանված են արևի ճառագայթներից հատուկ էկրանային համակարգի միջոցով: Վերակառուցման ընթացքում նորովի է լուծվել թանգարանի հարակից տարածքի կառուցապատումը: Լանդշաֆտի ժամանակակից կոնցեպտը հոյակապ ներդաշնակում է մոտակա՝ XIX դարից պատմականորեն ձևավորված

<sup>5</sup> 5-րդ Ավենյու, №1000 շենք թանգարանը տեղափոխվեց 1880թ.:

պարկային գոտու հետ (Հավ. 2.2):

**5. XX դ. Երկրորդ կես.** Այս ժամանակ հատկապես Եվրոպայում ծավալվեց թանգարանային պայթյունի շրջանը. XX դարում կառուցված շենքերի մեծամասնությանն առավել ճիշտ է «նոր»,քան «ժամանակակից» որակումը: XX դարի Երկրորդ կեսից բավականին հաճախ է հանդիպում «մաքուր տախտակի»/”tabulae rasaes”/գաղափարը, երբ յուրաքանչյուր նորահայտ ավանգարդ շարժում նախորդին մեռած էր հայտարարում [69]: Թանգարանային նախագծման նման օրինակներից են Musée à croissance illimitée (ճարտ.)՝ Լե Կորբյուզե, 1939), Փարիզի Ժ. Պոմպիուի կենտրոնը (ճարտ.)՝ Ռ.Պիանո,Ռ. Ռոզերս, 1977, Հավ. 2.3), Բեռլինի Ազգային նոր ցուցասրահի շենքը (ճարտ.)՝ Լ.Միս վան դեր Ռոե, 1968), որը դասական մոդեռնիզմի անգերազանցելի օրինակ է համարվում :

Ճարտարապետության այս նշանավոր վարպետները՝ Ա. Ավլոն, Լե Կորբյուզեն, Միս վան դեր Ռոեն, Ֆ. Լ. Ռայտը թանգարանային ճարտարապետության հոյակապ առաջարկներ են ներկայացրել, որոնք հիմնասյուներ հանդիսացան թանգարանաշինության պատմության մեջ:

Թանգարանային նոր շենքերի ճարտարապետահատակագծային առանձնահատկություններից են դրանց.

- կոմպլեքսայնությունը / համալրվածությունը
- դինամիկությունը
- ճկունությունը

**Կոմպլեքսայնություն.** կառուցում համատեղվում են մի քանի ֆունկցիոնալ գործունեություններ, ինչը շատ բնորոշ է ողջ ժամանակակից ճարտարապետությանը: Թանգարանում տեղակայվում են ոչ միայն երկու-երեք արվեստի ուղղություններին վերաբերող ստեղծագործությունների հավաքածու, այլև՝ գրադարանը, դասախոսությունների, երաժշտական դահլիճները, ինչպես նաև այլ

ճարտարապետորեն առանձնացված մասնաբաժիններ:

**Դինամիկությունը** նկատի ունի բազմաֆունկցիոնալություն, արագ զարգացող պահանջների բավարարում, նախապես հաշվի առնելով կառուցի հետագա ընդլայնումը:

**Ճկունությունը** հնարավոր է դարձնում սրահների հատակագծային կազմակերպման և ֆունկցիոնալ օգտագործման փոփոխությունները [40, Էջ 28]: Այս դեպքում թանգարանը տեսանելիորեն ընկալվում է որպես ամբողջական համալիր, և այցելուի հետ փոխգործունեության ընթացքում կարևոր է ոչ միայն շենքի ճարտարապետության կիրառական, այլև գեղարվեստական կերպարը:

Շենքերի ճարտարապետական տեսքը դառնում է ավելի ասկետիկ, չնայած շենքերի ճակատները դեռ երկար ժամանակ անվանումների փոխարեն զարդարվում էին քանդակային ռելիեֆներով:

Կառուցի ճկունությունը ապահովվում է սրահների ձևափոխություններով՝ նախագծվում էին ժամանակավոր ցուցադրությունների համար նոր սրահներ՝ վերահատակագծման հնարավորությամբ: Հնարավոր էր տեղաշարժել սրահների միջև միջնորմները: Ճկունության պահանջն առաջանում էր ֆունկցիոնալ անհրաժեշտությունից, և եթե ընդլայնման հնարավորությունը նախնական նախագծում նախատեսված չէր, ապա հետագայում առաջանում էին կցակառուցներ, որոնք աղավաղում էին նախնական մտահաղացումը:

Թանգարանների մեծամասնության համար բնութագրական դարձավ գլխավոր մուտքի տեղակայումը մայթի մակարդակին: Նախասրահը սկսեց Էֆեկտիվ կատարել վերահսկիչ գոտու դերը՝ այստեղ տեղակայվում էին հանգստի, տեղեկատվության գոտիները, որոնք հատուկ սրահների միջոցով կապվում էին ընթերցանության գոտու, բուֆետի հետ: Ցուցասրահները որպես կանոն տեղակայվում էին գլխավոր մուտքի մակարդակի վրա և կապվում էին զանազան լսարանների հետ: Մշտական

ցուցադրությունը նախագծվում էր այնպես, որ գլխավոր սրահներ հնարավոր լինի անցնել, չայցելելով մնացածները:

XX դարի թանգարանային ճարտարապետության ամենավառ օրինակներից է Սովորմոն Գուգենհեյմի թանգարանը Նյու-Յորքում (ճարտ.՝Ֆ.Լոյդ Ռայթ): 1943 թ. Գուգենհեյմը նոր նախագծի իրականացումը հանձնարարեց հայտնի ճարտարապետին, ովսկզբում թերահավատորեն էր տրամադրված, քանի որ համարում էր, որ իր գլուխգործոցը հարիր չէ տեղավորել Նյու-Յորքի խիտ փողոցային ցանցում: Բայցևայնպես, 1959 թ. Հինգերորդ ավենյու փողոցում ավարտվեց XX հարյուրամյակի ճարտարապետության ամենավառ օրինակներից մեկի՝ Գուգենհեյմի թանգարանի շինարարությունը: Ցավոք, ո՞չ Սովորմոն Գուգենհեյմը, և ո՞չ Էլ Ֆրենկ Ռայթը չապրեցին մինչ այդ նշանակալի շինության բացումը:

Շենքի ճակատը նախագծված է «տորնադո» հիշեցնող սպիրալաձև ծավալի տեսքով: Այդ հնարքը կիրառված է և ներսում՝ ողջ պարագծով: 3 մ բարձրությամբ ցանցավոր սեկցիաները կազմում են շենքի կարկասը: Շինության երեսպատումը կազմված է ճկված տիտանային թիթեղներից և ապակուց, ինչը նրան ոչ երկրային տեսք է հաղորդում:

Շենքի հատակագծումն առանձնակի ուշադրության է արժանի, քանի որ շենքում չկան իրենց կառուցվածքով հարանման սենյակներ: Դահլիճների սեկցիաները դասավորված են այնպես, որ այցելուները բարձրանալով վերելակով, այնուհետև պանդուսով իջնելիս, հնարավորություն ունենան առավել ամբողջական և անհրաժեշտ ռակուրսով տեսնել թանգարանի ցուցադրանքը: Իր հետաքրքրական նախագծով ճարտարապետը փոխանցել է ցուցադրության բնույթը սյուրեալիզմի և իմպրեսիոնիզմի ոճով, և թանգարանը «տորնադոյի» նման միշրճվել է Հինգերորդ ավենյուի մեջ՝ մի կողմ թողնելով մնացած շինություններն ու տակնուվրա արել ժամանակակից ճարտարապետության մասին պատկերացումները [71] (Հավ. 2.3): Եվ

Եթե Կորբյուզեն առաջարկել էր XX դարի թանգարանի մոդելի զարգացումը կենտրոնական միջուկի շուրջը՝ հորիզոնական ուղղությամբ, ապա Ռայթի մոդելը Կորբյուզեի մոդելի ուղղահայաց տարածական ուղղությամբ զարգացած տարատեսակն էր:

XX դարի թանգարանային շենքերի ճարտարապետական նախագծման հորինվածքային լուծումների առանձնահատկություններից դարձավ հոծ պատերի կիրառումը, ինչն էլ հանգեցրեց արհեստական լուսավորության լայն կիրառման: Այս նորամուծությունից առաջացած մյուս առանձնահատկությունը դարձավ օդորակումը, որը ճարտարապետին տվեց գործելու ազատություն և առավել արդյունավետ դարձրեց թանգարանի գործունեությունը: Ակտուալ դարձավ նաև պահոցների ընդլայնման խնդիրը:

XX դարի 60-ական թվականներից սկսվեց թանգարանների կրթական գործունեությունը՝ հատուկ նախագծեր երեխաների, երիտասարդների և մեծահասակների համար, իսկ կոմպյուտերային տեխնիկայի և ինտերնետի հայտնությամբ առաջացան վիրտուալ թանգարաններ: Թանգարանները նախագծման նոր խնդիրներ են առաջադրվում կապված նրանց՝ հասարակական կենտրոններ դառնալու հետ, ինչը հանգեցնում է դրանցում բազմազան ռեկրեացոն գոտիների տեղադրմանը, դրանք դարձնելով ճարտարապետական կոմպոզիցիայի հիմնական մասը: Հաշվի առնելով այս ամենը, ճարտարապետատարածական առաջարկները դարձան աննախադեպ բազմազան: Ուշագրավ դարձավ ներթափանցված տարածությունների նոր մեկնաբանումը՝ ոչ միայն հորիզոնական, այլև ուղղահայաց: Զարգացող թանգարանի տարածական մոդիֆիկացիաները հաշվի էին առնում ֆոնդադարանների, ժամանակավոր ու մշտական ցուցադրությունների աճը:

80-ական թվականների վերջին թանգարանները, որպես հաստատություններ, զարգացման հսկայական թոհջք ապրեցին՝ դառնալով բարդ, բազմաֆունկցիոնալ

օրգանիզմ: Տարբեր երկրների ճարտարապետների ջանքերը հանգեցրեցին նմանատիպ հայեցակարգերի: Առաջարկների ամենամեծ խումբը կազմում են միմյանց հարող բլոկերով հովհարածն կոմպոզիցիաները: Բլոկերից յուրաքանչյուրը նախատեսված է որոշակի ցուցանմուշների, ֆոնդադարանների, վերականգնման և այլ արհեստանոցների, ժամանակավոր ցուցահանդեսների, կինոդիտումների, դասախոսությունների, բանավեճերի և այլ միջոցառումների համար: Այս դեպքում թանգարանի գործունեության ամեն ուղղություն առանձնացված է առանձին ճարտարապետական ծավալում, որտեղ ստեղծված և ապահոված են օպտիմալ պայմաններ ցուցանմուշի ներկայացման, պահպանման, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, այցելուների պահանջների բավարարման համար /տեղակայված են կինոդահիմներ, գրադարաններ, ստուդիաներ և այլն/:

Մեր օրերում թանգարանային շինարարությունը ողջ աշխարհում հսկայական մասշտաբների է հասել: Օրինակ՝ Գերմանիայում վերջին 15 տարվա ընթացքում կառուցվել է ավելի քան 400 նոր թանգարանային շենք [77, Էջ 1]: Այսօր «թանգարան» հասկացության մեջ ներառվում են նոր գործառույթներ, որոնք առաջացնում են թանգարանային ճարտարապետության զարգացում և փոփոխություն՝ ներառելով նորարարականն ու ավանդականը: Այժմ թանգարանը ոչ միայն ավանդական գործունեություն է ծավալում, այլ նաև արժնորվում է շենքի ճարտարապետական լուծումը, շենքի ներսում կամ դրսում ցուցադրվող ցուցադրանքի կամ ցուցահանդեսի նորույթն ու ինքնատիպությունը [10, Էջ 87]:

Մշակութային ժառանգության հուշարձանների պահպանմանն ուղղված տարբեր միջոցառումներն համատեղվում են, երբեմն էլ համադրվում են դրանց վերակառուցման, մասնակի ճարտարապետական վերակազմավորման հետ, որը ներառում է.

- վերահատակագծում,

- սրահների բարձրությունների ավելացում,
- կոնստրուկցիաների ամրացում,
- մասնակի վերափոփոխություն կամ փոփոխություն,
- նաև կցակառուցների, հարկերի ավելացում
- շենքի ճակատի փոփոխություն

Վերակառուցման արդյունքում կառուցի նախնական տեսքը փախակերպվում է, ինչը նպատակ ունի այն դարձնել ավելի ժամանակակից, հասկանալի և գրավիչ հանրության և զբոսաշրջիկների համար:

Առանձնապես հաջող է ընթանում արդյունաբերական շենքերի վերակառուցումը: Առաջինը՝ գործառնական տեսակետից հնարավորություն է տալիս ստանալ մեծ տարածքներ, հարմար թանգարանային սրահներ, երկրորդը՝ ինչ-որ չափով լուծում է ճարտարապետության հուշարձանների պահպանման խնդիրը: Մ. Զեյգերը համարում էր, որ այդ շինությունները կարող են էականորեն վերափոխվել, վերակառուցվել և վերապրոֆիլավորվել, քանի որ ըստ նրա՝ հասարակության աչքում դրանք չունեն բարձր գեղարվեստական արժեք [69]:

Արդյունքում, XX դարի թանգարանային ճարտարապետության մեջ առանձնանում է մի ուղղություն և՝ արվեստի դեինդուստրիալիզացիա: Նախկին գործարանները, էլեկտրոկայանները, արդյունաբերական գոտիները վերակառուցվում են ժամանակակից արվեստի թանգարանների և ցուցասրահների [77, Էջ 3]:

Նմանատիպ վերափոխության օրինակ է Թեյթ Մոդեռն թանգարանը՝ ձևավորված նախկին լոնդոնյան ջերմաէլեկտրակայանի տարածքում: Շենքի վերափոխության վրա ծախսվեց £134 միլիոն ֆունտ և ժամանակակից արվեստի հավաքածուն 2000թ. տեղակայվեց նախկին լոնդոնյան ջերմաէլեկտրակայանում, ճարտարորեն արդյունաբերական շենքը վերափոխելով ժամանակակից արվեստի երևելի հարթակի [81]: Զերմաէլեկտրակայանի տուրբինային սրահը ևս վերանորոգվեց

Herzog & de Meuron Architekten ճարտարապետական բյուրոյի նախագծով և բացվեց հանրության համար 2016 թ. հունիսի 17-ին [39]: Թեյթ-Մոդեռնի գերժամանակակից այս մասնաշենքը իրենից ներկայացնում է ապակուց ու բետոնից 70 մետրանոց աշտարակ, որը հարավից կցակառուցված է հիմնական՝ վերապրոֆիլավորված Էլեկտրակայանի շենքին: Կցակառույցն ապահովեց 22,500 քմ լրացուցիչ ընդհանուր մակերես՝ ցուցասրահների, նոր դահլիճների, ուսումնական լսարանների, գրասենյակների, սննդի և հուշանվերների սրահների, ինչպես նաև մեքենաների և հասարակական տրանսպորտի կայանատեղիների համար [80]: Նոր մասնաշենքի բացումը թանգարանի օարգացման նոր շրջադարձ հանդիսացավ՝ դարձնելով այն աշխարհի ամենաառաջադեմ թանգարաններից մեկը և ձևավորելով նոր հազարամյակի ժամանակակից արվեստի ցուցադրությունը: Շենքը նաև դարձավ շրջանի քաղաքաշինական դոմինանտը(Հավ. 2.3):

6. XXI դարի թանգարանային ճարտարապետությունը հետևողականորեն պայքարում է ձևավորված կարծրատիպերի դեմ: Նկատվում է թանգարանային շինարարության աննախադեպ աճ, ահոելի գումարներ են ներդրվում նոր կառույցների հիմնադրման գործում: Թանգարանային շենքի ճարտարապետությունը պետք է անխօնական կապված լինի թանգարանային հայեցակարգի հետ. շինության տեսքը խորհրդանշական է. արտահայտում է հանրության պատկերացումները թանգարանի դերի, դրանում պահպող մշակութային արժեքների մասին: Ժամանակակից ճարտարապետները թանգարանային շենքի պարագայում փորձում են միավորել իին և նոր չափանիշները: Այսօր խոշոր թանգարանները մանկրում են մշակույթի և ատրակցիոնի միջև, մշակվում են մարկետինգային ստրատեգիաներ այցելուներ ներգրավելու համար, կազմակերպվում են ցուցահանդես-հիթեր, որոնց տոմսերը գնվում են ներկայացումից ամիսներ առաջ [45]:

## 1.2. Ժամանակակից թանգարանային շենքերի ճարտարապետական

## **ՃՆԱՍՏԵՂԾՄԱՆ ՈՒՂՈՎԹԵՅՈՒՆՆԵՐԸ.**

Ըստ Աննա Սեվերենչուկի, վերջին տարիներին կառուցված թանգարաններից առանձնանում են դրանց նախագծման երեք ուղղություն.

### **1. Թանգարան առանց պատերի**

### **2. Պատեր առանց թանգարանի**

### **3. Հոգևոր կենտրոններ-քաղաքային դրմինանտներ**

1. **Թանգարան առանց պատերի** ուղղությունը թանգարանի տեսողական վերափոխումներից է՝ կառուցի արտաքին շերտը իրականացնելիս առավելագույնս թափանցիկ դարձնելը, աննկատ ջնջելով նրա և շրջակայքի միջև սահմանները [75]: Գաղափարի հեղինակը Անդրե Մալրոն էր, ով դեռ 1947 թ. առաջարկում էր ստեղծել «երեւակայական թանգարան» [30]: Մալրոն այս գաղափարն առաջարկում էր փոխաբերական իմաստով և նկատի չուներ, որ այն կիրագործվի թանգարանային ճարտարապետության մեջ, բայց և այնպես այն իրագործվեց:

Շինության արտաքին և ներքին սահմանների ներթափանցումը, կառուցի և նրա արտաքին միջավայրի սահմանների աներևութացումը դարձավ ֆրանսիացի ճարտարապետ Ժան Նովելի սիրելի հնարքը: Նա՝ Փարիզում 1994 թ. բացված «Կարտիե» հիմնադրամի ժամանակակից արվեստի թանգարանի, ինչպես նաև 2006 թ. իրականացած Բրանլի գետեզերքի թանգարանինախագծերի հեղինակն է:

«Կարտիե» հիմնադրամի ժամանակակից արվեստի թանգարանի շենքի ճակատն ամբողջապես ապակյա է, որտեղից երևում է դեպի խորքերը երկարաձգվող ծառուղին: Սա թանգարանային տարածքի սահմանները ապանյութականացնելու փորձի ամենավառ օրինակներից էր՝ ճարտարապետի խոսքերով ասած. «Ճարտարապետության նյութականացման սահմանափակումները հաղթահարելու փորձ էր մի ժամանակաշրջանում, երբ «վիրտուալի և իրականի բաժանման սահմաններն այլևս աննշմարելի են» [34, էջ 47]:

Ժամանակակից թանգարանում կարևոր դերակատարում ունեն սրահների տարածական բազմազանությունը, թափանցիկ միջնորմները, լուսավորության և գունային գամմայի էֆեկտների հարստությունը, ինչն իր հերթին առաջացնում է գեղարվեստական ընկալման նոր որակ:

Հարկերով հեշտությամբ վեր ու վար անող անլար վերելակների ապակյա պարկուճները օրգանապես ներիյուաված են ներքին դիզայնին: Շենքի կառուցման համար պահանջվել է 650 տոննա պողպատ և 5000 մ<sup>2</sup> ապակի: Շինությունը 17 հարկանի է, որոնցից վերգետնյա են միայն 9 հարկերը: Այս՝ 6400 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով շենքում, բացի «Կարտիե» ժամանակակից արվեստի հիմնադրամից, տեղակայված են ցուցասրահ, առաջատար կազմակերպությունների գրասենյակներ, մեքենաների ստորգետյա կանգառ: Այցելուն ինքն է ընտրում ցուցադրական տարածքի իր երթուղին [65, էջ 129]: Կառույցում ընդգրկված է ևս երեք տարր, որոնք շենքի կերպարը դարձնում են առավել յուրահատուկ և առանձնահատուկ: Առաջինը լիբանանյան եղենափայտն է, որի բունը թաքցված է հսկայական զամբյուղում: Ծառը պահպանել են արժնորելով նրա պատմական կարևորությունը. 1823թ. այն տնկել է ֆրանսիացի գրող Ֆրանսուա Շատոբրիանը և ծառը կոչել են «Ազատության ծառ»: Երկրորդը՝ «Ուղահայաց այգին» Է՝ անմիջապես շենքի մուտքի վերնամասում: Բույսերի այս գորգը հորինել է նշանավոր ֆրանսիացի բուսաբան Պատրիկ Բլանը (Հավելված 5): Երրորդը սովորական այգի է՝ տեղակայված շենքի ներսում, որը ծևավորել է գերմանացի նկարիչ Լուտար Բումգարտենը և կոչվում է «Teatrum Botanicum» [88], [89]:

2006 թ. հանդիսավորությամբ բացվեց Բրանի թանգարանը: Գաղափարի իրականացումը տևել էր տաս տարի, ինչը ոեկորդ էր Փարիզի համար: Այս թանգարանի թափանցիկ պատը ծգվում է Սենայի երկայնքով երկու հարյուր մետր երկարությամբ: Թանգարանի տարածքը Փարիզից առանձնացված է տասներկու

մետրանոց ալիքածն ապակեպատ «վահանով», որից այն կողմ "անգամ օդն ուրիշ է", ինչպես նկարագրում է ճարտարապետը [17]: Արհեստականորեն ստեղծված բլուր-կոնստրուկցիաների վրա ծառ ու ծաղիկ է աճում, ինչը ջունգլիի տպավորություն է ստեղծում: Ինքնին Բրանլի թանգարանը ներկայացնում է ձգված, կտրված անկյուններով 220 մ երկարությամբ տուփ՝ կանգնեցված 26 քառսայնորեն տեղակայված բետոնե ցցերի վրա: Գետնի մակարդակին գտնվում է ընդարձակ նախարարական աշխատավայր, որտեղից այցելուները լայն աստիճաններով բարձրանում են վերին հարկ: Աստիճանները բոլորակում են ապակյա գլանը, որը լցված է խորհրդավոր, մուգ առարկաներով: Ամեն ինչ ծայրաստիճան թափանցիկ է, պատերը պրակտիկորեն բացակայում են, միայն կենտրոնում տեղադրված է բազմոց-միջնորմ՝ պատված մարմնագույն կաշվով [54, էջեր 35-39] (Հավ. 2.4):

Երևակայական թանգարանը թափանցիկ է դարձնում սահմանները, արմատապես վերափոխելով տեսանելիության գործոնի դերն ու նշանակությունը: «Թանգարան առանց պատերի» գաղափարի տեսողական ամենավառ օրինակ կարող է համարվել Նյու-Յորքի ժամանակակից արվեստի թանգարանը (ճարտ.՝ Յ. Տանիգուչի, 2004): Այս կառույցը տրամաբանական ավարտի է հասցնում թափանցիկության, աշխարհի հետ կապի, արվեստի և կյանքի միջև սահմանների գաղափարը: Ամբողջովին ապակեպատ շենքն օրգանապես ներկայություն է Նյու-Յորքի ուրբանիստական համակարգին, արտացոլվելով ու տարրալուծվելով հարակից թափանցիկ ու կիսաթափանցիկ հարթություններում (Հավ. 2.4): Ճարտարապետական տարածքի սահմանները դառնում են պայմանական ու անորոշ [31]:

Երկրորդ խումբը՝ թանգարանային շինությունների այն տարատեսակն է, որն արատահայտում է «Պատեր առանց թանգարանի» գաղափարը: Այսպիսի նախագծի ամենաերևելի օրինակը Բիլբաոյում Գուգենհեյմի թանգարանի մասնաճյուղն է (ճարտ.՝ Ֆ.Գերի, 1997), որի կառուցումը նշանակալի ազդեցություն ունեցավ թանգարանային

ճարտարապետության զարգացման ընթացքի վրա: Գրավիչ և առանձնահատուկ ճարտարապետությամբ Բիլբաոի թանգարանը քաղաքը դարձրեց տուրիզմի գեներատոր: Այդ բազմամիլիոն նախագիծը նախատեսված է միայն ժամանակավոր ցուցադրանքների համար: Միակ հիմնական ցուցանմուշն ինքը շենքն է, որը դարձավ Գուգենհեյմի թանգարանային ցանցի ճանաչելի բրենդը: Այս շենքը տեխնոլոգիական առումով ցուցադրեց նաև համակարգչային նախագծման պոտենցիալը: Շինարարության համար տեղ էր հատկացվել Ներվիոն գետի ափին: Այս տարածքում պահեստներ էին տեղակայված և երկաթգիծ էր անցում: Նորակառուց շինությունը երեք մետրանոց ցանցկեն հատվածներից բաղկացած մետաղական հիմնակմախք է: Պլաստիկությունն ապահովել հնարավոր դարձավ հիմնակմախքի առանձին հատվածների տրոհման արդյունքում: Հետագայում մոնտաժվել են կոնստրուկցիայի ներքին բաղկացուցիչներն ու արտաքին երեսպատումը [27, էջեր 52-53]: BOCAD համակարգչային ծրագիրը ճարտարապետին հնարավորություն տվեց ստեղծել ապագա կառույցի եռաչափ մոդելը, այդ նույն ծրագրով իրականացվեցին և աշխատանքային գծագրերը: Ծրագրի շնորհիվ հիմնակմախքը իրականացավ այնքան ճշգրիտ, որ տեղում էլեմենտների ճշգրտման ու ուղղման կարիք չեղավ: Այս թանգարանում չկա ոչ մի կրկնվող մետաղական դետալ [75] (Հավ. 2.5):

Թանգարանային շենքի նախագծան արդիական հիմնական խնդիրներից է ստեղծել այնպիսի տարածք, որը ցուցանմուշներին զուգահեռ ավելացնի այցելություններն ու եկամուտները: Այդպիսին է Բեռլինի հրեական թանգարանը (ճարտ.՝ Դ. Լիբեսկինդ, 1998), որը մշտական ցուցադրության ձևավորման ընթացքում՝ երեք տարի, «աշխատեց» միայն որպես ճարտարապետական օբյեկտ և ունեցավ ավելի քան երկու հարյուր հազար այցելու [26, էջ 18]: Թանգարանի հատակգիծը փոխհատվող գծերի և հետագծերի միջոցով կազմավորում է այն տարածքները, որտեղ իբրև թե ապրել են հրեա խելեկտուալներն ու արտիստները: Թանգարանը

ստորգետյա գետնուղով կապվելով Բեռլինի հին թանգարանի հետ, առաջացնում է ամայության զգացողություն: Հսկայական տարածքներով ձևավորված ինտերյերը այցելուին ստիպում է խորհրդածել: Արտաքինից թանգարանը պատված է ցինկե պանելներով, որոնց վրա նեղ, դինամիկ կտրվածքներ են արված, որոնք էլ իրենց հերթին շարժում են հաղորդում թանգարանի ճակատներին: Թանգարանն արտաքինից նման է առանձնացված կոնտեյների, որի ներսույթը հնարավոր չէ տեսնել կամ կոռահել: Պոետ Հոֆմանին նվիրված այգին ամբողջացնում է նախագիծը (Հավ. 2.5): Այգին առեղծվածային վայր է հիշեցնում՝ ձևավորված փշատի ծառերով, որոնք կյանքի խորհրդանիշ են և անհասանելի են՝ բարձր այուների վրա տեղադրված լինելու պատճառով [61, էջ 100]:

Երբ ԱՄՆ-ի Գետտի կենտրոնի շինարությունը արժեցավ 1 մլրդ դոլար, ակնհայտ դարձավ, որ արվեստի մեջ ներդրումները չեն սահմանափակվում միայն «առանձնահատուկ» ստեղծագործությունների ձեռքբերմամբ: Թանգարանի նախագծմանն հատկացված միջոցների գրագետ դուտացիան կարող է լավ PR-կոմպանիա հանդիսանալ խոշոր ընկերությունների համար: Արևմուտքում այդ ծախսերը սովորաբար կիսում են քաղաքային և մասնավոր կառույցները:

Համաշխարհային պրակտիկայում թանգարանային շենք նախագծելու մասնակցության հրավեր ստանալը ճարտարապետի, դիզայների համար մեծ հաջողություն է, որը խոսում է հանրության կողմից նրա տաղանդի գնահատման և ճանաչումի մասին: Գեղարվեստական թանգարանների նախագծերի պատվերներ ստանալը փափագելի է, ինչի մասին երազում են շատ ճարտարապետներ: Արդի ճարտարապետության հերինակավոր հետազոտող Զ. Զենկաը գտնում է, որ «Ժամանակակից թանգարանի շուրջը դեռևս պահպանվում է կրոնի թեթև լուսապսակը, ճիշտ է նվազած, բայց միևնույն է՝ նկատելի ճաճանչներով»: Թանգարանային նախագծերը գրավում են ողջ աշխարհի ճարտարապետների

ուշադրությունը, նրանց հնարավորություն տալով արտահայտել անհատական, կոնցեպտուալ մտահաղացումներ: Աղմկահարուց թանգարանային նախագիծը կարող է ճարտարապետին բարձրացնել աստղի մակարդակի [22, Էջեր 5-15]:

Փայլուն, վառ ճարտարապետական լուծումը կարող է հրապուրել տուրիստական հոսքեր, միևնույն ժամանակ բարդացնել թանգարանային գործունեությունը /օրինակ նյույորքյան Գուգենհեյմի թանգարանի կոր պատերն ու թեք հատակը նկարներ կախելու ամենահարմար տարբերակները չեն/: Թանգարանային շենքի իդեալական նախագիծը պետք է համապատասխանի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործառնական պահանջներին [77, Էջ 5]:

Այժմ ստեղծվում են նախագծեր, որոնք միավորում են թանգարանային շենքերի ընտրության և տեղաբաշխման բազմաբնույթ մոտեցումները: Այդպիսի օրինակ է Վիեննայի «Թանգարանային թաղամասը» (MQ), որ հանդիսավորությամբ բացվեց 2001թ., անմիջապես դարձավ մասսայական տուրիստական ուխտագնացության կենտրոն և ստացավ Վիեննայի կարևորագույն տեսարժան վայրի կարգավիճակ [25, Էջեր 92-93]: Այստեղ հնագույն շենքերի կողքին տեղակայված են XX և XXI դդ. արվեստին նվիրված երեք խոշոր թանգարան՝ Լյուդվիգ հիմնադրամի ժամանակակից արվեստի թանգարանը (MUMOK), Լեոպոլդի թանգարանը և վիեննական Kunsthalle-ն, որի երկու դահլիճներում ցուցադրվում են ժամանակից արվեստի նմուշներ: Երեխաների համար բացված է ZOOM Kindermuseum-ը: Թանգարանային թաղամասում պարբերաբար անցկացվում են տարբեր մշակութային միջոցառումներ /օրինակ՝, գրական«Օ-Տöne» փառատոնը և բազմաբնույթ համերգներ Վիեննական ջազային փառատոնի շրջանակներում/: Արյունքում, ըստ մտահաղացման, ձևավորվել է միասնական մշակութային համալիր [53, Էջեր 109-116] (Հավ. 2.5):

Երրորդ խումբը ներկայացնում են վերջին տարիներին կառուցված, այս կամ այն մշակութային տարածքում հոգևոր կենտրոնի դերակատարման ձգտող

գեղարվեստական թանգարանների կառույցները։ Որպես կանոն այդ շենքերը շատ գրավիչ են, երբեմն ազրեսիվ և առանձնանում են բացառիկ համարձակությամբ և օրիգինալությամբ։ Հաճախ նրանք դառնում են քաղաքային դոմինինանտ։ Այդպիսին է Դենվերի Արվեստների թանգարանի նոր մասնաշենքը (ճարտ.՝ Դ. Լիբեսկինդ, 2006)։ Տեխնոլոգիաների շնորհիվ ստեղծված է մի աշխարհ, որտեղ ասես մասամբ բացակայում է ձգողականությունը։ Սա պատասխան է Սյուլուեալիզմին։ Ըստ ճարտարապետի, «իիշողության մեքենան ստեղծում է գլխիվայր իրականություն» [61, էջ 222]։ Մեկ այլ օրինակ է Միլուկիի Արվեստների թանգարանը (ճարտ.՝ Ս. Կալատրավա, 2001), որի ճարտարապետական լուծումը իիշեցնում է հսկայական թռչնի թևեր. արևապաշտպան կոնստրուկցիայի թռիչքը հասնում է 66 մ (Հավ. 2.5)։ Կառույցն ասես սավառնում է քաղաքի և մոտակա Միջիգան լճի հարթ մակերեսի վրայով։ Ճարտարապետականորեն քողարկված «թանգարանը որպես տաճար» փոխաբերությունը ստիպում է մտածել ժամանակակից մշակութային մտածողության այլ շերտերի մասին։ Ինչպես միջնադարյան մարդը հաղորդակցվում էր վսեմին ծիսակարգի ընթացքում, այնպես էլ այժմ՝ թանգարան այցելելիս։ Խոշոր ժամանակակից թանգարանները, հատկապես հիմնական տուրիստական ուղերթներում ընդգրկվածները լեփիեցուն են, գլուխգործոց ստեղծագործություններին մոտենալն, որպես կանոն, անհնար է։ Թանգարանով անցնելն հաճախ թողնում է ավելի շատ ծիսական եղթի, քան արվեստին իրապես հաղորդակցվելու տպավորություն։ «Թանգարանը որպես տաճար» գաղափարը շարունակում է ժամանակակից մշակութային ձևափոխություններին համապատասխան ներմուծվել հանրային գիտակցություն [24]։

XX դարը մարդկությանը նվիրեց նոր տիպի թանգարաններ՝ հասունացավ գիտակցությունը, որ պահպանել և ցուցադրել անհրաժեշտ է ոչ միայն առարկաները, այլև նրանց բնորոշ միջավայրը։ Արդյունքում ստեղծվեցին բացօթյա-արգելոց

թանգարաններ, որոնց հավաքածուն կազմում են ոչ թե ավանդական ցուցանմուշները, այլ ճարտարապետական և ժողարվեստի հուշարձանները՝ բնական միջավայրում [10, էջ 95]: Այդ օրինակ բացօթյա թանգարան է Հուլոն-Վենդատ հնդկացիական ավանդական բնակավայրը Կանադայում, Վիյամսբուրգի գաղութային թանգարանը (հիմն. 1934թ.) աշխարհում ամենամեծ բացօթյա թանգարանն է, Սկանսենի ազգագրական համալիրը՝ աշխարհում առաջին բացօթյա գյուղ-թանգարանն է՝ (հիմն. 1891թ), ներկայացնում է Շվեդիայի XVI-XXդդ. պատմությունը, ավանդույթները, սովորույթները, ազգային տոնակատարությունները, արհեստները և այլն [66] (Հավ. 2.6):

### **1.3. Թանգարանային շենքերի նախագծմանն առաջադրվող հիմնական արդի պահանջները.**

#### **1.3.1. Թանգարանային շենքերի նախագծման և ճարտարապետական լուծումների տարբերակներ.**

Թանգարանային տարածքների սահմանափակությունը մեկն է այն պատճառներից, որոնք խոչընդոտում են թանգարանային գործի պատճաշ իրականացմանը, և եթե թանգարանային շենքը չի համապատասխանում որոշակի չափորոշիչների, այնտեղ անհնար է լավագույնս կազմակերպել թանգարանային առարկաների պահպանությունը: Թանգարանային շենքերը պետք է ունենան որոշակի չափանիշներ և համարվում են բարդ, նաև ամենաթանկ իրագործվող շինություններից: «Թանգարանային կառույց» հասկացությունը շատ լայն է և բազմազան են թանգարանների տեղադրության տարբերակները [49]: Տարածության կազմակերպման և ձևաստեղծման խնդիրներից բացի ճարտարապետները պետք է լուծեն այցելուների շարժման ուղղության կազմակերպման և հարկաբաժինների հատակագծման խնդիրները, հաշվի առնելով հետևյալ գործոնները.

- Այցելուների քանակի անընդհատ աճը

- Այցելուների կատեգորիաները. ավելի ու ավելի ուշադրություն է դարձվում համշանդամություն ունեցող անձանց, որոնք շենքում տեղաշարժման հատուկ պայմանների կարիք ունեն
- Թանգարաններում անցկացվող միջոցառումների բազմազանությունը
- Ցուցադրության կազմակերպման նոր սկզբունքներ, որոնք կարող են ճկուն փոփոխել եղած երթուղիները:

Այսօր նպատակահարմար և նույնիսկ պարտադիր է դարձել թանգարանում հսկայական կենտրոնական գոտու ստեղծումը, որի հետ կապված են լինելու բոլոր ցուցադրական տարածքները: Այսպիսի մեթոդ կիրառված է Մեխիկոյի Մարդաբանության ազգային թանգարանում (ճարտ.'Պ. Ռ. Վասկես, 1963), Ամստերդամում՝ Վան Գոգի պետական թանգարանում (ճարտ.'Գ. Ռիտվելդ, 1973; Կ.Կուրակավա, 1999), Վաշինգտոնի Ազգային ցուցասրահի արևելյան մասնաշենքում (ճարտ.'Յո Մին Պեյ, 1978) և այլն:

Գ. Ռիտվելդի նախագծով 1973թ. իրականացվեց Վան Գոգի թանգարանի առաջին մասնաշենքը, որն իրենից ներկայացնում է տարբեր չափսերի գուգահեռանիստերով կոմպոզիցիա՝ բազմամասշտաբ մասնատումներով: Ներքին տարածությունը կազմակերպված է ուղղահայաց ուղղությամբ. Աստիճանավանդակն առանցք է հանդիսանում, որի շուրջը տեղակայված են դահլիճները: Ողջ ցուցադրությունը զբաղեցնում է 4 հարկ: Ստորգետնյա մակարդակում է գտնվում անցումը դեպի ցուցադրական թևը (ճարտ.'Կ.Կուրակավա, 1999թ.), ինչն էլ հանդիսացավ ողջ թանգարանի այցեքարտը [76] (Հավ. 2.6): Այստեղ առանձնահատուկ շեշտված է այցելուների ընդունման գոտին, որտեղ նրանք ընտրում են իրենց երթուղին: Արդի մոտեցումների կիրառման արդյունքում թանգարանը վերափոխվում է մշակութային կենտրոնի, որտեղ այցելուների համար ոչ միայն իրականացվում են զանազան միջոցառումներ, այլև հաշվի են առնվում զուտ առևտրային և սպառողական

գործոններ: Որպես հետևանք, աճում է հանրության համար նախատեսված ծառայությունների և գոտիների դերը՝ խանութներ, սրճարաններ, ռեստորաններ, դահլիճներ և այլն:

Թանգարանի գործառույթների բազմազանությունը հանգեցրեց որոշակի գոտիների ձևավորման, որոնց նկարագրման համար անհրաժեշտ է նշել դրանց չափսերը, տեխնիկական բնութագրերը, ճշտել ինչպես են նրանք կապվում թանգարանի այլ մասերի և միմյանց հետ: Օրինակ, պահոցները և պահեստները իրենց գործառնական յուրահատկությունների շնորհիվ ձեռք են բերել խիստ յուրահատուկ առանձնահատկություններ: Ցուցանմուշների, լուսավորման սարքերի, օդորակիչների դասավորությունը, նրանց անհրաժեշտ մակերեսները, հարդարման բնույթը ևս որոշվում է թանգարանի կարիքների մանրազնին ուսումնասիրման հիման վրա:

Թանգարանների առաջացման պահից սկսած նրանց գլխավոր առանձնահատկությունը մշտական ցուցադրական գոտու առկայությունն էր: Այսօր գոյություն ունի երեք մոտեցում.

Առաջին դեպքում նախապատվությունը տրվում է ազատ հատակագծմամբ մեծ բաց տարածքներին՝ ցուցադրության փոփոխման հնարավորություններով (Հավ. 2.7):

Երկրորդ դեպքում՝ մեծ դահլիճներին՝ նախատեսված որոշակի շարժական հուշարձանների տեղակայման համար: Օրինակ կարող է հանդիսանալ Ակրոպոլիսի նոր թանգարանը (ճարտ.՝ Բ. Չումի, 2009): Թանգարանի հիմքը երկիարկանի սեղանի ձև ունի, որտեղ տեղակայված են արխաիկ ժամանակաշրջանի ցուցարանները (Հավ. 2.7): Շենքը պահում են հզոր փիլոնները, որպեսզի հնրավոր լինի շարունակել հնագիտական պեղումները: Ուղանկյունաձև, թափանցիկ ցուցարանը տեղակայված է ամենավերևում՝ վերարտադրելով Պարթենոնի պերիստիլոսը և չափով, և՝ օրիենտացիայով: Մեծ, բացօթյա բակը նախատեսված է Ակրոպոլիսի մարմարե

քանդակների տեղակայման համար [61, էջ 132]:

Երրորդը միջանկյալ լուծում է. հսկայական տարածությունը բաժանվում է ցուցադրության պահանջներին համապատասխան, իսկ ոչ մեծ էքսպոնատների համար օգտագործվում են փոքրիկ դահլիճներ: Այսպիսի օրինակ է հանդիսանում ֆլորենցիայի Opera Al Duomo թանգարանը (2015թ.), որում տեղակայվել է միջնադարյան քանդակի և ֆլորենտական վերածննդի աշխարհում ամենամեծ հավաքածուն՝ 750 աշխատանք /մարմարե, բրոնզե և արծաթե արձաններ, հարթաքանդակներ: Ներկայացված են Միքելանջելոն, Դոնատելլոն, Գիբերտին, Պիզանոն, Վերոկկիոն և այլք [84]:

Թանգարանի իրականացման համար ներդրվել է մոտ 45 մլն եվրո: Թանգարանագիտական նախագծի հեղինակն է Թիմոթի Վերդոն /Timothy Verdon/, ճարտարապետը՝ Ա. Նատալինին և “Guicciardini & Magni architetti” նախագծային ընկերությունը: Այս նախագիծն ուներ երեք նպատակ՝ մասնակի վերանորոգել թանգարանը, ստեղծել նոր տարածություններ: Նոր սրահներ են հանդիսանում 1779թ. Intrepid նախկին թատրոնի սրահները, որոնք փակվել էին 1914թ. և վերածվել ավտոկայանատեղիի: Արդյունքում ստեղծվել են նոր սրահներ, մակարդակներ և ստորգետյա բազմատեսակ սրահներ: Ընդարձակման աշխատանքների արդյունքում թանգարանն ավելի քան կրկնակի անգամ մեծացավ՝ օգտակար մակերեսը 2400 քմ-ից դարձավ 6000 քմ [64] (Հավ. 2.7):

Ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում ժամանակավոր ցուցադրությունների գոտին: Այս սեկտորի պահանջարկի աճը և տեխնիկական կատարելագործումը պայմանավորված է մշակութային փոխանակության զարգացմամբ, հասարակության կողմից հաջողությամբ ընդունվող խոշոր ցուցահանդեսների կազմակերպմամբ:

Քանի որ թանգարանային շինարարության աշխարհագրությունը շատ ընդգրկում է,

շենքերի նախագծման և ճարտարապետական լուծումներ գտնելու կարևորագույն գործոններից է հաշվի առնել թնագարաններին հատկացված շենքերի բնույթը, միաժամանակ անհրաժեշտ է կարևորել նաև կլիմայական և ազգային առանձնահատկությունները: Դա կարող է լինել հնագույն, որոշակի պատմական անցյալ ունեցող կառույց, որն արդեն ինքնին ենթակա է պահպանման: Միևնույն ժամանակ այն թանգարան է, նախատեսված իրականացնելու որոշակի գործառույթներ և գլխավոր ցուցանմուշ չի հանդիսանում: Որպես կանոն այդպիսի շենքերի ինտերյերները վերահատակագծվում, վերակառուցվում են, հարմարացվելով թանգարանային պահանջներին: Ամենաբարդ խնդիրն է հարմարեցնել պատմական շենքը թանգարանի, բավարարելով ժամանակակից թանգարանագիտության պահանջները և պահպանելով արժեքավոր պատմական օբյեկտը:

Այս տեսանկյունից առանձնակի ուշագրավ է Ստեղելեյկ թանգարանի (ճարտ.՝ Ա. Վեյսման, 1895) արդիականացումն Ամստերդամում: Նեռոենեսանսի ոճով իրականացված կառույցը հանդիսանում է ժամանակակից արվեստի և դիզայնի խոշորագույն թանգարանը Նիդեռլանդներում: Թանգարանի նոր մասնաշենքը նախագծվել է 2012թ. Benthem Crouwel բյուրոյի կողմից: Այժմ այստեղ է պահպում Կ.Մալսիչի ստեղծագործությունների՝ ՍՍՀՄ-ի սահմաններից դուրս գտնվող ամենախոշոր հավաքածուն [67]:

Տեղի բնակիչները կառույցն անվանում են լոգարանակոնք՝ դա առաջին տպավորությունն է, որն առաջանում է շենքին Museumplein-ի (Թանգարանային հրապարակ) կողմից նայելիս: Այն սպիտակ, հսկայական ծավալ է՝ բաղկացած է սինթետիկ Տնարոն նյութի 271 պանելներից: Այս նյութը օգտագործվում է նաև նավաշինության մեջ: Այս թեսում են տեղակայված գլխավոր մուտքը, գրախանությը, առողջապահության, ցուցադրական դահլիճներ, ինչպես նաև տոմսարկերը, թանգարանային խանութն ու ռեստորանը (Հավ. 2.8): Վերանորոգումից հետո

թանգարանի մակերեսը կրկնապատկվել է և կազմում է մոտ 8.000 քմ [14]:

Շփոթմունք է առաջացնում պատմական մասանշենքի քիվի մակարդակին հասցված տանիքի ծածկը, բայց այն անհետանում է, երբ սկսվում է քաղաքին բնորոշ հորդառատ անձրևը: Բոլոր անցորդները հավաքվում են այդ ծածկի տակ և մուտքի առաջնամասում գտնվող հարթակը դառնում է ոչ պակաս հասարակական տարածք, քան թանգարանի ինտերյերը [76], [56]:

Եթե առաջին դեպքում թանգարանի ստեղծումը խորհրդավոր կապ ուներ պատմական շենքի պահպանման հետ, ապա որոշ դեպքերում թանգարանի նպատակահարմար գործունեության համար ամենաժամանակակից պահանջները և տեխնոլոգիաների կիրառումը նկատի ունենալով լավագույն տարբերակ է համարվում հատուկ թանգարանի համար նոր համալիրի կառուցումը, քանի որ վերակոստրուկտավորված շինությունները գործնականում երբեք չեն համապատասխանում թանգարանային շինություններին ներկայացվող պահանջներին: Բայց անգամ այս դեպքում ժամանակի ընթացքում նոր տարածքների անհրաժեշտություն է առաջանում՝ ֆոնդադարանների, ցուցադրության, այլ կարիքների համար և հին շենքն այլևս չի բավարարում նոր պահանջներին:

Այսպիսի նորաստեղծ թանգարանի օրինակ է Շվեյցարիայի Բեռն քաղաքում Պաուլ Կլեի թանգարան-կենտրոնը (ճարտ.' Ռ.Պիանո, 2005), ուր լավագույնս իրականացված է բնության և ճարտարապետական հորինվածքի համադրման գրավիչ և հետաքրքիր գաղափարը: Կլեի (1879-1940թթ.) 4000 աշխատանքներից բաղկացած հավաքածուն տեղաբաշխված է մի շենքում, որն ինքը ճարտարապետը անվանել է «Հանդշաֆտային քանդակ»: Ըստ նրա մտահաղացման կենտրոնը ոչ միայն «Հիշատակի», այլ նաև հանդիպումների, հանգստի և հաճելի ժամանցի վայր է: Կենտրոնի շենքը ներկայացված է բլուրների տեսքով (Հավ. 2.8), որոնք ապակե և մետաղյա երեք ալիքներով մերթ բարձրանում են գետնից վեր, մերթ զգալիորեն

խորասուզվում գետնի տակ՝ փոխելով թեքության անկյունը, թռիչքի լայնքն ու բարձրությունը՝ ծևավորելով տարածական, լանդշաֆտային քանդակ: Կառուցի զգայի մասը գետնի տակ է, որի ստորին հարկերում ցուցադրվում են նկարչի ստեղծագործությունները: Երեք բլուրները ասես ներհյուսված են շրջապատող լանդշաֆտին և գործնականում միահյուսվում են ցորենի արտերին, դաշտերին ու անտառներին: Այգու կողմից կառուցին մոտենալիս անմիջապես չի ընկալվում՝ արդյոք բլուրներն արհեստական են, թե բնական: Հաշվի առնելով արվեստագետի բազմակողմանի գործունեությունը տարբեր ոլորտներում՝ որպես նկարիչ, երաժիշտ, ուսուցիչ, գրող և փիլիսոփա, ճարտարապետը նպատակադրվել էր նրան ներկայացնել և՝ համակողմանիորեն, և՝ համապարփակ: Ուստի երեք բլուրներից յուրաքանչյուրն ունի իր նշանաբանությունն ու նշանակությունը [90]:

Առաջին, ամենամեծ բլուր տեղաբաշխված են նախարարական դահլիճը և կրթական կենտրոնը, միջինում՝ մշտական և ժամանակավոր ցուցադրությունների սրահները, փոքրում՝ հետազոտական կենտրոնն ու աշխատասենյակները:

Ցուցադրությունների սրահը՝ կոր տանիքով, զով, մեղմ լուսավորված 1700 քմ մակերես ունեցող տարածք է՝ բաժանված է ավելի փոքր սրահների՝ շարժական միջնապատերով, որոնք դասավորվում են ցուցադրության համակարգող ցանկությամբ: Այստեղ միաժամանակ հնարավոր է ցուցադրել նկարչի 200 ստեղծագործություն [73]: Թանգարանի “Creaviva” մանկական կենտրոնում առաջարկվում են ինտերակտիվ ծրագրեր պատանի այցելուների համար, իրատարակում է նաև “Creaviva” ամսագիրը: 300 հոգու համար նախատեսված համերգասրահում «Կլեհ համույթի» ուղեկցությամբ ներկայացվում են թատերական և խորեոգրաֆիկ ներկայացումներ:

Թանգարանից դուրս գալով կարելի է զբոսնել քանդակների այգում՝ ըմբոշխնելով լեռի հանդարտությունն ու հնագույն բլուրների վեհ լուսավորումը, այցելել

արվեստագետի գերեզմանը: Այգու միջով թանգարանից քաղաք են տանում այսպես կոչված «Կլեհ արահետները», որոնք ներառում են հուշային կանգառներ՝ նվիրված այն վայերին, որտ սիրում էր այցելել վարպետը [38, էջեր 71-75]:

Ի տարբերություն վերը նշված դեպքերի, թանգարանային օբյեկտ կարող է հանդիսանալ ինքը՝ թանգարանին հատկացվող շենքը: Այս դեպքում գլխավոր նպատակ է դառնում պահպանել ոչ միայն շենքը, այլև դրա ինտերիերը՝ այսինքն ողջ համալիրը: Այս դեպքում շենքը ամրակայում են, պահպանում, ուսումնասիրում և այլն: Նման թանգարանի օրինակ է Ռեմբրանդտի տուն-թանգարանը Ամստերդամի Հրեական թաղամասում, Յոդենբրեստրաատ փողոցի վրա: Բացվել է 1911թ., այն տանը, որն իր փառքի գագաթնակետին գտնվող արվեստագետը ձեռք է բերել 1639թ. և ապրել է այնտեղ մինչ իր սնանկացումը՝ 1656 թ. [85]: Թանգարանում վերականգնված է Ռեմբրանդտի ժամանակաշրջանի պատմական միջավայրը՝ խոհանոցը, բնակելի սենյակները, արվեստանոցը: Թանգարանի ցուցադրանքի աղբյուր են հանդիսացել նոտարի՝ աճուրդում նկարչի ողջ ունեցվածքի վաճառքի ժամանակ կազմված գույքագրման ցուցակը (Հավ. 2.8): Թանգարանի ուղղվածությունից ու նշանակությունից շատ բան է կախված: Հուշային թանգարանները պահանջում են պատմական, հուշարձանային շենքեր, կապված հուշային անձի հետ: Միևնույն ժամանակ՝ յուրաքանչյուր թանգարան պետք է ունենա անհատական ճարտարապետագեղարվեստական լուծում՝ համահունչ որոշակի հավաքածուին և թանգարանի գործունեության ձևերին: Թանգարաններին գործունեության կարևորագույն բաղադրիչներից է ֆոնդերի համալրումը և ցուցադրանքների նորացումը:

Նպատակահարմար է, որ թանգարանային կառույցի ճարտարապետական նախագծման աշխատանքներին մասնակից լինեն նաև թանգարանային աշխատակիցները, որոնց խնդիրն է ստեղծել կառույցի հայեցակարգը, բացատրել

պահպանության, ցուցադրանքին առնչվող պահանջները, գրադարանի, ընթերցասրահների, դասախոսությունների անցկացման սրահների տեղակայման նախընտրությունները, հավաքածուի անվտանգության ապահովման պահանջները [49]: Կարևոր է հաշվի առնել ապագա թանգարանային կառուցին հատկացված տարածքի առանձնահատկությունները: Անհրաժեշտ է, որ շենքը հասանելի լինի հետիոտնի, հասարակական տրանսպորտի, տուրիստական ավտոբուսների և մասնավոր մեքենաների համար:

### **1.3.2 Թանգարանային շենքերի հեռանկարային զարգացման, դինամիկայի, փոխակերպման, ընդլայնման հնարավորությունները**

Թանգարանին հատկացված տարածքը պետք է ունենա հետագայում վերակառուցվելու, ընդլայնվելու հնարավորություն: Թանգարանի անվտանգությունն ապահովող ծառայությունները պետք է կարողանան իրենց խնդիրները իրականացնել անարգել, օր.' հասանելի լինեն ջրային ռեսուրսներ հնարավոր իրդեհի դեպքում: Հաշվի են առնվելու թանգարանային հաստատություններին ներկայացվող անվտանգության պահանջները՝ մոտակա շենքերի առկայությունը, դրանց տեղակայման հեռավորությունը, ընդհանուր անցուղիների առկայությունը: Հաշվարկվում է նաև տեղանքի հետագա ընդլայնման հեռանկարը /այլ շենքերի կառուցում, կոմունիկացիաների, նոր ճանապարհների անցկացում/:

Ճարտարապետական նախագծի հիմնական դրույթներից է նախորշել սրահների նախնական դասավորվածությունը: Դա թույլ է տալիս կանխորշել թանգարանային կառուցում շարժման ուղղորդվածության սխեմաները՝ էքսկուրսիաների և այցելուների, թանգարանային ծառայողների, առարկա-սարքավորումների, աղբահանության, արտակարգ պատահարների ժամանակ շարժը: Էքսկուրսիաններն ու անհատ այցելուները չպետք է առնչվեն այլ հոսքերի հետ:

Սրահների նախնական հատակագծման ժամանակ կարևոր է հաշվի առնել

ընդունելի լրավորության և սրահների լրավորության անկման կոնտրաստների մակարդակները, լրավորման սարքերի ամրացման առանձնահատկությունները։ Կարևորվում է սրահների պատերի երեսապատման նյութի ընտրությունը՝ այն կարող է լուսի արտացոլման տարբեր աստիճան ունենալ։ Հաշվարկվում են սրահների միկրոկլիմայի պահանջները՝ խոնավության, ջերմաստիճանի, աղմուկի մակարդակի, օդի լավորակացման և այլն։ Դրանց բավարար մակարդակից էլ կախված է պահպանության ռեժիմի ձևավորումը։

Թանգարանի հատակագծման ժամանակ պետք է հաշվի առնել, թե մակերեսի որ մասն է հատկացվելու ցուցադրությանը, ֆոնդերին, տեխնիկական սենյակներին, ռեկրեացոն գոտուն։ Թանգարանագիտական գրականության մեջ հաստատված այդ նորմատիվները բավական ճկուն են։ Ըստ լոնդոնյան ազգային պատկերասրահի կցակառուցի հեղինակ Ռ. Վենտուրիի «XIX դարի դասական օրինակներում ցուցադրական տարածքի և մնացյալ սրահների մակերեսների հարաբերակցությունը 9:1 էր, մինչդեռ այժմ այդ ցուցանիշը 1:2 է» [47, էջ 108]։

Թանգարանի բազմատեսակ ֆունկցիաների իրականացման համար մակերեսների օպտիմալ ընտրությունը կարևոր խնդիր է նախագծման փուլում։ Թանգարանների ֆոնդադարանների, աղմինիստրատիվ և սպասարկման սենյակների մակերեսները նապատակահարմար է հավասարեցնել էքսպոզիցիոն մակերեսներին, այսինքն առաջարկվում են հետևյալ չափանիշները՝ հատկացնել տարածքի 40% -ը հիմնական ցուցադրությանն ու ժամանակավոր ցուցահանդեսներին, 20%՝ ֆոնդերին, պահպանության և վերականգնողական լաբորատորիաներին, 20%՝ գրասենյակներին և սարքավորումներին, 20%՝ հանգստի գոտիներին /ճեմասրահներ, ընթերցասրահներ, լսարաններ, սրճարաններ/ [29, էջ 167]։

Որոշ մասնագետների կարծիքով, իդեալական է երեք հիմնական ֆունկցիոնալ գոտիների հավասար հարաբերակցությունը՝

- ցուցադրություն,
- ցուցանմուշների պահպանում և մշակում
- վարչական գոտի /սպասարկող սրահներով/

Այս հարաբերացությունը փոփոխվում է՝ կախված թանգարանի ուղղվածությունից, տեսակից. Գիտահետազոտական թանգարանները կարող են մեծ մակերեսներով ցուցադրական տարածքների կարիք չունենալ, դրանց հիմնական տարածքները հատկացվելու են ֆոնդերին: Ուսումնական թանգարանները կարիք ունեն մեծ ցուցադրական սրահների, դասախոսական և ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված սրահների, և ոեկրեացոն գոտիների պահանջ առանձնապես չունեն:

Կրթական թանգարաններն, ընդհակառակը, բազմաբնույթ սրահների կարիք ունեն, որոնք այցելուին հնարավորություն կտան նայել, ուսումնասիրել թանգարանային հավաքածուն, նաև՝ հանգստանալ, սնվել, զվարճանալ, այսինքն, այցելուի համար պետք է նախատեսել հարմար և բազմաֆունկցիոնալ հանգստի գոտի [70]:


XX դարի թանգարանային ճարատարապետության մեջ տարածում գտան թանգարանային կառուցների երկու հիմնական նախագծեր՝

- Կենտրոնացված
- Գծային

Սրանց գաղափարը ծագել էր դեռ նախորդ դարում, բայց իրագործվեց ավելի ուշ: Առաջին տիպի շենքերը կառուցվում էին որպես շրջանների համակարգ. այցելուն առաջնորդվում էր ցուցադրությունից ցուցադրություն, աստիճանաբար ավելացվում և բարդացվում էր տեղեկատվության հոսքը՝ (Սխեմա 1):

Այսպիսի կառուցի գաղափարն առաջարկել է Պիտ Ռիվերսը՝ Ֆարնեմի հնէաբանության և մարդաբանության թանգարանի հիմնադիրը Մեծ Բրիտանիայում<sup>6</sup>:


<sup>6</sup>Նա այս գաղափարն առաջարկել է 1887թ. «Journal of the Society of Arts»-ում տպագրված հոդվածում:



### Սխեմա.1 Թանգարանային կառույցների կենտրոնացված հրինվածք; այցելուներիշարժմանուղղությունը

- - այցելուներիշարժմանուղղությունը
- - Շենքի՝ հանրությունից առանձնացված մասը. ֆոնդային տարածքներ, գրադարան, արխիվ, ուսումնականսենյակներ, վերականգնողական արհեստանոցներ և այլն արտարանգարանային տարածք

Բրիտանիայի բնագիտության թանգարանի տնօրեն Գ. Ֆլաուերը պրոպագանդում էր թանգարանային կառույցների գծային տեսակը, ինչը հնարավորություն է տալիս միմյանցից անջատել ցուցադրության, ուսումնական և գիտական աշխատանքների անցկացման համար նախատեսված շենքի մասերը [60, Էջեր 57-64]: Կառույցն իրենից ներկայացնում է երեք մասի բաժանված ուղղանկյուն (Սխեմա 2.):



### Սխեմա 2. Թանգարանային կառույցների գծային հրինվածքը

Հանրության համար նախատեսված սրահները դասավորված են ճակատի երկարությամբ: Նրանցից հետ տեղակայված են առանց պատուհանների սրահները՝ նախատեսված ֆոնդերի, պահոցների համար: Շենքի պատուհանապատ ետնամասում տեղակայված են աշխատանքային և ուսումնական սենյակները:

Հատուկ թանգարանների համար նախագծված թանգարանային շենքերից կարելի է առանձնացնել հատուկ թանգարանային առարկաների պահպանության ու ամրակայման համար նախատեսվածները: Այդպիսին է «Վասա» թանգարանը. 1628թ.

Շվեդիայում կառուցված և հնագետներիկողմից միայն 1956թ. Հայտնաբերված շվեդական ռազմանավը հետագայում վերափոխվեց թանգարանի: Այսպիսի համայիրները նման են հսկայական լաբորատորիաների, որոնք բաց են այցելուների համար: Դրանց ստեղծումը նաև շատ աշխատատար է և ծախսատար [66]: Սակայն

Երբեմն թանգարան ստեղծելու համար բավարար է մի քանի սենյակ: Այս տարրերակը սովորաբար հարմար է դպրոցներին, համալսարաններին կից ստեղծվող ուսումնական թանգարանների համար: Բայց այս դեպքերում էլ է անհրաժեշտ հաշվի առնել թանգարանային շինությունների համար նախատեսված նորմատիվները:


### **1.3.3 Թանգարանների տեղակայման քաղաքաշինական սկզբունքները**

Թանգարանի առանձնահատուկ ճարտարապետական նշանակությունը էականէ քաղաքաշինական համալիրների ձևավորման առումով: Թանգարանների տիպաբանական բազմազանությամբ պայմանավորված խախտվեց միանշանակ մոտեցումը դրանց կառուցման հողատարածքների ընտրության հարցում և հասարակական և մշակութային կյանքում դրանց դերի ընկալումը: Կան քաղաքի սահմաններից դուրս, գեղատեսիլ վայրերում կառուցված թանգարանների բազմաթիվ օրինակներ /ազգագրական, հնագիտական, հուշային/, որտեղ համատեղվում են մարդկանց հանգիստն ու թանգարան այցելությունը:

Քաղաքում թանգարանային շենքի կառուցման համար հողատարածքի ընտրության հիմնական պահանջներն են՝

**Տեղակայում քաղաքի կենտրոնում** (Սխեմա 3.): Քանի որ թանգարանները հանդիսանում են համաքաղաքային համալիրի կերպարի ձևավորման առաջատար օբյեկտներ: Այս պահանջի իրականացումն ապահովում է թանգարանի տարրեր շրջաններից այցելուների համար մատչելիությունը, այլ մշակութային հաստատությունների՝ թատրոնների, ցուցարանների, գրադարանների և ժամանցի այլ

Վայրերի շարքում ընդգրկվել:



### Սխեմա 3. Թանգարանի տեղակայումը քաղաքի ցանցում

1. ակումբ,
2. համերգային դահլիճ,
3. ցուցասրահ,
4. գեղարվեստի դպրոց,
5. թագորոն,
6. կինոթագորոն,
7. գրադարան,
8. արխիվ

Թանգարաններ կարող են տեղակայվել գյուղերում ևս՝ վերացնելով քաղաքի և գյուղի սահմանները:

- **Հարակից զբոսայգի՝** բաց ցուցադրանքեր կազմակերպելու նպատակով, որը նաև կծառայի որպես լրացուցիչ ռեկրեացիոն գոտի և բնականորեն կպաշտպանի քաղաքային աղմուկից և աղտոտվածությունից:
- **Հողատարածքի բավականաչափ մակերես՝** թանգարանի կառուցման և հետագա ընդլայնման համար:

Այս պահանջները չեն վերաբերում այն թանգարաններին, որոնց տեղակայումը կապված է որոշակի վայրի հետ՝

- հուշային թանգարաններ
- հնագիտական թանգարաններ պեղումնավայրերում
- ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների, ձեռնարկությունների թանգարաններ

- բացօթյա թանգարաններ, որոնք կարիքու ունեն տվյալ տարածաշրջանին բնորոշ լանդշաֆտով, մեծ մակերեսով չկառուցապատված տարածքների:


#### 1.3.4 Հողատարածքին ներկայացվող պահանջները

Թանգարանի կառուցման վայրն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հիմնական գործոնները:

- **Սոցիալական նպատակներ՝** մշակութային ժառանգության պահպանություն և հանրահոչակում, բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացում, գիտական ուսումնասիրությունների իրականացում
- **Թանգարանի նշանակությունն ու յուրահատկությունը՝** թանգարանի տեսակը ընդհանուր կառուցվածքում/կենտրոնական, գլխավոր, մասնաճյուղ/, հավաքածովի տեսակը, ֆոնդերը, գործառնության հիմնական ուղղվածությունը՝ /գիտահետազոտական, գիտալուսավորչական, կրթական, ժամանցային/
- **Քաղաքի կամ բնակավայրի բնութագիրը՝** բնակչության թիվը, բնակչության տեղաբաշխումը, տրանսպորտային ցանցը, թանգարանի ազդեցության գործակիցը, քաղաքի կամ բնակավայրի զարգացման հեռանկարները, պատմական և մշակութային ավանդույթները, զբոսաշրջության զարգացվածության աստիճանը:
- **Շրջակա բնական միջավայրը՝** ռելիեֆը, բուսականությունը, ջրամբարները, երկրաբանական բնութագրիչները, կլիմայական պայմանները /ցուցանմուշների պահպանման և բաց ցուցադրանքների կազմակերպման հնարավորության համար/, հողատարածքի ձևն ու չափսերը, շահագործման սահմանափակումները, ներառյալ աղմուկը, ջերմաստիճանային տատանումները, աղտոտվածությունը, տեղանքի համապատասխանությունը բացօթյա ժամանցային միջոցառումների կազմակերպման համար
- **Քաղաքաշինական իրադրությունը՝** այլ թանգարանների, ուսումնական հաստատությունների, դպրոցների, գիտական հիմնարկների առկայությունը՝ դրանց հզորությունը, տիպը, տեղադրությունն ու քանակը, հանգստի գոտիները,
- **Մոտակա ճարտարապետական շրջապատը՝** թանգարանի համար անբարենպաստ արդյունաբերական ձեռնարկությունների, արագընթաց

մայրուղիների, երկաթուղու, օդանավակայանի հարևանությունը:

- **Զարգացման հեռանկարները՝** թանգարանային շենքի հետագա, փուլ առ փուլ ընդլայնման հնարավորությունը:
- **Բնակչությունը՝** սոցիալ – մասնագիտական և տարիքային կազմը, կրթական մակարդակը,, մշակութային պահանջմունքները, գրոսաշրջությունը:
- **Տրանսպորտային մատչելիությունը՝** հասարակական տրանսպորտի համակարգը՝ ապագա թանգարանի շրջակայքում կանգառների ու կայանատեղիների տեղադրությունը, հետիոտնի համար թանգարանի հասանելիությունը /հեշտ հասանելի՝ 15 րոպե հետիոտն կամ հասարակական տրոանսպորտով, հասանելի՝ 15-30 րոպե/:
- **Տեխնիկա-տնտեսական չափորոշիչները՝** տարածքի բարեկարգությունը, շինարարությանը զուգընթաց ճանապարհների, կոմունիկացիաների անցկացման շինարարական հնարավորությունները:
- **Հատուկ պահանջներ՝** արվեստի մոնումենտալ ստեղծագործությունների տեղակայման հնարավորություն բաց ցուցադրական տարածքներում: Հուշարձաններ ունեցող թանգարաններում տարածքային գոտիների հսկողությունը պարտադիր է: Թանգարանի հողատարածքի մակերեսը կախված է հավաքածուի մեծությունից և բնույթից: Նպատակահարմար է թանգարանային շենքը տեղակայել կառուցապատման կարմիր գծից և քաղաքային մայրուղիներից 15 մ հեռավորության վրա կանաչապատ պաշտպանիչ գոտի ստեղծելու նպատակով: Հողատարածքը պետք է թանգարանային շենքը հետագայում ընդլայնելու հնարավորություն ընձեռի (Սխեմա 4.):



### 1.3.5. Թանգարանի հողատարածքի ֆունկցիոնալ գոտիները

- ❖ **Մուտքի գոտին** ծառայում է այցելուների ընդունման, էքսկուրսիաների կազմակերպման, գովազդների ու տեղեկատվության համար: Մուտքի գոտուն մոտ նպատակահարմար է տեղակայել հասարակական տրանսպորտի և անհատական մեքենաների կանգառները:
  - ❖ **Ցուցադրական մասը** հանդիսանում է թանգարանային շենքի հիմնական հատվածը, որը կարող է շարունակվել բաց երկնքի տակ՝ ներկայացնելով մունումենտալ արվեստի գործեր և քանդակային աշխատանքներ: Զինատեսակների, հնագիտական մասունքների, ժողարվեստի հուշարձանների, հերոսներին և նշանակալի իրադարձությունների ննվիրված հուշակոթողների, պատմական բնույթի թանգարանները ևս կարող են ունենալ բացօթյա ցուցադրական մաս:
  - ❖ **Հանգստի /ռեկրեացոն/ գոտիները** կարող են համատեղվել /հարևանել/ մուտքի կամ ցուցադրական գոտու հետ:
  - ❖ **Տնտեսական գոտին** ընդգրկում է անհրաժեշտ շինությունները շենքից դուրս՝ ավտոտնակներ, պահեստներ, տրանսֆորմատորային էլեկտրավահանակներ:
- Առավել տարածված են հողատարածքի տարատեսակ մակերեսների հետևյալ հարաբերակցությունները (Աղյուսակ. 1, 2):

<b>Ցուցադրական մակերես/մ<sup>2</sup>/</b>	<b>500</b>	<b>1000</b>	<b>1500</b>	<b>2000</b>	<b>250</b>	<b>3000</b>
<b>Հողատարածքի մակերես/հա /</b>	<b>0.5</b>	<b>0.8</b>	<b>1.2</b>	<b>1.5</b>	<b>1.8</b>	<b>2</b>

<b>Կառուցապատման մակերես</b>	<b>25-30 %</b>
<b>Մուտքեր, արահետներ, ավտոտրանսպորտի կայանատեղիներ</b>	<b>10-15 %</b>
<b>Բաց ցուցադրական հարթակներ</b>	<b>10-15 %</b>
<b>Կանաչապատում</b>	<b>30-40 %</b>
<b>Տնտեսական բակ</b>	<b>5-10 %</b>

Այլուսակ.1,2. Հողատարածքի մակերեսների տարատեսակ հարաբերակցություններ

❖ **Գիտական աշխատանքի համար նախատեսված տարածքների մակերեսները.** բաժնի վարիչների համար նախատեսված են 9 մ<sup>2</sup>, գիտաշխատողների համար՝ 4,5 մ<sup>2</sup>:

Այժմայնտարածումգտածկրթամշակութային աշխատանքը ներառում է ցուցահանդեսների, էքսկուրսիաների կազմակերպում, դասախոսությունների, կոնֆերանսների, հանդիպումների, երեկոների, զրույցների անցկացում, ֆիլմերի ցուցադրում, խմբակների հետ աշխատանք, որը ենթադրում է շենքի կառուցվածքում ընդգրկել կինո-դասախոսական, խմբային աշխատանքի համար դահլիճ: Թանգարանի չափսերից կախված սրահների բնութագրերը տատանվում են հետևյալ հարաբերություններով.

- մինչև 200մ<sup>2</sup> ցուցադրական մակերեսով թանգարաններում առանձնացվում է ունիվերսալ օգտագործման գոտի
- մինչև 1500մ<sup>2</sup> ցուցադրական մակերեսով թանգարաններում նախատեսվում է կինոյի և դասախոսությունների դահլիճ 100 տեղի համար
- մինչև 2500մ<sup>2</sup> ցուցադրական մակերեսով թանգարաններում նախատեսվում է կինոյի և դասախոսությունների դահլիճ 200 տեղի համար
- մինչև 5000մ<sup>2</sup> ցուցադրական մակերեսով թանգարաններում նախատեսվում են երկու դահլիճ՝ կինոյի և դասախոսությունների դահլիճ 200 տեղի համար և

խորհրդակցությունների փոքր դահլիճ  $45\text{-}60\text{մ}^2$  մակերեսով, ինչպես նաև սենյակներ խնբակների համար:

Հավաքածուների պահպանությունը ներառում է ցուցանմուշների պահպանությանն ուղղված միջոցառումների անցկացում: Դրանք առավելապես իրականացվում են ֆոնդերում՝ ըստ ցուցանմուշների տեսակների: Աշխատանքի հիմնական մասը ցուցանմուշների պահպանությունն ու վերականգնումն է: Թանգարանի մեծությունից և նրա նշանակությունից կախված նախատեսվում է մեկ ընդհանուր վերականգնողական արհեստանոցից մինչև արհեստանոցների և լաբորատորիաների համայիր: Որոշ թանգարաններում նախատեսվում է այցելուներին ներգրավել և ցուցադրել վերականգնողների աշխատանքային ընթացքը [40, էջ123-127]:

### **1.3.6. Թանգարանային շենքերի հորինվածքային տեսակները**

Ցուցադրական դահլիճները առաջատար դեր են խաղում թանգարանի շենքի ճարտարապետական և ֆունկցիոնալ կառուցվածքում: Դահլիճների ճարտարապետատարածական ձևավորումը՝ դրանց չափսերը, ձևը, փոխապակցվածության համակարգը այլ սրահների և մնացած միջավայրի հետ որոշվում է ցուցադրության նշանակությամբ և յուրահատկությամբ:

Թանգարանային շենքերի հորինվածքային առավել տարածված ձևերից է կենտրոնական գոտու շուրջը երկրորդ և երրորդ հարկերում ցուցադրական տարածքների տեղակայումը: Էքսպոզիցիայի՝ երրորդ հարկից վեր տեղադրումը ցանկալի չէ, չնայած, որոշակի քաղաքաշինական պայմաններում չի բացառվում:

Միահարկ կոմպոզիցիան առավելագույնս հարմարավետ է հիմնական սրահների փոխատեղության և օպտիմալ լուսավորության ապահովման առումով: Այսպիսի հատակագծման առավելություններն են բնության հետ սերտ կապը, թանգարանի տրանսֆորմացիայի և հետագա ընդլայնման հնարավորությունը:

Թանգարանի բազմահարկ կոմպոզիցիան կազմակերպվում է ուղղահայաց

գոտևորումով: Վերին հարկերը նախատեսվում են էքսպոզիցիաների տեղակայման համար, որը ձևավորվում է ուղղահայաց՝ կոմունիկացիաների միջուկի կամ կենտրոնական դահլիճի շուրջը: Պահոցները, վարչականմասը, դասախոսությունների ընթերցման դահլիճներն ու այլ սրահները տեղակայվում են ստորին հարկերում: Այսպիսի լուծումներում նախասրահը դառնում է հորինվածքային կենտրոն, որից էլ զարգացումը շարունակվում է ուղղահայաց ուղղությամբ (Այլուսակ 3):

<b>Հորինվածքի տեսակը</b>	<b>Առավելությունները</b>	<b>Թերությունները</b>
<b>Միահարկ</b>	Սրահների ճկուն փոխատեղման հնարավորություն, ընդլայնվելու հնարավորություն, բնական միջավայրի հետ կապը	Անհրաժեշտ տարածքի պրոբլեմ՝ հեռանկարային շինարարության ընդլայնման համար, ինժեներական ցանցի տարածուն լինելը
<b>Բազմահարկ</b>	Տարածքի խնայողաբար օգտագործումը, ինժեներային ու տրանսպորտային կոմունիկացիաների կոմպակտ լինելը	Շինության ընդլայնման և սրահների մակերեսների վերաբաշխման սահմանափակ հնարավորություն: Տարբեր սրահների ճարտարապետահատակագծային լուծումների միօրինակություն: Ցուցադրության ամբողջական ընկալման խաթարում:

Այլուսակ 3. Թանգարանային շենքերի հորինվածքային տեսակները. դրանց առավելություններն ու թերությունները

### **1.3.7. Թանգարանային շենքերի գործառնական գոտիները**

Թանգարանային տարածքներն ըստ նշանակության բաժանվում են երեք տիպի՝ հիմնական, օժանդակ և ծառայողական: Թանգարանի գործառնական գոտիները երկու տիպի են՝ ա.-այցային և բ.- ծառայողական (Այլուսակ 4):

№	<b>Տարածքներ ըստ նշանակության</b>	<b>Թանգարանի գործառնական գոտիները</b>	
		<b>Ա – Այցային</b>	<b>Բ – Ծառայողական</b>

1.	Հիմնական	Հիմնական, ժամանակավոր ցուցադրություններ	Ֆոնդադարաններ
2.	Օժանդակ	Կինո-դասախոսական դահլիճ, խմբակներ, հանգստի գոտի, տեղեկատվական սրահներ	Աշխատակիցների աշխատանքային սենյակներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, գրադարան
3.	Սպասարկող	Նախամուտք, հանդերձարան, բուֆետ, կրապակ, ծխարաններ, սանհանգույցներ	Ծառայողական նախամուտք, տնտեսական պահեստներ, սենյակներ ինվենտարի համար, սանհանգույցներ, տեխնիկական սենյակներ

Այլուսակ 4. Թանգարանի հիմնական գործառնական գոտիները

Հիմնական խմբի տարածքների մակերեսների բաշխումը կախված է թանգարանի ուղղվածությունից, նրա մեծությունից և նշանակությունից: Մակերեսների մոտավոր հարաբերակցություններն են՝

- Ցուցադրական դահլիճներ՝ 45 - 55 %;
- Ֆոնդադարաններ՝ 20 - 25 %;
- Օժանդակ և ծառայողական սենյակներ՝ 25 - 35% [33, Էջ 18]:

Սենյակների գործառնական նշանակությունից և ներքին փոխկապակցվածությունից կախված, թանգարանի կազմում առանձնացվում են հետևյալ հիմնական տարածքները՝ նախարահ, ցուցադրական դահլիճներ, վարչական, աշխատանքային տարածքներ, լաբորատորիաներ ու արհեստանոցներ, ֆոնդադարաններ, տեխնիկական սենյակներ:

❖ **Նախասրահ՝** այստեղից է սկսվում թանգարանի ճարտարապետական տարածության զարգացումը: Այստեղից են այցելուները ստանում թանգարանից իրենց առաջին տպավորությունը: Նախասրահի տարածահատակագծային կազմակերպումն ենթարկվում է հետևյալ ֆունկցիաների իրականացմանը՝

Էքսկուրսիոն խմբերի և անհատ այցելուների ընդունում, տեղեկատվական սպասարկում, տոմսերի, հուշանվերների, բուկլետների վաճառք: Այս տարածքում հնարավոր է կարճաժամկետ ցուցահանդեսների անցկացում, այստեղ են գտնվում հանդերձարաններն ու սանհանգույցները: Նախարար կարևոր կոմունիկացիոն հանգույց է, որտեղ սկսվում և վերջանում է այցելությունը: Նպատակահարմար է նախարարից անարգել անցում ապահովել ցուցադրական, ցուցահանդեսային, կինոդիտման և դասախոսությունների ընթերցման դահլիճներ, վարչական մաս և խմբակային պարապմունքների սենյակներ: Թանգարաններում բացի գլխավոր նախարարից, ցանկալի է ունենալ նաև ծառայողական նախարար՝ աշխատակիցների համար: Նախարարի մակերեսը հաշվարկելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ թանգարանի առավելագույն միաժամանակյա ընդունելության հնարավորությունը, որը թանգարան օրական այցելուների ընդհանուր թվաքանակի 1/5 մասն է կազմում:

Հանդերձարանները ցանկալի է տեղավորել շենքի գլխավոր մուտքի մակարդակին, որպեսզի չխաթարվի նախարարի և կոմունիկացիոն հանգույցների, աստիճանների, վերելակների հետ փոխկապակցվածությունը: Ցուցադրության բազմահարկ կազմակերպման դեպքում, հանդերձարանն անհրաժեշտ է տեղակայել գլխավոր մուտքի մոտ, բայց առանձնացված հիմնական հոսքերից:

Ոչ մեծ թանգարաններում կարող են համատեղվել դրամարկող, հուշանվերային կենտրոնը, վերահսկողական կետը: Նախարարում են նախատեսվում տեղակայել նաև հակահրդեհային և ոստիկանական պահակակետերը:

Նախարարում տեղակայվում են հանդերձարանը, դրամարկողը, տեղեկատվական ծառայությունները, հուշանվերային կենտրոնը, բուֆետը, սանհանգույցներն ու ծխարանները: Սանհանգույցները տեղակայվում են մարդկանց մշտական գտնման վայրի ամենահեռավոր կետից առավելագույնը 75 մ հեռավորության վրա [42]:

Նախարարից են կազմակերպվում անցումները դեպի ցուցահանդեսային դահլիճներ, ֆոնդադարաններ, լաբորատորիաներ ու արհեստանոցներ:

**Ցուցադրական դահլիճներին ներկայացվող պահանջները.**

- Նկարների համար ցանկալի է բնական լուսավորություն՝ լուսաբացվածքների հյուսիսային օրիենտացիայով, գրաֆիկական ստեղծագործությունների ցուցադրման համար նպատակահարմար են հատուկ դահլիճներ: Մինչև  $500 \text{ m}^2$  մակերեսով թանգարաններում անհրաժեշտ է նախատեսել հանդիպումների կազմակերպման, կինոցուցադրության և ժամանակավոր ցուցադրությունների դահլիճներ և սրահներ:
- Թանգարանների շահագործման պրակտիկան ցույց է տալիս, որ մեծամասամբ ցուցադրական դահլիճներին անհրաժեշտ ու բավարար բարձրությունը կազմում է  $4,2 - 4,5 \text{ m}$ , իսկ ցուցադրական գոտունը՝  $1,5-1,7 \text{ m}$  հատակից  $80-90$  սմ բարձրությանվրա: Ցուցադրական շարքի երկարությունը չպետք է գերազանցի  $20-50\text{m}$ : Ցուցադրական գոտու ծանրաբեռնվածությունը ըցուցանմուշներով ընդունվում է  $50-60\%$ : Դիտողը պետք է ցուցանմուշից հեռու լինի ցուցանմուշի կրկնակի բարձրության չափով: Էքսպոզիցիոն տարածքի հնարավոր դիտողական սահմանը  $24\text{m}$  է:
- Հիմնական ցուցանմուշները ցանկալի է, որ ունենան  $10-15\text{m}^2$  էքսպոզիցիոն մակերես: Մեկ այցելուի հաշվարկով ցուցադրական մակերեսը կազմում է  $3-4\text{m}^2$ :
- Դահլիճների նախագծման ժամանակ ցանկալի է կրճատել և լուսամուտային, և մուտքային բացվածքները, սահմանափակել կոշտ կոնստրուկտորական սյուների և միջնորմների թիվը, որոնք բարդացնում են վերահատակագծումն ու ցուցադրության կազմակերպումը:
- Ընդունված է ցուցադրական դահլիճների բարձրությունը սահմանել  $4-5\text{m}$ , իսկ մեծ սրահներինը՝  $6-8 \text{ m}$  [46, էջ 9]:
- Դահլիճների տարածահատակագծային և գեղարվեստական լուծումները պետք է

համապատասխանեն էքսպոզիցիայի թեմատիկ կառուցվածքին և ապահովեն.

- Ողջ թանգարանի տարածքով անցնող միջանցիկ անցուղիների միջոցով առաջնային բաժինների նախընտրության հնարավորություն:
- Ժամանակի ընթացքում դահլիճների ցանցի փոփոխություն՝ կախված ցուցադրանքի համալրումից կամ նորացումից:
  - Բաց ցուցադրության կապը թանգարանի հիմնական ցուցադրության հետ
  - Ցուցադրական դահլիճների կառուցվածքում հանգստի հատուկ գոտիների նախատեսում:

Ցուցադրական դահլիճները պետք է տեխնոլոգիապես կապված լինեն ֆոնդադարանների և արհեստանոցների հետ: Դրանց տարրերը հարկերում նախագծելիս, անհրաժեշտ է նախատեսել բեռնատար վերելակ ցուցանմուշների տեղափոխման համար: Ցուցադրանքի բազմահարկ տեղակայման դեպքում գերադասելի է վերից վար երթուղու կազմակերպում: Դահլիճների ներսում ցուցադրությունը կազմակերպվում է ձախից աջ սկզբունքով:

Ցուցադրական դահլիճներում ցանկալի է ապահովել  $18-20^{\circ}\text{C}$  ջերմություն և  $55-60\%$  օդի խոնավություն: Ջերմախոնավային ռեժիմի վերահսկման և կարգավորման նպատակով դահլիճները համալրվում են համապատասխան սարքավորումներով:

Այցելության երթուղին կարող է լինել պարտադրված, ազատ կամ համակցված: Բոլոր բաժինների պարտադիր դիտմամբ և որոշակի հերթականությամբ պարտադրված գրաֆիկը բնութագրական է դիդակտիկ ցուցադրանքների և ավելի հազվադեպ՝ գեղարվեստական թանգարանների համար:

### ❖ Ֆոնդադարաններ

Բոլոր թանգարանային ցուցանմուշները ենթակա են խիստ փաստաթղթային ցացակագրման և գիտական նկարագրության՝ դրանց պահմապնման, պատմական, գիտական և գեղարվեստական նշանակության բացահայտման նպատակով, դրանք

թանգարանի ցուցադրանքում և ցուցահանդեսներին, գիտալուսավորչական ուսումնասիրություններում հնարավորինս լավ ներկայացնելու և այլ գիտական նպատակներով: Թանգարանային ֆոնդերին անհրաժեշտ են հատուկ կահավորված պահոցներ՝ փոխկապակցված ցուցարանների հետ [46, էջ 10]:

Թանգարանային ֆոնդերի կենտրոնացումը անհրաժեշտ նախապայմաններ է ստեղծում առանձին կառուցները և շենքերը թանգարանային նպատակով օգտագործման համար: Այս դեպքում ակնհայտ են հետևյալ առավելությունները՝ ֆոնդադարանների, արհեստանոցների, լաբորատորիաների տեղակայման տեխնոլոգիական մեկտեղումը, որոնք սպասարկում են մասնաճյուղերի ցանցը, մասնաճյուղի ցուցադրությունը. ցուցանմուշների քանակը, տեսակը, պահպանման և ցուցադրման պայմաններին հետևելն ընտրվում են օգտագործվող հուշարձանի իրական մակերեսներին, տարածահատակագծային լուծումներին համապատասխան:

#### ❖ Ինժեներա-տեխնիկական սարքավորումները

Թանգարանային շենքերի նախագծման բարդությունները կապված են նաև թանգարանային սրահներում համապատասխան միկրոկլիմայական պայմանների ապահովման հետ: Թանգարանային շենքերին անհրաժեշտ է արդիական տեխնիկական հագեցվածություն՝

- կենտրոնական ջեռուցում,
- տաք և սառ ջրամատակարարում,
- օդորակում,
- օպտիմալ ջերմախոնավային ռեժիմ ապահովող համակարգ,
- էլ. լուսավորություն՝ փակ լարանցմամբ,
- կոյուղի,
- պահպանության և հակահրդեհային ազդանշանային համակարգ,
- շանթարգել և այլն [46, էջ 10]:

Ցուցանմուշների պահպանության երկարակեցությունն ապահովող ամենահուսալի մեթոդը թանգարանների ցուցարահներում և ֆոնդադարաններում օդափոխության սրաքավորումների տեղադրումն է, որոնք կապահովեն ջերմա-խոնավային բարենպաստ՝  $+18^{\circ}\text{C}$  -  $+22^{\circ}\text{C}$  ջերմաստիճան, և հարաբերական խոնավության  $55 \pm 5\%$ : Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գոյություն չունի միկրոկլիմայի պարամետրերի միասնական կոմբինացիա, որը կրավարարի բոլոր օբյեկտների պահանջներին: Շենքերի և հավաքածուների մեծամասնությանը համապատասխանում են պայմանների բավական լայն և կիրառելի համակարգեր: Այն ցուցանմուշները, որոնք կարիք ունեն ավելի խիստ պարամետրերի, կարող են պահպանվել իներտ գազով լցված հատուկ, ապակեպատ, հերմետիկ ցուցադարաններում կամ այլ՝ մշտապես վերահսկվող ջերմախոնավային պայմաններում, այն  $45\% \pm 8\%$  հարաբերական խոնավություն և  $21^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}$  ջերմաստիճանային մակարդակ:

Ընդհանուր լուսավորվածության մակարդակը չպետք է ավելորդ կոնտրաստներ ստեղծի: Լուսավորության կտրուկ փոփոխության դեպքում այցելուների ադապտացման համար պետք է նախատեսել անցումային գոտի: Դիտման դաշտի կենտրոնական հատվածում լուսավորության կոնտրաստները չպետք է գերազանցեն 1:3, իսկ կենտրոնի և ծայրամասերի միջև 1:10 հարաբերակցությունը:

Հոգեֆիզիոլոգիական նկատառումներից նախընտրելի է բնական լուսավորությունը, եթե դա համապատասխանում է պահպանության պահանջներին: Մեծ մասամբ պահանջվում է խուսափել արևի լուսի ուղիղ ներթափանցումից:

Արհեստական լուսավորության առավելություններն են.

- Եղանակային պայմաններից անկախ լինելը,
- ստեղծել և ստանալ լուսավորության որակյալ և քանակական բնութագրիչներ՝ կախված ցուցադրության պահանջներից,

- լուսի սպեկտրալ կազմի և ինտենսիվության կարգավորման հնարավորություն,
- ճկուն հատակագծի ապահովում,

Արհեստական լուսավորման սարքը պետք է ապահովի.

- ցուցանմուշի ամբողջական տեսանելիությունը,
- հիմնական ցուցանմուշների առանձնակի դասավորման հնարավորությունը:

Ցուցարահների լուսավորության նախագծման ժամանակ պետք է հաշվի առնել ցուցանմուշների լուսազգայնությունը: Նկարների լուսավորումն այժմ իրականացվում է լեդ լամպերով՝ 4000 Կ :

Նկատի ունենալով գորգերի լուսի հանդեպ գերզգայունությունը, ցանկալի է բացառել դրանց բնական լուսով լուսավորումը: Պատերից կախված ցուցանմուշների համար խորհուրդ է տրվում 30-40<sup>0</sup> անկյամբ լուսավորության ապահովում:

Հաշվի առնելով փորագրանկարների, գրաֆիկ աշխատանքների գերզգայունությունը ճառագայթման, ջերմության և խոնավության նկատմամբ, ցերեկային լուսը պետք իսպառ բացառվի: Ցուցանմուշները կարող են ներկայացվել դրսից կամ ներսից լուսավորվող ցուցադարաններում: Ցուցարահներում լուսավորության մակարդակը կանխորոշվում է ցուցանմուշների լուսադիմացկունությանը համապատասխան:

Նոր թանգարանային շենք նախագծելիս հատուկ ուշադրություն է դարձվում հակահրդեհային միջոցներին: Ցուցարահներում և ֆոնդադարաններում տեղադրվում են հատուկ հակահրդեհային ածխաթթվային բալոններ, իրականացվում է փակ էլեկտրալարանցում:

Կարևոր են նաև էվակուացիայի հարցերը: Ցուցարահները և սրահները, որտեղ անցկացվում են դասախոսություններ, կինոդիտումներ, հանդիպումներ, պետք է ունենան ամենաքիչը 2 էվակուացիոն ելք: Ցուցարահներում սարքավորումների միմյանցից բաժանված լինելու սահմանը առնվազն 2 մ է: Ֆոնդադարաններն

առանձնացված են լինելու թանգարանի այլ սենյակներից հրակայունության ոչ պակաս քան սահմանային 2,5 ժամ աստիճանով։ Դարանների ներսի պատերը կարող են ունենալ 2 ժ հրակայունության աստիճան։ Պահոցի մուտքի լայնությունը պետք է լինի ոչ պակաս 2 մ, իսկ գլխավոր մուտքերինը՝ 2, 5 մ։

Առանձնացված թանգարանային շենքը պետք է ունենաշանթարգել։ Անհրաժեշտ է նկատի առնել նաև աղբահանության խնդիրը։

### **1.3.8. Թանգարանների նախագծումը.**

Ժամանակակից թանգարանը բարդ, բազմաֆունկցիոնալ օրգանիզմ է։ Եվ դրա նախագծումն անհրաժեշտ է կազմակերպել հաշվի առնելով հետևյալ գործոնները՝

- Գործառնական կառուցվածքը, ցուցադրության թեմատիկ և գիտական ապահովումը /ներկայացնում է թանգարանի աշխատակազմը/։
- Տարածահատակագծային և ֆունկցիոնալ-տեխնիկական լուծումներն առաջարկում է **ճարտարապետը**։
- Ցուցադրության կերպարային իրականացումն ապահովում են **ձևավորող նկարիչները**։ Երբեմն այս վերջի երկու կետերն իրականացնում է ճարտարապետը։

Նախագծման **առաջին փուլում** ճարտարապետը հաշվի է առնում թանգարանի ճարտարապետական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, շինարարության սոցիալ-տնտեսական պայմանները, իրականացնում է հավաքածուի ամբողջական, կոմպլեքսային ուսումնասիրություն՝ ճշտելու համալրման դինամիկան, պոտենցիալ այցելուների կազմն ու քանակը, կոնկրետ թանգարանի գործունեության առանձնահատկությունները։

**Երկրորդ փուլում** կազմվում է նախագծի առաջարանքը, իրականացվում է ճարտարապետական նախագիծը, կոնստրուկտորական և տեխնոլոգիական բաժիններով՝ ներառյալ նախահաշիվներն ու ցուցադրության ձևավորման հիմնական լուծումը։

**Երրորդ փուլում** մշակվում են թեմատիկ-էքսպոզիցիոն հատակագծերը, ճարտարապետաշինարարական նախագծի աշխատանքային փաստաթղթերը և ցուցադրության ձևավորման էսքիզային նախագիծը:

**Չորրորդ փուլում** իրականացվում է փաստացի նախագիծը:

❖ **Ապագա թանգարանի ճարտարապետական հորինվածքը.**

Թանգարանի ծավալահատակագծային հորինվածքի ընտրությունն առաջին հերթին կախված է հողատարածքի բնույթից և չափսերից, ինչպես նաև հավաքածուի տեսակից և քանակից: Ճարտարապետն ի զորու է ստեղծել հետաքրքիր ձևերով և թանգարանի բազմատեսակ ֆունկցիաներին համապատասխան կառույց: Այժմ գոյություն չունի ժամանակակից թանգարանի միասնական ճարտարապետական տիպ: Փոված հորինվածքները չեն բացառում համատեղումը հորիզոնական, ուղղահայաց ծավալների հետ: Սրահների գոտևորման համար կարևոր է մուտքի և ելքի տեղադրությունը, այցելուների երթուղիները, թանգարանի բաժիններում աշխատանքի բնույթը: Անհրաժեշտ է նախատեսել հետագա փոփոխությունները և դրանց իրականացման հնարավորությունները: Հնարավոր տարբերակներից է տարածքների գծային ընդլայնումը՝ թանգարանի ֆունկցիոնալ աճին համապատասխան:

❖ **Մուտքերի դասավորությունը.**

Սովորաբար թանգարաններում նախատեսում են մեկ գլխավոր և մեկ ծառայողական մուտք, չնայած գործնականում հնարավոր են այս սխեմայի փոփոխություններ: Խոշոր թանգարանները կարող են ունենալ տարբեր մուտքեր, որոնք հնարավորություն են ստեղծում կազմակերպել միաժամանակ մի քանի ցուցադրություններև իրականացնել անկախ գործունեություն: Թանգարանների մեծամասնությունը այցելությունների համար կարիք ունի միայն մեկ գլխավոր մուտքի

/պահուատային և վթարային մուտքերը պարտադիր են և պետք է շահագործվեն ըստ նշանակության/:

**Ծառայողական մուտքը,** որով իրականացվում է ցուցանմուշների տեղափոխությունը և աշխատակիցների ելումուտը, նախագծվում է ծառայողական սենյակների հատվածում: Ֆունկցիոնալ կապը ծառայողական սենյակների հետ կարող է լինել հորիզոնական կամ ուղղահայաց:

Թանգարանի գլխավոր սրահը հատկացվում է ցուցադրությանը: Շատ շենքերում այն տեղակայված է մայթի մակարդակին կամ քիչ ավելի բարձր: Քիչ բարձր տեղադրված հիմնական սրահը ստեղծում է շահագործման հետ կապված որոշակի դժվարություններ: Սրահի ընտրության դեպքում հաշվի են առնվում ցուցանմուշների տեղափոխման հետ կապված հարցերը, ցուցադրության լուսավորությանն առաջադրվող պահանջները, այցելուների շարժը:

1000 մ<sup>2</sup> ցուցադրական մակերեսով թանգարաններում սենյակները հիմնականում տեղակայվում են մեկ հորիզոնական մակարդակում: Ծավալատարածական հորինվածքի բնորոշ ձև է օժանդակ կառույցների միավորումը: Նախարարությունը տեղակայվում են հանդերձարանը, կրպակը, դասախոսական դահլիճը, պահոցները, վարչական սենյակներն ու գրադարանը: Սենյակների ֆունկցիոնալ բաժանումը երկու խմբի, իրականացվում է ներքին բակի նախատեսմամբ՝ բաց երկնքի տակ ցուցադրություններ կազմակերպելու նպատակով: Բոլոր սենյակները ստանում են բնական լուսավորություն: Բակի շուրջ օղակածն ցուցադրությունն ապահովում է շարժման ստույգ գրաֆիկ՝ դեպի մուտք վերադարձով. այդպիսին է Համբուրգում Է. Բառլախի թանգարանը: Այն դեպքերում, երբ առաջին հարկի մակերեսը բավարար չէ ցուցադրության համար, հատկացվում է երկրորդ հարկը: Երկրորդ հարկում կարող է տեղակայվել նաև վարչական սենյակների մի մասը: Վարչական սենյակները պահոցային սենյակների հետ միասին հաճախ ձևավորում են առանձին ուղղահայաց

թլուկ: Սովորաբար երկրորդ հարկում են գտնվում գրադարանը, գիտաշխատողների սենյակները և խմբակների համար նախատեսված սրահները:

Մեկ սրահում ցուցադրության, գրադարանի համատեղում շատ հարիր է ոչ մեծ թանգարաններին՝ գիտական, կրթական, ուսումնական առումներով: Սովորաբար հիմնական ցուցադրական դահլիճի շուրջը պարագծով ձևավորվում է անտրեսով, որի աստիճանների երկայնքով տեղակայվում են գրապահարանները՝ համալրված ցուցադրությանը համապատասխան գիտական և տեղեկատվական ինֆորմացիայով:

❖ **Թանգարանային ցուցադրությունը.**

Թանգարանի տարածության կազմակերպման խնդիրը հիմնականում վերաբերում է ցուցադրությանն ու ցուցահանդեսներին: Այստեղեն գեղարվեստորեն և տարածականորեն ձևավորվում թանգարանի մասին պատկերացումները: Այցելով և ցուցադրության միջև արդյունավետ «կապի» ձևավորման դերը պատկանում է ճարտարապետին: Ցուցադրանքի տեղեկատվությունը շատ ավելին է, քան յուրաքանչյուր ցուցանմուշից այցելուի ստացած ինֆորմացիան և հենց ինքը՝ թանգարանային առարկան գրագետ ներկայացվելու շնորհիվ ստանում է նոր որակներ: Ճարտարապետությունն ի զորու է և կարող է կանխարգելել թանգարանի «ծերացումը» և կանխատեսել սպասվելիք փոփոխությունները:

Թանգարանների հորինվածքային ձևավորման ուսումնասիրության արդյունքում առանձնացվում են հետևյալ սկզբունքային մոտեցումները.

**1. Միասնական տարածություն.** Ընկալվում է միանգամից, ինչը թույլ է տալիս հեշտությամբ կողմնորոշվել

**2. Դահլիճների և անցումների բարդ համակարգի աստիճանական ընկալում.** Այս հորինվածքային տեսակում ակնհայտ է տարածության զարգացմանան ընդհատությունը և փոփոխությունը:

**3. Միմյանց մեջ ներթափանցող տարածություններ,** որոնք ձուլվում են բնական

միջավայրի հետ: Տարածությունների ազատ անցումները ֆունկցիոնալ առումով բացատրվում են. օրինակ՝ գեղարվեստական թանգարաններում ոչ մեծ և ոչ բարձր սրահները նախատեսվում են գրաֆիկայի, ավելի բարձրեղք՝ գեղանկար, իսկ 5մ-ից բարձրները՝ քանդակային ստեղծագործությունների համար: Մակերեսների և բարձրությունների բաժանումները ստեղծում են ասնպասելի տարածական էֆեկտներ՝ պահպանելով տարածության ամբողջականությունը:

**4. Տարածական կենտրոն-սիմվոլ**՝ իր շուրջն է միավորում թեմատիկ - ցուցադրական բաժինների շղթան, ինչն օգնում է ցուցադրությունը ներկայացնել մեկ ամբողջության մեջ:

**5. Չարգացող կոմպոզիցիաների համակարգ.** Հնարավորություն է տալիս փոփոխություններ և լրացումներ անել՝ առանց խախտելու ընդհանուր համակարգը:

Թանգարանային միջավայրի ձևավորումն այցելուների և առարկայա-տարածական շրջապատի անընդմեջ փոխգործունեության, այցելուի և ցուցանմուշների երկխոսության արդյունք է: Այցելուն ինքն է ընտրում օբյեկտներն ու որոշում շփման տևողությունը [40, էջեր 180-181]: Ցուցադրության զգայական և իմաստային ընկալման հիմնական պայմանները ներառում են ներգործություն ունեցող երեք էական գործոններ:

**Առաջին խմբում** են արտաքին պայմանները՝ ցուցանմուշների տեղակայման համակարգը, դրանց լրացավորությունը, դիտողի դիրքը և այլն: **Երկրորդ խոմբը** կազմում են այցելուի ինտելեկտը ու ցուցադրության ընկալման հանդեպ նրա տրամադրվածությունը: Գործոնների **Երրորդ խոմբը** կապվում է ընկալման վերլուծության հետ:

Ճարտարապետական կերպարի տարածական հատկանիշներն անմիջականորեն կապված են ողջ թանգարանում երթուղու կազմակերպման հետ՝ ուղղորդված կամ կենտրոնացված՝ անհատական կամ խմբակային շփման համար, և որպեսզի

անրաժեշտ տեսանկյունով այցելուին հասցվի ցուցադրության նպատակը, տարածությունը կազմակերպվում է որոշակի ճարտարապետագեղարվեստական եղանակով (Հավ. 2.8):

Այցելուի հայացքը կանգ է առնում հիմնականում ամենավառ հարթությունների վրա: Եթե տարածությունը տեսողականորեն պարզ է կազմակերպված գույնի և եզրագծի առումով, ապա տեսողական փնտրտուքը դյուրին է. Ֆոկուսավորված ցուցանմուշն ավելի շուտ ու երկարատև իր վրա ուշադրություն կրների: Եվ հակառակը, ցուցադրական գոտու կոմպոզիցիայի ընդհանուր բարդության դեպքում, որն ընդգրկում է բազմաբնույթ ցուցանմուշներ, տեսողական փնտրտուքն ավելի բարդ կլինի, իսկ ժամանակը՝ հատկացված յուրաքանչյուր ցուցանմուշին՝ ավելի քիչ: Անչափ կարևոր է օբյեկտի հետ տեսողական կապը. չեզոք ֆոնի վրա դիտողի ուշադրությունը կենտրոնանում է ֆոկուսային օբյեկտի վրա<sup>7</sup> [18, էջ 9]: Այսպիսով, ցուցադրության ընկալումն ընթանում է երկու ուղղությամբ՝ օբյեկտային և ֆոնային, ընդ որում ֆոնային ընկալումը հանդիսանում է հիշելու հոգեբանական հիմքը: Դրա միջոցով է իրականանում հսկայական փաստացի նյութի յուրացումը: Մյուս կողմից, ֆոնային ընկալման օգնությամբ է հնարավոր և ռելաքսացիան:  
Հետազոտություններով պարզվել է, որ մարդու դիտողական շառավիղը 24 մ է:

Ենթադրվում է, որ հնարավոր է ծրագրավորել այցելուի հետաքրքրությունն այս կամ այն ցուցանմուշի նկատմամբ: Գոյների հարաբերակցությունը կառուցվում է գունային ներդաշնակության հիման վրա երեք համադրությունների հիման վրա:

**Կոնտրաստային՝** հիմնված իրար լրացնող գույների հակադրման վրա, օր՝ կարմիր ու կանաչա-երկնագույն, նարնջագույն և կապույտ, կանաչ և յասամանագույն:

**Նյուանսային՝** գունային շրջանի վրա իրար մոտիկ դասավորված գույների

<sup>7</sup>Անգլիացի գիտնական Կ. Վալենտայնը երկար տարիներ կորցրեց փորձնականորեն ապացուցելու համար, որ գեղեցիկով հիանալը ուղեկցվում է հաճույքի զգացողությամբ, և այդպիսի հաճույքը դիտարկվում է հիմնականում այնպիսի տարրեր դիտարկելիս, ինչպիսին են գույնը և գիծը[18]:

համադրություն, կամ իրենց բնութագրիչներով մոտ գոյների համադրություն, օր՝ կանաչ և կապտա-կանաչ, ձիթագույն և բաց կանաչ, շագանակագույն և փղոսկրագույն, գորշ և կարմիր:

**Գունային եռակցումներ՝** երեք գույների համադրություն, գունային շրջանի վրա իրար համազոր, օր՝ կարմիր, կապույտ և կանաչ, կամ՝ դեղին, երկնագույն և յասամանագույն/ [40, էջ 186]:

Տարբեր ցուցադրական բաժինների համար դահլիճները նախագծվում են հաշվի առնելով ներկայացվող ցուցանմուշների յուրահատկությունները՝ գրաֆիկական ստեղծագործությունները պահանջում են ցածր բարձրություն, կետային լուսավորում, քանդակը՝ բարձր դահլիճներ և վերևսից կողային լուսավորություն (Հավ. 2.8):  
Լուսավորության,              բարձրությունների,              փոխկապակցված              բաժինների հատակագծերի չափսերի և եզրագծերի կոնտրաստը բարենպաստ է ներգործում այցելուների ուշադրությունը գրավելու իմաստով: Որպեսզի տեղեկատվության բեռը լինի օպտիմալ, ճարտարապետական տարածությունը ստորաբաժանվում է Էլեմենտների, որոնցից յուրաքանչյուրը հաշվարկված է որոշակի իրադարձությունների դիապազոնի համար: Ընկալման գործընթացը կարգավորող էական, օբյեկտիվ հատկություններ են հանդիսանում ցուցանմուշի կամ նրա հատվածի ծավալը /հարթությունը/, չափսերը՝ /փոքր, մեծ/ և դիտման բնույթը /ուղղորդված, շրջանաձն/ (Հավ. 2.8): Այցելուները լինում են երկու բնույթի: Առաջինները՝ կազմակերպված այցելուները, էքսկուրսանտներն են, որոնց համար դիտման հերթականությունը և ցուցանմուշների ընտրությունը որոշում է էքսկուրսավարը: Երկրորդ տեսակն անհատ այցելուներն են՝ տարաբնույթ նպատակներով:

Թանգարանների ցուցադրությունները սովորաբար ներառում են հարթ և ծավալային ցուցանմուշներ՝ գեղարվեստական, իյուստրատիվ և փաստաթղթային բովանդակությամբ: Հարթ ցուցանուշներ են նկարները, նաև վերատպությունները,

լուսանկարները, գծագրերը: Ծավալային ցուցանմուշներն են մոդելները, մակետները, քանդակը: Ընդունված է դիտման միջին ցուցանիշ համարել՝  $0,8 - 1,5$  ժամը, քանի որ դիտման որոշակի ժամանակահատվածում այցելուի ուշադրությունն ու հետաքրքրությունը նվազում է /թուլանում է/:

Այցելուի ուշադրության ակտիվացման համար կիրառվում են տարբեր գեղարվեստական միջոցներ և ձևեր: Նրանց կողմնորոշման համար՝ ձայնային, տեսային, ցուցանմուշների տեղադրությամբ, տեղեկատվության արդյունավետության բարձրացման համար՝ տարբեր առողիո – վիդեո միջոցների կիրառում:

Հետևաբար՝ ցուցադրական տարածքը կարելի է համարել որպես զգայական, լսողական և տեսողական հաղորդակցության վայր: Հայտնի է, որ այցելուն մտապահում է իր տեսածի 20% -ը, լսածի 20%-ը, բայց 50%-ն այն ամենի, ինչ լսել և տեսել է միաժամանակ: Եվ այժմ մեծ տարածում է գտնում տեսողական և լսողական ուղեկցող տեղակատվությունը՝ օպտիկական և ակուստիկ: Դրանցից են ոչ միայն գրառումները, բացատրությունները, դիորամաները, այլև՝ ֆիլմերը, նվագարկիչները, լուսային սարքավորումները: Եվ լիարժեք կարելի է խոսել թանգարանային նյութի մատուցման նոր՝ առողիովիզուալ արվեստի մասին:

Ժամանակակից թանգարանների նախագծման ժամանակ բացառիկ կարևոր է ցուցադրության կազմակերպչի և ճարտարապետի սերտ կապը: Ճարտարապետին չի բավարարում սեղմ առաջադրանքը, որտեղ ոեմիսորական սցենարի փոխարեն միայն անհրաժեշտ ցուցադրական մակերեսների թվային տվյալներն են: Ցուցանմուշների համար առավելագույնս շահեկան պայմաններ ստեղծելու համար, ճարտարապետը թանգարանային աշխատակցի հետ միասին պարտավոր է քննարկել բոլոր մանրութները: Նրանց երկխոսությունը սկսվում է թանգարանի գաղափարի մասին առաջին ծանոթացումից և շարունակվում է մինչև վերջին ցուցանմուշի տեղակայումը:

Նրանք պետք է նախապես ուսումնասիրեն, թե ինչ քանակի բնօրինակ ստեղծագործություններ և ինչ ծավալով նյութ կարող է ընկալել դիտողը:


Ճարտարապետը պետք է ինքը պատկերացնի, ինչպես է այցելուն դիտում ցուցադրությունը և ո՞ր ցուցանմուշներն են գրավում նրա ուշադրությունը: Նաև դրանից է կախված թանգարանի գործունեության արդյունավետությունը:

Այցելուների շարժման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց նախևառաջ հետաքրքրում է ողջ դահլիճի նշանակությունն ամբողջությամբ, այլ ոչ թե որևէ առանձին ցուցանմուշ: Առանձնահատուկ ուշադրություն գրավում են միայն այցելուի ճանապարհին տեղադրված անսովոր ցուցանմուշներն ու առարկաները:

Այցելուների մեծամասնության շարժը դադարում է չափսերով և առանձնահատուկ ձևավորման միջոցներով առանձնացող օբյեկտների մոտ: Այսպիսի ցուցանմուշները ծառայում են որպես հիմնական կողմնորոշչիներ և կանխորոշում են դահլիճում շարժման գրաֆիկը: Սովորաբար այցելուներն ընտրում են մուտքից ելք ամենակարճ ուղին՝ իրենց հետաքրքրած ցուցանմուշների մոտ կանգառներով: Այցելուների մեծամասնությունը նախընտրում է դիտել ցուցադրությունը ձախից աջ: «Աջակողմյան շարժումը» ճիշտ է այն դեպքերում, երբ ցուցադրված առարկաները հավասարազոր հետաքրքրություն են ներկայացնում և դահլիճի հատակագծումը թույլ չի տալիս միաժամանակ դիտել ցուցադրության հակադիր կողմերը:

### 1.3.9. Թանգարանային շենքերի հատակագծման տարրերակներ.

**Հատակագծման առաջին տարրերակ.** (Սխեմա 5)` առաջին պլանում  
**Հատակագծման առաջին տարրերակ.** (Սխեմա 5)` առաջին պլանում դասավորվում են առավել արժեքավոր և հետաքրքիր ցուցանմուշները սահմանափակ ժամանակ




ունեցող այցելուի համար: Երկրորդ պլանում ինքնակրթման համար նախատեսված ցուցանմուշներն են: Հետո

առավել մանրազնին ուսումնասիրելու համար նախատեսված իրերն են: Այս պլանները պահանջում են ցուցադրության տարբեր ճարտարապետատարածական կառուցում, լուսավորություն, գունային լուծումներ ու տեղադրություն: Լայն տարածում ունի ամենախոշոր ցուցանմուշների ազատ տեղակայումը հատուկ նախագծված պատվանդանների վրա, առավել հետաքրքիրները, բայց ոչ առավել արժեքավորները՝ պատային ցուցափեղկերում, երրորդ պլանի նմուշները՝ պատերին: Ազատ տեղակայումը երաշխավորում է լավ տեսադաշտ:

#### **Սխեմա 5. Հատակագծման առաջին տարբերակ.**

Այսպիսի ցուցադրության համար անհրաժեշտ էսյուներով չծանրաբեռնված մեծ տարածություն, ինչը նպաստում է սրահի ամբողջական ընկալմանը: **Հատակագծման երկրորդ տարբերակ՝** տարբեր աստիճաններով դետալացված ցուցադրությունները տեղակայվում են տարբեր դահլիճներում (Սխեմա 6):

Առանձին բաժնով հետաքրքրվողները հարակից դահլիճներում հեշտությամբ կարող են ծանոթանալ լրացուցիչ նյութերի հետ: Այս դեպքում հատակագծումն իրականացվում է մեծ ցուցադրական տարածքի և առանձին փոքր դահլիճների համակցմամբ:




**Սխեմա 6. Հատակագծման երկրորդ**

#### **Հատակագծման երրորդ տարբերակ՝**

#### **տարբերակ**

անմիջականորեն ցուցադրության սրահին մոտտեղադրվում է բաց ֆոնդադարանը, խորհրդատունների սենյակները, գրադարանի տեղեկատուն՝ ֆոնդերի բաժիններին համապատասխան (Սխեմա 7):



Սխեմա 7.  
Հատակագծման երրորդ տարրերակ.

Գործունեության բոլոր տեսակները կենտրոնացվում են շենքի մի մասում, ոյուրին դարձնելով այցելուների համար տարրեր մակարդակներով նյութերին ծանոթանալը: Լայն տարածված ճարտարապետագեղարվեստական սկզբունքը կայանում է նրանում, որպեսզի ցուցադրական հագեցվածությունն այցելուի համար լինի անտեսանելի և առավելագույն հետաքրքրություն առաջացնի ցուցանմուշների հանդեպ [40, Էջ 201]:

#### 1.4. Թանգարանային շենքերի արդիականացման հեռանկարները

Ներկայումս մշակութային ժառանգության հուշարձանների պահպանմանն ուղղվում են բազմաթիվ միջոցառումներ (ամրակայում, թանգարանի հիմնադրում, վերականգնում և այլն): Հաճախ դրանք կարող են նաև համատեղվել կամ համադրվել թանգարանային շինությունների վերակառուցման, մասնակի ճարտարապետական վերակազմավորման հետ, որը ներառում է վերահատակագծում, սրահների բարձրությունների ավելացում, կոնստրուկցիաների ամրացում, մասնակի վերափոփոխություն կամ փոփոխություն, նաև կցակառուցների, հարկերի ավելացում, շենքի ճակատների փոփոխություն [9, Էջ 88]:

Թանգարանային շենքերի արդիականացման փայլուն օրինակ է Ամստերդամի Ռեյխսմուզեում թանգարանի վերակառուցման նախագիծը [79] Philips թևի համալիր վերանորոգմամբ (ճարտ.՝ Ա.Կրուզ, Ա. Օրտիս, 2013, Հավ. 2.9):

Նորացված Philips մասնաշենքը նախատեսված է ինչպես թանգարանի ֆոնդերից,

այնպես էլ միջազգային հավաքածուներից ձևավորված խոշոր ժամանակավոր ցուցադրությունների համար: Ճարտարապետները վերափոխել են շենքի մուտքը, կահավորել են ցուցասարհները, ավելացրել նոր գործառույթներ: Ցուցասարհների մի մասում պահպանվել են նախկին, մինչ վերանորոգումը ներառված ցուցանմուշները: Նախագծի հեղինակների խոսքով, գլխավոր մասնաշենքում հիմնական տարածական գաղափարը կազմվում է երկու ներքին բակերով, որոնց շուրջն էլ ձևավորվել են ցուցասարհները: Հանդիսավոր մուտքի առկայությունը, լուսավոր ինտերյերը նախագծի գլխավոր գրավականներն էին: Ինչպես գլխավոր, այնպես էլ Philips մասնաշենքում գտնված է նորի և ինի ներդաշնակ միավորումը: Ճարտարապետների նորարարությունները քողարկված չեն, դրանք ընդգծված արդիական են, միևնույն ժամանակ, բացարձակապես աչքի չեն ընկնում և տարրալուծվում են միջավայրում: Շենքի 2 ժամանակային շերտերը կարելի է դիտարկել ինչպես միասին, այնպես էլ առանձին: Մի կողմից այցելուն կտեսնի XXI դարի հետքեր Cascogne Azul պորտուգալական կրաքարի, ջահերի, ակուատիկական պանելների, պայծառ սպիտակ պատերի, ամուր, էլեգանտ, մոխրագույն բազրիքների, նոր շքամուտքերի և դռների տեսքով, մյուս կողմից, մասնաշենքի ներքին բակի ողջ հմայքը կառուցված է Բրեդա դյուակի ճակատի շուրջ, որի նրբագեղությունը հաջող ընդգծվում է մինիմալիստական շրջանակմամբ (Հավ. 2.9):

Այս դյուակի ճակատը հանդիսանում է Ռեյխսմուգետումի ամենամասշտաբային ցուցանմուշը՝ 20մ երկարությամբ և 3,5 մ բարձրությամբ: Այն հյուսիսային Եվրոպայի Վերածննդի ոճի ամենավաղ շինութուններից է, XVI դարի երկրորդ քառորդի կառուց: XIX դարում վերակառուցման ընթացում ճակատը ապամոնտաժվել և տեղափոխվել է Բրեդայից Ամստերդամ, որտեղ էլ դարձել է թանգարանի, այժմ՝ Philips մասնաշենքի, արտաքին պատի մաս: Մասնաշենքի ընդլայնման արդյունքում Բրեդա դյուակի ճակատը հայտնվեց ներքին բակում:

Մեր ժամանակներում, ի պատասխան հանրության կողմից ներկայացվող պահանջների և «Փոփոխվող թանգարան փոփոխվող միջավայրում» կարգախոսին, թանգարանները, պահպանելով ավանդական գործառույթները, զարգանում են, փոխակերպում և ընդարձակում իրենց գործառնական կառուցվածքը՝ այցելուներին ապահովելով բազմատեսակ գործունեությամբ և ծառայություններով։ Եվ անկախ թանգարանների թեմատիկ ուղղվածությունից, այսօր խիստ արդիական է մասնագիտացված հուշանվերային խանութի, լսարանների, կրթասենյակների, սրճարանների, նույնիսկ նշանակալի ֆիրմային ռեստորանների առկայությունը թանգարանային կառուցիչ ներսում։ Հուշանվերների խանութներն այսօր ապահովում են թանգարանների ռեալ եկամուտը և նրանք, որոնք ավելի մատչելի են հենց փողոցից, ապահովում են առավել հուշանվերային վաճառք, քան հավաքածուներին ավելի մոտիկ տեղադրվածները։ Թանգարանային տարածքներն օգտագործվում են բազմաբնույթ միջացառումների համար թանգարանի ցերեկային աշխատանքից հետո։ Դրանք կարող են լինել կորպորատիվ երեկություններ, դասախոսություններ, քաղաքական գործառույթներ, հարսանիքներ և այլն։ Ընդհանուր ճարտարապետական կազմակերպման պահանջ է դառնում մեծ մակերեսներով սրահների առկայությունը նոր կառուցվող կամ հիմնադրվող թանգարանների համար[50]։ Թանգարանային կառուցներին առաջադրվող մյուս արդիական ճարտարապետական պահանջներից են.

- **Սրահների ճկուն փոխակերպման հնարավորությունը.**

Իատակագծային ճկուն լուծումները՝ կրող պատերի նվազագույն քանակությամբ մոդուլային տարրերը/թանգարանային սարքավորումներ, կահոյք, շարժական միջնորմներ, միջավայրի միջակա մակարդակներ և այլն/, ապահովում են տարածության մոդելավորման և թանգարանի հիմնական գործառույթների իրականացման լավագույն պայմաններ։ Արդյունքում՝ թանգարանի ներքին

միջավայրը ներկայանում է իբրև «կենդանի» տեղակատվական տարածություն:

Ճկուն հատակագծման պարագայում, ժամանակակից թանգարանային շենքերի ինչպես հիմնական, այնպես էլ հավելյալ գործառնական գոտիները ոչ միշտ է, որ ունեն հստակ սահմաններ: Ակնառու է տարբեր գոտիների փոխադարձ ներթափանցման, սերտաճման և, որպես արդյունք, նորերի կազմավորման միտումը: Հավելյալ գործառույթների տարածքները հաճախ տարբեր գործառնական խմբերի միջև կատարում են թե՛ հիմնական և օժանդակ հորինվածքային կենտրոնների, և թե՛ անցումային գոտիների դեր:

- **Թանգարանի արտաքին և միջավայրային գրավիչ ձևավորումը.**

Շենքերի ճարտարապետագեղարվեստական լուծումների մշակման ընթացում էական է թանգարանի, որպես բազմագործառական կենտրոնի կերպարի ստեղծումը, որն անքակտելիորեն կապված է շենքի ներքին միջավայրի և գործառնական կառուցվածքի հետ. տիպային շենքում՝ պարփակված տարածքների պարագայում անհրաժեշտ է ստեղծել ժամանակակից պահանջները բավարարող միջավայր՝ կիրառելով արդի ճարտարապետական հորինվածքներ, շինարարական թերևն ու դյուրաշարժ կոնստրուկցիաներ:

Ժամանակակից թանգարանային շենքներն առանձնանում են ոճական և ծավալատարածական համարձակ ու արտասովոր լուծումներով՝ ուղիղ, թեք հարթությունների համադրությամբ և ֆակտուրաների հակադրությամբ, ապակեպատ տանիքների թեքությամբ և այլն: Ավանդական չորս ճակատային համակարգը զիջում է իր տեղը Էլեկտրոնային և բարձր տեխնոլոգիաների դարաշրջանի քանդակաերկրաչափական նորահայտ ծավալներին:

- **Տեխնոլոգիական հնարավորությունները և դիզայնը.**

Թանգարանային շենքների ժամանակակից դիզայնը, դրանից բխող պայմանների ստեղծումը թանգարաններում էլեկտրոնային ԶԼՄ-ների, նորագույն տեխնոլոգիաների

ու համացանցի հետ համադրությամբ, դառնում է շինության գոյատևման վճռորոշ և կարևորագույն նախապայման: Թանգարանն ինքնին բարդ օբյեկտ է դիզայնի իրականացման համար: Թանգարանային դիզայնի հիմքում պատկառելի և գեղեցիկ միջավայր ստեղծելուց զատ, նախ ընկած է գործառնականությունը: Այս կապակցությամբ միևնույն թանգարանում չպետք է լինեն միօրինակ ձևավորված սրահներ: Պետք է առանձնացնել տարրեր գործառնական գոտիները՝ լուսավորության աղբյուրների, տարատեսակ կահույքի, գունային լուծումների կիրառմամբ:

Թանգարանային դիզայնը բազմակողմանի գործունեություն է հասարակության աչքում թանգարանի վարկանիշի՝ հեղինակության բարձրացման և թանգարանների գեղագիտական ինքնարտահայտման համար:

Թանգարանների արդիականացմանն ուղղված լուծումների մշակման համար հատկանշական է թանգարանի տեղադրությունը, հասարակական տրանսպորտի և ավտոկայանատեղիների հասանելիությունը, հետիոտն և երթևեկելի փողոցների և կանաչապատ տարածքների կապը, թանգարանի տարածքում միջոցառումներ անցկացնելու հաճախականության տվյալների համակարգումը:

Ընդհանրապես թանգարանների արդիականացումը թելադրվում է .

- ցուցանմուշների քանակի ավելացմամբ
- նոր հավաքածուների ձևավորմամբ
- ցուցադրության թեմատիկ կամ գեղարվեստական վերակառուցմամբ
- տեխնոլոգիական նորամուծություններով
- այցելությունների աճով

XXI դարում առաջ եկան թանգարանների զարգացման ևս մի քանի դրույթ՝ պայմանավորված թանգարանների կրթադաստիարակչական դերի աճի, թանգարան այցելությունը մշակութային ժամանցի, թանգարանները մշակութային հանգստի կենտրոնների վերածելու սկզբունքով: Ժամանակակից թանգարանը ICOM-ի

ստրատեգիական ծրագրերին համապատասխան վարում է նաև կրթադաստիարակչական գործունեություն նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ [82]: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, տարեցտարի ավելանում է թանգարաններ այցելությունների քանակը: Թանգարանների զարգացմանն ուղղված ներդրումները նաև լավագույն միջոցն են զարգացնելու և որակապես բարելավելու Մշակութային տուրիզմը [83]: Այցելուի վրա անմիջականորեն ազդում է ճարտարապետական կառույցը, էքստերյերը, հարակից տարածքը, որոնք ստեղծում են ընկալման նոր չափորոշիչներ՝ մարդուն ընկդմելով մշակույթի աշխարհը: Այսինքն՝ մարդու և ճարտարապետության փոխազդեցությունը սկսվում է շատ ավելի վաղ, քան այցելուն հայտնվում է թանգարանային կառույցի ներսում: Այդպիսով ճարտարապետական արվեստը դառնում է համամշակութային կոմունիկացիայի գործիք [11, էջ 63]: Թանգարաններում գիտական և կրթական գործունեությունը կարգավորվում է այցելուների ցուցահանդեսներին և ցուցադրությանը ինտերակտիվ մասնակցության գրագետ կազմակերպման միջոցով:

Թանգարանների վերափոխման նորագույն եղանակներն ուղղված են ներգրելու մարդու ողջ զգայական համակարգի վրա՝ տեսողության, լսողության, հպազգայության, հոտի, անգամ՝ համի և տարածությունում կողմորոշվելու ունակության վրա: Միևնույն ժամանակ ցուցանմուշներն ենթարկվում են թվային՝ ֆիքսված շարժվող պատկերների, հնչյունային և ձայնային, 3D վերափոխումների: Այդ ձևափոխումները web գործիքների միջոցով կարող են իրականացվել նաև այցելուի կողմից՝ հնարավորինս ապահովելու բազմակարծիք, բազմատեսակ, բազմազգայական և ինտերակտիվ ընկալում: Այսինքն, թանգարները համատեղում են իմացության փոխանցումը գեղագիտական և զգայական դաստիարակառության հետ և մարդու մեջ առաջացնում սովորելու, ստեղծագործելու մղում և ցանկություն [45, էջ 27]:

Ժամանակակից թանգարանային ճարտարապետության մեջ վերոնշյալ դրույթներն իրենց ճարտարապետական լուծումներն են գտնում «ոչ բնույթային/պրոֆիլային/» տարածքների ձևավորմամբ՝ գոյություն ունեցող թանգարանների համար առկատարածքների վերակառուցմամբ, նոր հիմնադրվողների համար՝ հատուկ նախագծումներով :

### **Եզրակացություն Առաջին գլուխ.**

1. Հաստատվել է, որ թանգարաններնը կարևոր նշանակություն ունեն մարդկության մշակութային ժառանգության պահպանման, ցուցադրության և հանրահոչակման, կրթական և գիտական զարգացման գործում: Սահմանվել են թանգարանային շենքերի ճարտարապետական կազմակերպման 6 հիմնական շրջաններ:

I. Նախաթանգարանային հավաքչական գործունեության փուլ, (Անտիկ շրջանից - XIV-XV դդ. սահմանագիծ):

II. «Փակ» տիպի թանգարանների առաջացում (XIV – XV դդ. - XVIII դ. վերջ):

III. Թանգարանային գործի՝ որպես ինքնուրույն մշակութային ոլորտի կազմավորում, թանգարանի աստիճանական վերափոխումը իբրև հասարակական- մշակութային կենտրոնի ( XVIII դ. վերջ - XIX դ. առաջին կես):

IV. Նոր տիպի և ուղղվածության թանգարանների առաջացում, թանգարանների ճարտարապետական կազմավորման շառավղային և սեգմենտած սխեմաների առաջացում, տեխնիկայի ներգրավում թանգարանային գործունեության ոլորտ, մշակութային արժեքների պահպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների դերի, միջազգային իրավունքի ձևավորման փուլ ( XX դ. առաջին կես):

V. Թանգարանային «պայմանի» շրջան. ձևավորվում են նոր

ճարտարապետահատակագծային սխեմաներ, կարևորվում են կառուցի

կոմպլեքսայնությունը, դինամիկությունը, ճկունությունը ( XX դ. Երկրորդ կես):

VI. Թանգարանների ճարտարապետական ձևավորման արդի փուլ «Թանգարան առանց պատերի», «Պատեր առանց թանգարանի», «Հոգևոր կենտրոններ-քաղաքային դրմինանտներ» ուղղությունների առաջացում ( XX դ. Վերջ - XXI դ. սկիզբ):

2. Փաստվել է, որ մերօրյա թանգարանային ճարտարապետության հիմնական առավելություններն են.

- ճկունությունը,
- բազմաֆունկցիոնալ բնույթը,
- թանգարանի՝ սոցմշակութային փոփոխություններին անմիջապես արձագանքելու ունակությունը՝ ներառելով նորարարականն ու ավանդականը,
- այցելուներին սպասարկելու կուլտուրան և բազմաթիվ ծառայությունների ռացիոնալ գործունեությունը, տարածական միջավայրի կազմակերպումը և մասնագիտացված լուսավորումը հավասարապես կարևոր են բոլոր տիպի թանգարաններում:

3. Առանձնացվել են թանգարանային շենքերի նախագծման և ճարտարապետական լուծումների 2 հիմնական և 1 միջանկյալ տարբերակ՝

- I. Ազատ հատակագծմամբ մեծ բաց տարածքներ ցուցադրությունների փոփոխման հնարավորություններով:
- II. Մեծ դահլիճների առկայություն՝ շարժական ցուցանմուշների տեղակայման համար:
- III. Թանգարանի ողջ տարածությունը բաժանվում է ցուցադրության պահանջներին համապատասխան, իսկ ոչ մեծ ցուցանմուշների համար օգտագործվում են փոքրիկ դահլիճներ:

4. Առանձնացվել են թանգարանային շենքերի հատակագծման 3 տարբերակ.

I. Տարբեր մակարդակներով մանրամասնեցված ցուցադրության տեղակայում  
մեկ սրահում:

II. Ցուցադրության տեղակայում սեղմ և ընդլայնված տեսքով  
փոխներթափանցող սրահներում:

III. Ցուցադրության կազմակերպում՝ ֆոնդերի, գրադարանների,  
տեղեկատունների օգտագործմամբ:

5. Ցույց է տրվել, որ թանգարանների նախագծման գործընթացին պետք է  
նախորդի ծավալուն նախապատրաստական աշխատանք, իսկ նախագծումը  
նպատակահարմար է իրականացնել 4 փուլերով.

I. Թանգարանի ճարտարապետական և գործառնական  
առանձնահատկությունների, շինարարության սոցիալ-տնտեսական  
պայմանների, թանգարանային հավաքածուի ամբողջական, կոմպլեքսային  
ուսումնասիրություն:

II. Նախագծի առաջադրանքի կազմում, ճարտարապետական նախագծի,  
իրականացում՝ կոնստրուկտորական և տեխնոլոգիական բաժիններով,  
ներառյալ նախահաշիվներն ու ցուցադրության ձևավորման հիմնական  
լուծումը:

III. Թեմատիկ - էքսպոզիցիոն հատակագծերի մշակում,  
ճարտարապետաշինարարական նախագծի աշխատանքային  
փաստաթղթերի և ցուցադրության ձևավորման էսքիզային նախագծի  
իրականացում:

IV. Փաստացի նախագծի իրականացում:

6. Բացահայտվել են թանգարանային շենքերի տեղակայման բաղաքաշինական

սկզբունքները, հեռանկարային գարգացման, դինամիկայի, տրանսֆորմացիայի, ընդլայնման հնարավորությունները:

7. Սահմանվել են թանգարանի հողատարածքին ներկայացվող պահանջները, թանգարանային շենքերի հորինվածքային տեսակները, գործառնական գոտիները:

8. Հաստատվել է թանգարանային ճարտարապետության նորարարական մոտեցումներում ցուցահանդեսներին և ցուցադրանքին այցելուի ինտերակտիվ մասնակցության ճարտարապետական արտացոլման պահանջը:

## ԳԼՈՒԽ 2

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԵՐԻ

#### ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

**2.1. Թանգարանների ճարտարապետական կազմավորման փուլերը.**

**2.1.1. Թանգարանային շենքերի նախատիպերը (մ.թ.ա. VIII - Xղդ.)**

Հայաստանի Հանրապետության թանգարանային ցանցը հարուստ է և բազմաբնույթ՝ այն ներառնում է պատմամշակութային ժառանգության օբյեկտներ Հայաստանի տարբեր ժամանակաշրջանների՝ անտիկ, միջնադարայան, ռուսական կայսրության, խորհրդային և Երրորդ հանրապետության տարիների: Ըստ Կ. Ղաֆադարյանի, Հայաստանում թանգարանների նախատիպեր եղել են դեռևս ուրարտական շրջանում, մ. թ. ա. VIII դ. [5]:

Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայում, այլ քաղաք-ամրոցներում՝ Մուսասիրում, Էրեբունիում, Թեյշեբախնիում կառուցված տաճարները Հայաստանի տարածքում գործող այն կառուցներից էին, որտեղ հավաքվում ու պահպանվում էին ծիսապաշտամունքային առարկաները: Առաջին տեղեկությունն ուրարտական

տաճարների մասին վերաբերում են մ.թ.ա. VIII դ.' հնագոյն էրեբունի ամրոցի պեղումների նկարագրությամբ, և Հայաստանում ամենահին «թանգարանը» կարելի է համարել Թեյշեբայինի սրբավայրը (մ.թ.ա. VIIդ.), իսկ գրավոր հնագոյն տեղեկությունը պատկանում է մ.թ.ա. 714թ. [5, էջ 20]:

Հայաստանում թանգարանների նախատիպեր հանդիսացան մեհյանները, ուր տեղադրվում էր հեթանոսական որևէ աստվածության արձան և զրիասեղան՝ բագին: Սկզբնապես մեհյան են կոչվել Միհր աստծու տաճարները: Մեհյանները հետագայում ստացան հեթանոսական տաճար ընդհանուր իմաստը: Այդպիսիններից էին Տիրին և Անահիտ աստվածուհուն նվիրված մեհյանները: Տիրին նվիրված տաճարներ Հայաստանում ամենուր էին: Իսկ գլխավոր տաճարը, որ կոչվում էր Երազամուն կամ Զվարթնոց, Այրարատ աշխարհում էր՝ Վաղարշապատ մայրաքաղաքի մոտակայքում: Տիր աստծուն նվիրված տաճարները եղել են դպրության կենտրոններ, հետևաբար, բոլոր նախաքրիստոնեական գիտության և դպրության կենտրոններում (դպրոցներ, աստղադիտարաններ և այլն), եղել են Տիրի տաճարներ [4, էջ 444]: Հաջորդը Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա ավանում Անահիտ աստվածուհուն նվիրված Երիզայի տաճար-թանգարանն է: Տաճարում էր դրված Անահիտի ոսկեծովյլ արձանը: Արձանին ծառերի թափ ու թարմ ճյուղերից հյուսված պսակներ էին դնում: Աստվածուհու պաշտամունքն այնքան էր տարածված, որ ամբողջ գավառը կոչվել է նաև Անահիտական: Այս տաճարին նվիրաբերում էին սպասավորներ ու սպասուիիներ: Մեծահարուստ և նշանավոր ընտանիքները իրենց հասուն դստրերին նվիրում էին այդ տաճարին, որտեղ որոշ ժամանակ ծառայելուց հետո միայն նրանք իրավունք ունեին ամուսնանալու: Աստվածուհու ոսկեծովյլ արձանն այնքան մեծ էր, որ երբ հոռմեացի զորավար Մարկոս Անտոնիոսը մ.թ.ա.34 թ. իր պարթևական արշավանքի ժամանակ մտնում է Երիզա ավանը, նրա զինվորները արձանը տեղափոխելու նպատակով այն ջարդում ու մասնատում են, բաժանում իրար մեջ և

տանում Հռոմ<sup>8</sup> [3, էջ 47]:

### **2.1.2.Միջնադարյան թանգարանները**

Թանգարանները, որպես նյութական փաստացի ժառանգություն միջնադարյան Հայաստանում Խդ. Մատենագիր Հովի. Դրասխանակերտցու վկայությամբ հանդես են գալիս երեք ծևերով՝ արքունի, իշխանական և եկեղեցական: Արքայական պալատներում և իշխանական դրյակներում առանձնացված հատուկ սրահներում էին պահպում նախնյաց հիշատակներն ու պաշտամունքային տարաբնույթ առարկաները, տեղացի ու օտար վարպետների ինքնատիպ ստեղծագործությունները [2, էջ 210]:

Քիչ թե շատ եկամտավոր եկեղեցիներն, սկսած V դարից, ունեցել են ավանդատներ, որոնց մեջ պահպանվել են եկեղեցական թանկարժեք զգեստներ, մարգարտակուր թագեր, ոսկե և արծաթե սկիհներ, արծաթակազմ մագաղաթյա ձեռագրեր և այլ բարձրարվեստ գործեր, իսկ մեծ վանքերը (Սանահինը, Հաղպատը, Հավուց թառը), ունեցել են այդ նպատակով հատուկ կառուցած գանձատներ: Տեղեկություններ կան, որ Զվարթնոցն ունեցել է ցուցադրական սրահ, որտեղ բացի եկեղեցական առարկաներից դրված է եղել նաև Գրիգոր Լուսավորչի մասունքը: Եկեղեցական թանգարաններ գոյություն ունեին նաև Կարնո առաջնորդարանում, Երուսաղեմում, Մխիթարյան միաբանության վանքում: Հայաստանի միջնադարյան թանգարաններից մեկն էլ էջմիածնի եկեղեցական թանգարանն է, որ հիմնադրվել է XV դ. Կեսերին [5, էջ 23]: XVI - XVII դարերում, ինչպես Եվրոպայում, Հայաստանում ևս թանգարանները ոչ միայն դառնում են առանձին սոցիալական խմբերի ավանդապահության դրսնորման միջոց, այլև սկսում են օգտագործվել գործնական նպատակներով:

### **2.1.3. XIX – XXդդ. հիմնադրված թանգարանները.**

Ըստ Կ. Ղաֆադարյանի, հայկական թանգարան հիմնելու մասին գրավոր

<sup>8</sup> Ներկայումս այս արձանի գլուխը գտնվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանի մշտական ցուցադրությունում:

տեղեկություններ պահպանվել են XIX դ. կեսերից, երբ գործնական քայլեր են ձեռնարկվել հայկական թանգարան ստեղծելու համար: Առաջին աշխարհիկ թանգարանը Հայաստանում և Անդրկովկասում ոռուական տիրապետության օրոք՝ 1846 թ. հիմնադրել է Խ. Աբովյանը Երևանի գավառային դպրոցի գրադարանին կից՝ «Հայկական հնությունների կաբինետ» անվանումով՝ հայկական նահանգի հնությունների պատմական ու բնապատմական արժեք ունեցող իրեր ցուցադրելու համար [32, էջ 50]:

1858 թ. Մկրտիչ Վարդապետ Խրիմյանը Վասպուրականում նշանակվեց Վարագա վանքի առաջնորդս Վարագավանքում հիմնեց թանգարան: Դա առաջին հայկական թանգարանն էր՝ Աբովյանի փորձից հետո: Թանգարանը թեև վանքին կից էր, բայց միայն Եկեղեցական բնույթ չէր կրում. Եկեղեցական առարկաների կողքին կային նաև աշխարհիկ և անգամ հեթանոսական շրջանի իրեր [6, էջ 58]:

1868 թ. Գեորգ Խ. կաթողիկոսը հիմնադրեց Էջմիածնի Գևորգյան թանգարանը: Նա նորոգեց տաճարի արևելյան խախտված պատը և խորանի հետևում հիմնեց երեք սրահներից բաղկացած թանգարան ուր և տեղափոխվեցին մինչ այդ տաճարի արևելյան կողմի երկու փոքրիկ ավանդատների մեջ հավաքված թանգարանային իրերը [1, էջ 50]: Գեորգ Խ-ն այդ իրերը ցուցադրում էր հատուկ շինած փայտե պահարաններում, իսկ թանգարանի մուտքը մնում էր Եկեղեցու միջից: Այդ թանգարանը, որի միայն հյուսիսային սրահում էր կազմակերպված ցուցադրությունը, երկար տարիներ պահպանվեց գրեթե առանց փոփոխության: Միայն 1955 թ., երբ պետական միջոցներով վերանորոգվեցին Էջմիածնի տաճարը և հարակից վանական շինությունների մի մասը, թանգարանին տրամադրվեց Գեորգ Խ կառուցած շենքն իր երեք սրահներով և կազմակերպվեց նոր ցուցադրություն [5, էջ 26]:

1872 թ. Վահան Վարդապետ Բաստամյանը, որ հայագիտության մեջ հայտնի է Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակությամբ, Գայանեի վանքի

առաջնորդարանում հիմնել էր հնագիտական և ազգագրական թանգարան, ուր ի շուց էր դրել հին դրամներ, ձեռագրեր և հին տպագիր գրքեր:

1892-1893 թթ. պրոֆ. Ն. Մատը պեղումներ կատարեց Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիում, և իր գտած առարկաները տարավ Պետերբուրգ: Երբ Մատին մեղադրեցին, թե Հայաստանի հնությունները դուրս է տանում, նա պատճառաբանեց, որ Հայաստանում թանգարաններ չկան, որոնց կարելի լիներ հանձնել պեղածո իրերը. Այդ վիճակից դուրս գալու համար Խրիմյանն, իր կաթողիկոսության տարիներին (1892-1907), էջմիածնի սինոդի հին շենքը քանդեց և նրա տեղում, Ներսիսյան լճի մոտ, կառուցեց չորս ընդարձակ դահլիճներով թանգարանի շենք, որ ժողովուրդը կոչեց հայրիկյան թանգարան<sup>9</sup>:

#### **2.1.4. Խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանաշինությունը.**

Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատմամբ նշանավորվում է թանգարանային գործի իրական վերելքը՝ պայմանավորված ոլորտի կազմակերպման նոր սկզբունքներով, հատուկ թանգարանային շենքերի նախագծային հիմքերի ընդունմամբ ու կառուցմամբ, հուշային թանգարանների ձևավորմամբ, որոշ կառույցների թանգարանների հարմարեցմամբ և այլն: Ներկայումս Հայաստանում թանգարանային շենքերի փաստացի նյութական ժառանգության մեծագույն մասը խորհրդային շրջանից է: Եթե խորհրդային իշխանության առաջին տարիներին թանգարաններին հատկացվում էին պատմական շենքեր, ապա հետագա տարիներին՝ նույնիսկ վարչական տարածքներ: Արդյունքում թանգարանային շենքերի 80%-ը հարմարեցված շենքեր են: Խորհրդային Հայաստանում նախագծվել և կառուցվել են նաև ազգային ինքնատիպ ոճով թանգարանային շենքեր, որոնցից

<sup>9</sup> 1920 թ. թանգարանը պետականացվեց, իսկ 1930թ. նրա գույքը հանձնվեց Հայաստանի կոլտուղարական թանգարանին [5]:

առանձնանում են Հ. Թումանյանի թանգարանի շենքը (ճարտ.' Գ. Աղաբարյան, 1949-1953), Երևանում Ա. Խաչատրյանի տուն-թանգարանը (ճարտ.' Մ. Գրիգորյան, Է. Ալթունյան, 1984), Երևանի հիմնադրման «Էրեբունի» (ճարտ.' Շ. Ազատյան) և «Մեծամոր» (ճարտ.' Մ. Մանվելյան) պատմահնագիտական արգելոց-թանգարանները, 1968), Հայաստանի ազգագրության, ազգային-ազատագրական պայքարի թանգարանը Սարդարապատում (ճարտ.' Ռ. Խորայելյան, 1968) և այլն: << անկախության տարիներին թանգարանները հաղթահարելով ժամանակի ծանր փորձությունները, չդադարեցին նորանոր ուղիներ փնտրելուց, դրական գնահատականի արժանանալով 2000-ական թթ. Հայաստան այցելած Եվրոմիության թանգարանագիտության փորձագետների կողմից: Երրորդ հանրապետության տարիներին, չնայած թանգարանաշինության համար ոչ բերենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններին, կառուցվեցին և հիմնադրվեցին նշանակալի թանգարաններ, որոնցից են Հայոց ցեղասպանության թանգարանը (ճարտ.' Ս. Քալաշյան, Լ. Մկրտչյան, 1995), Գաֆեսճեան արվեստի կենտրոն-թանգարանը (ճարտ.' Դ. Հոթսըն, 2009), Կոմիտասի թանգարան-ինստիտուտը (ճարտ.' Ա. Մեսյան, 2015) և այլք: Սակայն, 1990-2000 թթ. ընթացքում լուծարվեցին 6 թանգարան<sup>10</sup>:

Նշենք, որ 2001-2002թթ. «Լինսի» հիմնադրամի գործունեության շնորհիվ Հայաստանում վերանորոգվեց և արդիականացվեց շուրջ 12 թանգարան, իսկ 1990-

- 
- 1.ՀՆՍՀ Հեղափոխության թանգարան, - լուծարվում է, թանգարանային առարկաները հանձնվում են Պատմության թանգարանին:
  - 2.Հայաստանի կոմերիտմիության թանգարան), թանգարանային առարկաները հանձնվում են տարբեր թանգարանների:
  - 3.Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում թանգարանը հջևանում լուծարվում է, թ. ա. հանձնվում են Պատմության և ազգագրության թանգարանին:
  - 4.Բորյան եղբայրների տուն-թանգարանը Կրասնոսելսկում-լուծարվում է, թ.ա. հանձնվում են Պատմության թանգարանին:
  - 5.Բագրատ Ղարիբջանյանի տուն-թանգարանը Լենինականում-լուծարվում է, թ.ա. հանձնվում են տարբեր թանգարանների:
  - 6.Սոցիալ-դեմոկրատական կազմակերպության թանգարան Հաղպատում-լուծարվում է, թ. ա. բաժանվել են գյուղացիների միջև

2017թթ. ընթացքում Հայաստանում հիմնադրվել է մոտ 39 նոր թանգարան:

Ներկայում Հայաստանում գործում է 125 թանգարան (Հավ. 3.1):

Որպես հասարակական սպասարկման հիմնադրկներ՝ թանգարանային շենքերն ունեն գործառնական բարդ կառուցվածք և տարբեր են՝ ըստ իրենց քաղաքաշինական տեղակայման, հավաքածուների ֆոնդի ծավալի, սրահների: Ժամանակակից թանգարանագիտությունը թանգարանները դասակարգում է՝ ըստ գործունեության մասշտաբի /կենտրոնական, ռեգիոնալ, տեղական/, սեփականության ձևի /պետական, համայնքային, մասնավոր/, աղմխիստրատիվ տարածքային բնույթի /հանրապետական, մարզային, քաղաքային, շրջանային: Հայաստանում գործող 125 թանգարաններն ըստ սեփականության ձևի ունեն հետևյալ թվային և տոկոսային հարաբերակցությունը. պետական՝ 66 (52,8 %), համայնքային՝ 31 (24,8 %), մասնավոր՝ 28 (22,4 %), տեղակայված են Հայաստանի 10 մարզերում և Երևանում (Հավ. 3.1):

## **2.2. Թանգարանների տիպաբանական դասակարգումը**

Թանգարանային շենքի գործառնական կառուցվածքը պայմանավորված է մի շարք գործոններով և ըստ բնույթի թանգարանները տարբերակվում են.

**Պատմության; Արվեստի; Գիտության և տեխնիկայի; Արդյունաբերական; Բնագիտական; Գյուղատնտեսական**

Առանձնացվում են հետևյալ թանգարանային տիպերը.

**Թանգարան; արգելոց-թանգարան; հուշային; բուհական; կոմպլեքս**

Թանգարաններն աշխատում են բոլոր տարիքային և սոցիալական խմբերի այցելուների հետ: Այցելուների հետ աշխատանքը կազմակերպվում է թանգարանային հավաքածուների ցուցադրությունների, հանգստի յուրատեսակ կազմակերպման միջոցով:

**Պատմության** թանգարանների հավաքածուները ներկայացնում են մարդկության պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, հիմնվում են միայն

նեղմասնագիտության, հնագիտության, դրամագիտության վրա: Պատմության թանգարանները բաժանվում են երեք խմբի, որով և պայմանավորված է նրանց ճարտարապետական նախագծման խնդիրները՝

- ❖ Նոր շենքեր և համալիրներ,
- ❖ պահպանվող, վերականգնվող տարածքներ,
- ❖ նոր կառուցների և գոյություն ունեցողների համատեղություն:

Հայաստանի **Պատմության** թանգարաններն ըստ բնույթի և տիպի համակարգվում են հետևյալ սխեմայով.

## **1 . Պատմության /60/**

1. 1. թանգարան /16/
- 1.2. կոմպլեքս - երկրագիտական /10/;
- 1.3. արգելոց /11/;
- 1.4.թանգարան-ինստիտուտ /1 /;
- 1.5. եկեղեցական /4/ ;
- 1.6. բուհական / 10/
- 1.7հոլշային /8/ 1.7.1 – անվանական, /4/  
1.7.2 - տուն-թանգարան/4/

**Կոմպլեքս** տիպի թանգարանների հավաքածուները փաստագրում են սոցիալական նշանակալի ֆենոմենները: Նրանց գործունեությունը կոմպլեքս ձևով կարող է ներկայացնել ինչպես հումանիտար և բնագիտական գիտությունները, այնպես էլ միայն հումանիտար կամ էլ միայն բնագիտական ուղղություններ: Սովորաբար կոմպլեքս-թանգարաններ համարվում են երկրագիտական թանգարանները:

**Բուհական** տիպի թանգարանները փաստագրում են կրթության ժամանակակից վիճակն ու պատմությունը և մանկավարժության պատմությունը: Ուսումնական թագարաններն ունեն գիտակրթական դերակատարում, ստեղծվում են դպրոցներին,

բարձրագույն հաստատություններին կից: Այդ հավաքածուները օգնում են ձեռք բերել անհրաժեշտ ունակություններ գիտական ուսումնառության ընթացքում, նաև ներկայացնում են տվյալ բուհի ստեղծման պատմությունը [12, էջ 36]: Նշված ցուցադրությունները սովորաբար հասու են սահմանափակ թվով այցելուների: Աշխարհում առաջին մանկավարժական թանգարանը բացվել է Ռուսաստանում<sup>11</sup> [28]:

Հայաստանում արդեն ստեղծվել են 10 բուհական թանգարաններ:

## 2. Արվեստի թանգարանների տեսակներն են՝

- գեղարվեստական
- գրականության
- երաժշտության
- թատերական
- սպորտի և մարմնամարզության:

Արվեստի թանգարանները պահպանում են կերպարվեստի պատմության գարգացումը փաստող հավաքածուներ և կոչված են բավարարելու մարդու գեղագիտական պահանջմունքները: Առանձնանում են ազգային, միջազգային կերպարվեստի թանգարաններ, ճարտարապետական թանգարաններ՝ թանգարան հուշարձաններ, թանգարան-պալատներ, դեկորատիվ-կիրառական արվեստի թանգարաններ, ժողարվեստի, ականավոր արվեստագետների հուշային թանգարաններ՝ թանգարան-արվեստանոցներ, տուն-թանգարաններ: Նման խոշոր թանգարաններից են Էրմիտաժը, Ս.Պետերբուրգի Ռուսական, Պուշկինի անվ. կերպարվեստի, Լուվրի թանգարանները, Տրետյակովյան, Հայաստանի ազգային պատկերասրահները և այլն:

**Գրական** թանգարանները փաստագրում են գրականության պատմությունը:

<sup>11</sup> 1864թ. Ս. Պետերբուրգում բացվում է ռազմական ուսումնական հաստատությունների Մանկավարժական թանգարանը [28]:

Ներկայացնում են ազգային գրականությունը, գրական ուղղությունները ու գրողներին: Հայաստանում գրական թանգարաններից նշանավոր են Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը (ԳԱԹ), Հովհ. Շումանյանի, Ե. Չարենցի, Ավ. Իսահակյանի, Խ. Աբովյանի, Ս. Զորյանի տուն-թանգարանները, Մ. Աբեղյանի թանգարանը, Գյումրիի Ավ. Իսահակյանի, Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարանները և այլն:

**Երաժշտական** թանգարանները փաստագրում են երաժշտական մշակույթի պատմությունը: Բնույթային կազմը համախմբում է երաժշտական մշակույթի և երաժշտության պատմության թանգարանները (համաշխարհային և ազգային երաժշտական մշակույթները, դասական երաժշտություն և ֆոլկյոր, երթեմն և առանձին երաժշտական ուղղություններ և դպրոց), հանրահայտ երգահանների և կոմպոզիտորների հուշային թանգարանները և այլն: Այդպիսի թանգարանների գործառույթները իրականացնում է ICOM կոմիտեն՝ ըստ երաժշտական թանգարանների և երաժշական գործիքների հավաքածուների: Խոշոր թանգարաններից է Մոսկվայում Մ. Ի. Գլինկիայի անվան երաժշտական մշակույթի կենտրոնական թանգարանը:

Թանգարանային հավաքածուները ներառում են խոշոր երգահանների արխիվներ, ձեռագրեր, ներկայացումների դեկորացիաների և հանդերձանքների էսքիզներ, երաժշտական գործիքներ, նոտաների հրատարակություններ և այլն:

Հայաստանում Հանրապետության առաջին երաժշտական թանգարանը Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանն է (հիմն. 1963թ.):

**Թատերական** թանգարաններ. Ներկայացնում են համաշխարհային թատրոնի պատմությունը, թատերական արվեստի ուղղությունները, դպրոցներին, առանձին թատրոններին, նաև՝ հանրահայտ թատերական գործիչների հուշային

թանգարաններ: Աշխարհում ամենամեծ թատերական թանգարանը Ռուսաստանի Դաշնության Ա.Ա. Բախրուչինի անվան Կենտրոնական թատերական թանգարանն է: Ֆոնդային հավաքածուն կազմված է շուրջ 1,2 միլիոն եզակի, 40000 գիտական նմուշներից: Առանձնանում են ձեռագրերի, դերասանների անձնական իրերի, դեկորացիոն հավաքածուների, լուսանկարների, արխիվային հիմնադրամների բաժինները: Ունի 4 մասնաճյուղ:

Հայաստանում նմանատիպ թանգարան է Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը՝ բացված 1921թ.:

**Ֆիզկուլտուրայի և սպորտի** թանգարանները փաստագրում են օլիմպիական շարժման զարգացման պատմությունը: Այս տեսակի թանգարաններն ի հայտ եկան XX դարի սկզբին [69]: Հայաստանում հայտնի է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի պատմության թանգարանը՝ բացված 1985թ.:

Հայաստանում գործում էարվեստի բնույթի 53 թանգարան, որոնք համակարգվում են հետևյալ սխեմայով.

2.1 թանգարան/21/

2.2 հոլշային /30 /

2.2.1 անվանական/6/

2.2.2 տուն- թանգարան /24/

2.3 թանգարան-ինստիտուտ /2/

**3. Գիտության և տեխնիկայի թանգարանները** փաստագրում են տեխնիկայի ու տեխնոլոգիայի պատմությունը: Այս թանգարանը կարող է լինել բազմապրոֆիլ, ինչպես Մուսկվայի Ճարտարագիտական թանգարանն է, և դրանց բնորոշ առանձնահատկությունն է գիտական նվաճումների, գիտության պատմության, գիտության և տեխնիկայի, բնության և մարդու փոխկապակցվածության գրավիչ ու ժամանակակից ցուցադրումը:

Հայաստանում գործում են գիտատեխնիկական 6 թանգարան.

3.1 թանգարան /4/

3.2. հուշային՝ տուն-թանգարան /2/

**4. Արդյունաբերական** թանգարանները փաստագրում են արդյունաբերության ժամանակակից ճյուղերի (արհեստագործության, տնայնագործական և գործարանային) և առանձին ձեռնարկությունների զարգացման պատմությունը և վիճակը: Այս բնույթի թանգարանների ձևավորումը կապված է Ֆրանսիական լուսավորչականության գաղափարների հետ և առնչվում է Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակներին: Առաջին այդպիսի թանգարանը բացվել է Փարիզում 1793թ. և կոչվում էր Արվեստի և արհեստի կոնսերվատորիա: Ուսասատանում առաջին արդյունաբերական թանգարանները հայտնվել են 1744թ., օր՝<sup>1</sup> Պետերբուրգի ճենապակու գործարանի թանգարանը: Արդյունաբերական թանգարանների գաղափարներն իրենց արտահայտությունը գտան նաև արդյունաբերական ցուցահանդեսների կազմակերպման մեջ, որոնցից առաջինը տեղի ունեցավ Փարիզում՝ 1793 թ.:

Արդյունաբերական թանգարանները լինում են առևտրի, արդյունաբերության և արհեստների; տեխնիկայի բնագավառների; առանձին ձեռնարկությունների:

Հայաստանում գործում են 2 արդյունաբերական թանգարան:

**5. Բնագիտական** թանգարանները փաստագրում են բնության մեջ կատարվող փոփոխությունները, մարդկանց և շրջակա միջավայրի միջև փոփոխարաբերությունները: Սկզբնական շրջանում այս թանգարանները գործել են տեխնիկական, արդյունաբերական, գյուղատնտեսական թանգարաններին կից, իսկ հետագայում առանձնացել են և դարձել առանձին թանգարաններ: Բնագիտական թանգարանների թվին են պատկանում զօօ-թանգարանները, թանգարանակարիումները, բուսաբանական այգիները, գազանանոցները և այլն:

Հայաստանում գործում է 4 բնագիտական թանգարան:

**Գյուղատնտեսական** թանգարանների հավաքածուները փաստագրում և արտացոլում են գյուղատնտեսական արտադրանքի և առանձին ճյուղերի և գյուղական կենցաղի պատմությունը: Այս պրոֆիլի առաջին թանգարանը աշխարհում ստեղծվել է Ռուսաստանում, Պետերբուրգում, 1859թ.: Այն ուներ ակադեմիական բնույթ: Ցուցանմուշները կարող էին օգտագործվել միայն գիտական նպատակով: Ներկա ժամանակներում Ռուսաստանում այս բնույթի թանգարանները գործում են Բուհ-ին կից (Կ. Ս. Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայի թանգարան, Ե.Ֆ. Լիսկունի անվան անասնաբուծության թանգարան, Զիաբուծության թանգարան և այլն) [74]:

Արտասահմանում ձևավորվեց բավականին խոշոր և համաչափ զարգացող գյուղատնտեսական թանգարանների ցանց: Դրանց մեծ մասը ներկայացնում է գյուղատնտեսական տեխնիկայի, ֆերմերային տնտեսության զարգացումը: Բայց կան նաև գյուղական կենցաղի թանգարաններ, թանգարաններ բաց երկնքի տակ, պատմական ագարակ-թանգարաններ [12, Էջեր 31-35]:

Նոր երևույթ դարձան տնտեսական էկոթանգարանները: Սրանց սովորաբար դասում են գյուղատնտեսական թանգարանների խմբում: Առաջին էկոթանգարանները ստեղծվել են Ֆրանսիայում՝ մարզային բնության պուրակների հիման վրա: «Էկոթանգարան» տերմինն առաջարկեց Յու. Դե Վարին Բունը 1971թ.[78]: Ամենամեծը Օտ-բու էկոթանգարանն է (30 հազար հա) Կանադայում՝ Կվեբեկ քաղաքի արվարձանում: Թանգարանի տարածքում տեղակայված են 25 բնակավայրեր[74]: «Էկոթանգարան» հասկացությունը առավել մոտ է «թանգարան-արգելոց» հասկացությանը: Հայաստանում այս տիպի թանգարանները դեռևս ձևավորման փուլում են:

### **2.3. Թանգարանների ճարտարապետահատակագծային լուծումները.**

❖ 1. Հայաստանի Հանրապետության Պատմության թանգարաններ /60/

(Հավ. 5.1 - 5.15).

**1. 1. Թանգարան/ 16 / (Հավ. 5.1 - 5.5).**

**1. Հայաստանի պետական պատմության թանգարանը** (Երևան, Հանրապետության հրապարակ 4, Հավ.10.1) տեղակայված է մայրաքաղաքի կենտրոնում՝ Երևանի արական դասական գիմնազիայի նախկին շենքում (ճարտ.՝ Վ.Միրզոյան), անհատական նախագծմամբ հարմարեցված, թանգարանների շենքերի համալիրում: Հետագայում կառուցվել է 3-րդ հարկը: Կենտրոնական առանցքով ու կամարաշարով առանձնացող ճարտարապետական կառուցք բացվում է Հանրապետության հրապարակի վրա: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների բևեռացված դասավորությամբ: Չունի ցուցադրական, պահոցների բավարար տարածք: Թերի է ինժեներատեխնիկական հագեցվածությունը: Ունի կապիտալ վերանորոգման և վերափոխման կարիք: Ըստ հավաքածուի քանակի և ցուցադրական տարածիքի հարաբերակցության, ճարտարապետական կազմակերպման լուծումների՝ միջազգային չափանիշներին անհամապատասխանության առումով ունի առանձնացված շենքի կարիք (Հավ. 3.2):

**2. Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան(գ. Արաքս, Հավ. 10.1):** Սարդարապատի հերոսամարտի վայրում՝ ի պատիվ 1918 թ. մայիսի 26-ին թուրքական բանակի դեմ տարած հաղթանակի 50-ամյակին կառուցված «Սարդարապատ» հուշահամալիրը(ճարտ.՝ Ռ. Խորայելյան) հանդիսանում էմի քանի ծավալներում լուծված համակառուց, որի կազմում են ազգագրության թանգարանը, զանգակատունը՝ աջ և ձախ կողմից կանգնած թևավոր ցլերով, թանգարան տանող արձիվների պուրակը:

Հուշահամալիրից ձախ հատուկ նախագծմամբ կառուցվեց կարմիր տուֆից թանգարանը, որով եզրափակվում է Սարդարապատի ճակատամարտի

հուշահամալիրը: Շենքը մտահղացված է իբրև ամրոց. խոլ պատեր, շքամուտք և երկու նեղ պատուհան՝ մեկն ուղղված դեպի Արարատ լեռը, մյուսը՝ դեպի Արագածը: Մուտքի հանգույցը տեղադրված է ճակատի ճիշտ կենտրոնում, քառաշերտ կամարաշարով պսակված բացվածքի տեսքով: Հատակագիծը պարզ է, մոտենում է քառակուսու. երկարությունը՝ 64,9մ, լայնությունը՝ 62,8մ, բարձրությունը՝ 10,5մ: Ամբողջ շենքի ծավալը երկիրկանի է, պարագծով ցուցարահներն են՝ 9,1մ լայնությամբ, կամարաձև՝ կամարասրահների տեսքով: Կենտրոնական մասում նախագծված են երեք մեծ, իրար հաջորդող դահլիճներ՝ յուրաքանչյուրը՝ 13,0 x 13,0մ, բարձրությունը՝ 8,2մ, որոնք ունեն «հազարաշեն» ավանդական ծածկ ու լուսավորվում են վերևսից: Ինչպես Հաղթանակի Մոնումենտի լուծման մեջ, այնպես էլ Ազգագրության թանգարանում, ստացված է բնական լուսավորություն: Դահլիճները տեղադրված են մեկ առանցքի վրա և ունեն ամֆիլադային լուծում, ստեղծելով միասնական տարածություն: Կենտրոնական դահլիճներին հարում են փոքր, թվով չորս կանաչապատ ներքին բակեր՝ յուրաքանչյուրը 12,4x 12,4 մ, որոնց միջոցով ապահովում է կամարասրահների լուսավորությունը: Շինության մեջ աստիճանները տեղադրված են մուտքի հանգույցը պարունակող պատի աջ և ձախ անկյուններում «աշտարակների» մեջ: Հայկական տուֆի երանգներն օգտագործված են նաև դահլիճներում: Ինտերիերի լուծման մեջ գերիշխում են արթիկի տուֆի սալերից շարված կամարները, որ նոյն ռիթմով աղեղում են հատակագծի քառակուսու բոլոր կողմերը: Մշտական փոփոխվող արևի լուսավորության տակ ճակատները ստանում են յուրահատուկ երանգավորում: Ճակատները առանձնացված չեն մեկը մյուսից, դրանք գեղարվեստորեն միասնական են: 3մ լայնությամբ, 8,5մ բարձրությամբ պատերի հարթություններում նրբորեն ներգծված են խորշերը՝ 1,5մ խորությամբ: Գլխավոր մուտքի հանգույցը պարունակող ճակատը հարթ է, միայն եզրերում կան կամարաձև որմնախորշեր և եզրափակող աշտարակաձև հնգանիստ

«աշտարակներ»: Շինությունն արտաքնապես միաձույլ է, մոնումենտալ, ամրոցային, ներսից՝ հանգստացնող, լուսավոր: Թանգարանի շենքն իշխում է շրջապատին, հանդիսանում հորինվածքային դոմինանտ: Շենքի գլխավոր առանցքի վրա գետեղված երեք սրահները ծածկված են երդիկների ու գլխատների համակարգերով, կողքերից համաչափ տեղադրված են չորս բացօթյա բակ-ցուցասրահները:

Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ: Թանգարանի  $6500\text{m}^2$  ցուցադրական մակերեսի վրա ներկայացված են Հայոց ազգային մշակույթին և Մայիսյան հերոսամարտերի պատմությանը նվիրված հիմնական ցուցադրությունները(Հավ. 3.2):

Թանգարանն ունի պահոցների խնդիր, չկա օդափոխության համակարգ, շենքը մեկուսացված չէ շրջապատի վնասակար ազդեցությունից, վնասատուների առկայություն: Նախասրահը համատեղված է ցուցադրության հետ: Գործառնական գոտունորումը անբավարար վիճակում է: Ունի արդիականացման, ինչպես նաև համապատասխան ջերմախոնավային համակարգերի տեղակայման անհրաժեշտություն:

**3. Երևան քաղաքի պատմության թանգարանը** (Երևան, Արգիշտի 1/1/, Հավ.10.1) տեղակայված է Երևանի քաղաքապետարանին կից, նրա հետ մեկ ճարտարապետական ամբողջություն կազմող շենքի (ճարտ.՝ Զիմ Թորոսյան) 3 հարկերում, հարմարեցված նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, սրահների ուղղաձիգ տեղադրությամբ: Ցուցադրությունը ներկայացնում է Երևանի ամբողջական պատմությունը և բարկացած է 3 սրահներից (Հավ. 3.3): Ընդհանուր մակերեսը՝  $755\text{m}^2$ : Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**4. Սպիտակի պատմության թանգարանը** (ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 1, Հավ.10.2) տեղակայված է այլ նշանակության մեկհարկանի կառույցի կազմում,

վերակառուցված, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է 5 սրահներում՝ հորիզոնական, հաջորդական դասավորությամբ: Բավարար վիճակում է:Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

## **5. Գյումրիի ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարանը.**

**Զիթողցյանների տուն** (ք.Գյումրի, Հաղթանակի 47, Հավ. 10.2) տեղակայված է ճարտարապետական եզակի նմուշ, պատմամշակութային ժառանգություն հանդիսացող Զիթողցյանների ընտանիքի կողմից 1872 թ. քաղաքի կենտրոնում կառուցված երկիարկանի շենքում: Թանգարանի գիտական ցուցադրության ձևավորող նկարիչը Կ.Նիգարյանն է: Տեղակայված է առանձին կառույցում, հատուկ նախագծմամբ, վերակառուցված: Ցուցադրությունը լուծված է կենտրոնաձիգ, ուղղաձիգ ուղղությամբ, 10 ցուցասրահներում(Հավ. 3.3): Թանգարանի շենքը բաղկացած է երկու հատվածից՝ արևելյան և արևմտյան: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**6. «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության» թանգարանը** (ք.Աբովյան, Բարեկամությանիրապարակ 5, Հավ. 10.3)տեղակայված է առանձին երկիարկանի կառույցում, հատուկ նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է կենտրոնաձիգ, ուղղաձիգ ուղղությամբ առաջին և երկրորդ հարկի ցուցասրահներում: Երկրորդ հարկի ցուցասրահում գործում է ժամանակավոր ցուցադրություն, կազմակերպվում են այլայլ միջոցառումներ: Մեծ դահլիճը և կինոդահլիճը գտնվում են վթարային վիճակում, վերանորոգման կարիք ունեն և ժամանակավորապես օգտագործվում են որպես ֆոնդապահոցներ, քանի որ շենքը վերակազմակերպվել է թանգարանի, չունի անհրաժեշտ ֆոնդապահոցներ և աշխատասենյակներ: 2007-2008թթ. տանիքապատվել է: Անձրևաջրերի հետևանքով ամբողջովին շարքից դուրս են եկել շենքի ներքին կոմունիկացիաները, վնասվել են հավաքածուները: Տեղադրված չեն շեռուցման և օդափոխության համակարգ: Շենքը վթարային վիճակում էր (Հավ.

3.4): 2016թ.-ից ընթանում են կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

**7. Մուսալեռան հերոսամարտի պատմության և մուսալեռցիների ազգագրության թանգարանը** (գ.Բաղրամյան, Հավ. 10.3) տեղակայված է այլ նշանակության կառույցի՝ պատմամշակութային ժառանգություն հանդիսացողիուշահամալիրի կազմում, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, հաջորդական դասավորությամբ երկու ցուցասրահներում՝ Մուսալեռան ինքնապաշպանության և Մուսալեռան ազգագրության (Հավ. 3.4): Ցուցադրվում է ավելի քան 800 թանգարանային առարկա: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**8. Կիլիկիայի հայերի պատմության թանգարանը** (ք.Նոր Հաճն, Հավ. 10.3) գտնվում է այլ նշանակության կառույցի՝ Կիլիկիայի Հաճնի 1920թ. հերոսամարտի հիշատակը հավերժացնող պատմամշակութային ժառանգություն հանդիսացող հուշահամալիրի կազմում (ճարտ՝ Ռ. Խարայելյան) հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է մեկ հարկում, հորիզոնական, հաջորդական դասավորվածությամբ (Հավ.3.4): Բավարար վիճակում է: Ունի մասնակի արդիականացման կարիք:

**9. Նիկողայոս Ադոնցի անվ. Սիսիանի պատմության թանգարանը**(ք.Սիսիան, Ադոնցի 6/ա, Հավ. 10.3) տեղակայված է առանձին կառույցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, հաջորդական դասավորվածությամբ, մեկ հարկում (Հավ. 3.4): Բավարար վիճակում է: Ունի մասնակի արդիականացման կարիք:

**10. Խնձորեսկի պատմության թանգարանը** (գ.Խնձորեսկ, փ.22, փակուլի 6, շ.8, Հավ. 10.4) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ: Ունի կապիտալ վերանորոգման և վերափոխման

կարիք:

**11. Ապարանի Պատմության թանգարանը** (ք.Ապարան, Գարեգին Նժդեհ 4, Հավ. 10.4) 2013թ.-ից տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ Ապարանի Քաղաքային Մշակույթի Կենտրոնի նորակառուց շենքի երկրորդ հարկում, հարմարեցված հատակագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, հաջորդական դասավորությամբ երեք սրահներում՝ Ապարանի ճակատամարտի պատմություն, Արցախյան Հերոսամարտի և Հայրենական Մեծ Պատերազմի պատմություն, Հնագիտական (Հավ. 3.4): Բավարար վիճակում է: Ունի մասնակի արդիականացման կարիք:

**12. Կապանի քաղաքի Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանը** (ք. Կապան, Գ. Նժդեհ 24/41, Հավ. 10.4) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ բնակելի շենքի առաջին հարկում, հարմարեցված նախագծմամբ, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ 2014թ. մասնակիորեն վերանորոգվել է: Ընդհանուր մակերեսը կազմում է 468քմ, որից վերանորոգված է 222 քմ: Վերանորոգվել են 3 սրահ: Ցուցադրությունը տեղակայված է 5 սրահներում(Հավ. 3.4): Բավարար վիճակում է, բայց ունի խոնավության խնդիր: Ունի մասնակի արդիականացման կարիք:

**13. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի այցելուներիրի Կենտրոնը**(Երևան, Վ.Սարգսյան 6, Հավ. 10.4) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ << Կենտրոնական բանկի պատմական մասնաշենքում որպես բաղադրիչ մաս, հարմարեցված հատակագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.5): Զբաղեցնում է 2 հարկ՝ 500 քմ ընդհանուր մակերեսով: Բավարար վիճակում է: Ունի մասնակի արդիականացման կարիք:

**14. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Մայր Հայաստան» գինվորական թանգարանը** (Երևան, Ազատության 2,Հավ. 10.4)ուազմապատմական բնույթի, հանրապետական նշանակության միակ թանգարանն է: Տեղակայված է այլ նշանակության կառուցի՝ պատմամշակութային ժառանգություն հանդիսացող հուշահամալիրի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված (ճարտ,՝ Ռ. Իսրայելյան): Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ՝ երկու հարկերի ցուցասրահներում: Երրորդ հարկում հանդիսությունների դահլիճն է:Հուշահամալիրը նախագծվել է հայկական եկեղեցու կառուցվածքով՝ շենքի հատակագիծը կրկնօրինակվել է Հռիփսիմե տաճարից:

Կառուցն իրենից ներկայացնում է արձանի պատվանդան, որի մեջ տեղավորված է թանգարանը: Մոնումենտի ընդհանուր բարձրությունը 51մ է, արձանինը՝ 17մ: Պատվանդանի առաջին՝ ամենաստորին ծավալը գրեթե քառակուսի հատակագծով պողիում է, որի կողերի երկարությունը կազմում է մոտ 37մ: Պոդիումի վերին մակերեսը ընդարձակ տերաս է, շրջանցում է պատվանդանի հիմնական զանգվածը: Տերասը շրջանակում է շուրջ 100մ երկարության մի եզրապատ՝ քարաշեն նստարաններով: Պոդիումի առջևի մասում մասում բացվում է 20մ լայնք ունեցող, դեպի թանգարանի գլխավոր մուտքը տանող աստիճանաշար: Պոդիումի հետևի կողմից՝ պատվանդանի առանցքին սիմետրիկ, տեղադրված են երկու սանդուղք: Դրանք ունեն սանդղավոր պատվարներ՝ եռանկյունաձև բուսական զարդաքանդակներով: Պոդիումի երկու կողմերն ունեն դեպի թանգարան տանող լրացուցիչ մուտքեր: Թանգարանի նախասրահի ճարտարապետությունն արտահայտում է վերին զանգվածն անսասան կերպով կրող հիմքի ուժն ու հզորությունը, իսկ վերին՝ լուսավոր և ընդարձակ, վեհորեն հանդիսավոր կլոր դահլիճն իր ճարտարապետությամբ արտահայտում է հաղթանակի գաղափարը, թոփքը դեպի լուսավոր ապագան: Ստորին հարկում՝ պատվանդանի բուն հիմքում ստեղծված է ևս

կլոր մի դահլիճ՝ գլխավոր դահլիճից տրամագծով ավելի փոքր և բարձրությամբ նշանակալի չափով նրան զիջող: Սա շրջապատված է քառանկյունի փոքր դահլիճներով: Այստեղ մուտք են գործում կողքի նախարահներից և հարկերն իրար կապող աստիճաններից(Հավ. 3.5): Նկուղային հարկն արտահայտում է հայրենիքի պաշտպանության գաղափարը: Պատերը համեմատաբար մուգ ու ծանր գունավորում ունեն: Նկուղային հարկն ունի  $1045\text{m}^2$  մակերես, I հարկը՝  $393\text{m}^2$ , II հարկը՝  $138.9\text{m}^2$ : Ներդաշնակ համաչափությունները և կատարման բարձր որակը շահեկանորեն ընդգծում են կառուցի ուրույն ճարտարապետությունն ու պատմական արժեքը: Այստեղ և՛ ծավալային հորինվածքի, և՛ մանրամասների մեջ արտացոլված են ազգային ճարտարապետական ժառանգության ստեղծագործական էլեմենտները: Կոթողի հորինվածքը ոգով շատ է մոտ միջնադարյան Հայաստանի կառուցներին, միաժամանակ ընդգծված յուրահատուկ է:

Ստորգետնյա հատվածները մշտապես ունեն ջերմախոնավային և օդափոխության համակարգերի խնդիրներ: Թանգարանն ունի ժամանակակից տեխն. լուծումներով վերակառուցման անհրաժեշտություն:

**15. Հայ Յեղափոխության դաշնակցութեան պատմութեան թանգարան-ի իմնադրամը** (Երևան, Մ. Մկրտչյան 12/1, Հավ. 10.5) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված հատակագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին, ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական՝ մեկ սրահում (Հավ. 3.5): Նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության պատմությանը (1918–1921թթ.): Ցուցադրվում է մոտ 2.500 առարկա: Բավարար վիճակում է: Ունի մասնակի արդիականացման կարիք:

**16. Հայկական ավիացիայի պատմության թանգարանը** (Զվարթնոց օդանավակայան, Քաղավիացիայի գլխավոր վարչություն, Հավ. 10.5) տեղակայված է այլ նշանակության կառուցի՝ Զվարթնոց միջազգային օդանավակայանի տարածքում

գտնվող Քաղաքիացիայի գլխավոր վարչության շենքի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված հատակագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին, ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ (Հավ. 3.5): Բավարար վիճակում է: Ունի մասնակի արդիականացման կարիք:

## **1.2 Կոմպլեքս-Երկրագիտական(10); (Հավ. 5.5- 5.8)**

**1. Գեղարքունիքի Երկրագիտական թանգարանը** (ք.Գավառ, Զոր.Անդրանիկի 32, Հավ.10.5) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, հարմարեցված նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին, ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորվածությամբ 6 սրահներում (Հավ. 3.5): Շինությունն ունի վերակազմակերպման և կապիտալ վերակառուցման անհրաժեշտություն՝ ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով :

**2. Շիրակի Երկրագիտական թանգարանը**(Գյումրի, Մյասնիկյանի 118, Հավ. 10.5) տեղակայված է առանձին կառույցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ (Հավ. 3.6): Վթարային վիճակում է 1988թ. Երկրաշարժի հետևանքով: Տասնամյակների ընթացքում տարբեր կառույցներ են առաջարկվել թանգարանի համար, սակայն մինչ օրս այն գտնվում է նոյն հասցեում: Անհրաժեշտ է նոր շենքի կառուցում:

**3. Լոռի-Փամբակի Երկրագիտական թանգարանը** (ք. Վանաձոր, Կ. Ղեմիրճյան 23/1, Հավ. 10.6) տեղակայված է ժամանակավոր տրամադրված, առանձին, Երկիրկանի կառույցում, հարմարեցված նախագծմամբ, վերակառուցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ, բևեռացված դասավորությամբ: Թանգարանին ժամանակավոր տրամադրված տարածքն ունի հարմարավետ և լուսավոր ցուցասրահներ, պատշաճ ֆոնդային

պայմաններ (*Հավ. 3.6*): Թանգարանի ընդհանուր մակերեսը  $571.28\text{m}^2$  է. I հարկը՝  $236.07\text{m}^2$   $52.96\text{m}^2$  ցուցարահով, II հարկը՝  $335.21\text{m}^2$ , որից՝ ցուցարահ՝  $120.8 \text{ m}^2$ , կոթական պարապմունքների սենյակը՝  $33 \text{ m}^2$ : Անհրաժեշտ է նոր շենքի կառուցում:

**4. Հրազդանի երկրագիտական թանգարանը** (ք.Հրազդան, փ. Սպանդարյան 2, *Հավ. 10.6*) տեղակայված է այլ նշանակության երկիրկանի կառուցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ, սրահների բևեռացված դասավորությամբ: Ունի նկուղային հարկ: Մշտական ցուցադրությունը գործում է առաջին և երկրորդ հարկերում, բաղկացած է հնագիտական, միջնադարյան, ազգագրական, նոր ու նորագույն ժամանակաշրջաններին վերաբերող ցուցարահներից (*Հավ. 3.6*): Նկուղային հարկում գտնվում են ֆոնդապահոցները, արտակարգ իրավիճակների պայմանների համար նախատեսված թաքստոց-ապաստարանը և սանհանգույցը: Բավարար վիճակում է: Ունի նոր ճարտարապետական լուծումներով արդիականացման և վերանորոգման անհրաժեշտություն:

**5. Գորիսի երկրագիտական թանգարանը** (Մաշտոցի փող., 5 շենք, *Հավ. 10.6*) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ քաղաքի մշակույթի կենտրոնի առաջին հարկի հետնամասում, հարմարեցված նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին, ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, մեկ սրահում (*Հավ. 3.6*): Ընդհանուր մակերեսը՝  $747.25 \text{ m}^2$  է, որից ցուցարահը՝  $100.9 \text{ m}^2$ , ֆոնդադարանը՝  $23.3 \text{ m}^2$ , բացօթյա բակը՝  $168.35 \text{ m}^2$ : Թանգարանի դիրքը գրեթե նկուղային է, ոչ արևահայաց, սալապատված հատակն ի սկզբանե խոնավության աղբյուր է: Զկան աշխատանքային նորմալ պայմաններ. մի քանի ժամ աշխատել կարելի էր միայն ամառվա ամիսներին: Անմիտթար է շենքի պահպանության հարցը (սրահի ձախ անկյունից, հորդառատ անձրևների ժամանակ, անձրևաջրերը թափվում են սրահ, իսկ թանգարանի մուտքի մասում կառուցված կաթսայատունը՝ լուսից

վերջնականապես զրկել է ֆոնդերի պահպանության խուցը): Անբավարար վիճակում է, ունի տարածքի խնդիր, արդիականացման և վերանորոգման անհրաժեշտություն՝ նոր ճարտարապետական լուծումներով:

**6. Կապանի երկրագիտական թանգարանը** (ք.Կապան, Մ. Հարությունյան 3, Հավ. 10.6) տեղակայված է առանձին երկիրկանի կառուցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների՝ հորիզոնական, հաջորդական դասավորությամբ: Ընդհանուր մակերեսը՝ 369.9 մ<sup>2</sup> (Հավ. 3.7): Ունի նաև բացօթյա ցուցադրություն, որտեղ ներկայացված են տարբեր դարաշրջանների քարակերտ հուշարձաններ, խաչքարեր: Բավարար վիճակում է: Ունի արդիականացման անհրաժեշտություն՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր ճարտարապետական լուծումներով:

**7. Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը**(ք. Եղեգնաձոր, Շահումյան 4, Հավ. 10.7) տեղակայված է առանձին կառուցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Թանգարանի համար կառուցված է հատուկ շենք՝ 507քմ ընդհանուր մակերեսով: Ունի նկուղային հարկ: Ցուցադրությունը կազմակերպված է բևեռացված դասավորությամբ 3 սրահներում(Հավ. 3.7): Թանգարանի շենքը վերանորոգվել է 2005թ.: Բավարար վիճակում է: Ունի մասնակի վերականգնման կարիք:

**8. Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահը** (ք.Դիլիջան, Միասնիկյան 28, Հավ. 10.7) հիմնադրվել է 1950թ.: 2005թ. հին շենքը քանդվել է և կառուցվել է թանգարանի նոր շենքը (ճարտ.՝ Ն. Դանիելյան, 2012): Տեղակայված է երկիրկանի առանձին կառուցում, հատուկ նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ, բևեռացված դասավորությամբ (Հավ. 3.7): I հարկի մակերեսը կազմում է 470մ<sup>2</sup>, II հարկինը՝ 475.4մ<sup>2</sup>: Ունի նկուղային հարկ՝ 491.6մ<sup>2</sup> մակերեսով: Բավարար վիճակում է: Ունի մասնակի արդիականացման կարիք:

**9. Էջմիածնի Երկրագիտական թանգարանը** (ք.Էջմիածին, հրապարակ 2, Հավ. 10.7) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.7): Թանգարանն ունի նախասրահ, 3 ցուցասրահ, աշխատասենյակներ, 2 պահոց: Ընդհանուր մակերեսը՝ 464 մ<sup>2</sup> է: Թանգարանի բացօթյա մշտական ցուցադրությունում ներկայացված են Այգեշատից, Օշականից և Թեղուտից պեղված քարե կուտքերը: Բավարար վիճակում է: Ունի արդիականացման անհրաժեշտություն:

**10. Իջևանի պատմա-երկրագիտական թանգարանը** (ք.Իջևան, Երևանյան 5, Հավ. 10.7) տեղակայված է առանձին կառուցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.7): Զբաղեցնում է 500 մ<sup>2</sup> բացօթյա տարածք, շենքի մակերեսը՝ 75մ<sup>2</sup>: Թանգարանի շենքային մասում գոյություն ունի 2 սրահ: Թանգարանի հին հին, խարխուլ շենքն ունի կապիտալ վերակառուցման անհրաժեշտություն՝ ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով և միջազգային չափորոշիչներին համապատասխան:

### **1.3. Արգելոց թանգարաններ (11) ; (Հավ. 5.8 - 5.10)**

Ճարտարապետական առումով առանձնապես նշանակալի են արգելոց - համալիրները: Այստեղ թանգարանի մասին համընդիանուր պատկերացումը որպես բնօրինակ ցուցանմուշների պահոցի վերաակցենտավորվում է՝ առաջնահերթ է դառնում ոչ թե թանգարանային միջոցներով ցուցադրանքը, այլ ճարտարապետագեղարվեստական միջոցներով հուշարձանի ստեղծումը: Համալիրի ճարտարապետատարածական ձևավորման վրա ազդում է բնական շրջապատը, պահպանվող կամ ստեղծվող միջավայրը, ուր և ներդրվում է համալիրը: Հայաստանում գործում են 11 արգելոց թանգարաններ:

**1.«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան** (Երևան, Էրեբունի 38, Հավ. 10.8): Հնավայրը պատմամշակութային արգելոց-թանգարան է՝ 60 հա մակերեսով: Թանգարանի շենքը կրկնում է ուրարտական պալատական կառույցների հորինվածքը՝ պահպանելով արտաքին խոլ պատերով ու երդիկավոր հարթ կտուրներով ներքին բակի շուրջ ամփոփված ժողովրդական բնակելի տան տրամաբանական սկզբունքը (ճարտ.՝ Շ. Ազատյան, Բ. Արզումանյան, քանդակագործ՝ Ա. Հարությունյան): «Արգելոց-թանգարանն ունի 2 մասնաճյուղ-թանգարան. Երևանյան լճի ափին գտնվող Շենգավիթի բնակատեղին և Ռուսա II-ի՝ Երևանի հարավարևմտյան արվարձանում՝ Հրազդան գետի ափին, մ.թ.ա. VII-ր. կեսերին կառուցված թեյշեբախնի (Կարմիր բլուր) քաղաք-ամրոցը (Հավ. 3.8): Տեղակայված է առանձին կառույցում, հատուկ նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղաձիգ, բևեռացված դասավորությամբ: Բավարար վիճակում է: Շարունակական, հաջողված արդիականացման փուլում է՝ նորովի մոտեցումներով:

**2. «Ազարակ»-ի պատմամշակութային արգելոցի** (գ. Ազարակ) թանգարանը ստեղծվել է 02.10.2002թ.: Դեռ կառուցված չէ՝ թանգարան է բաց երկնքի տակ: Ցուցադրություն են հանդիսանում պեղված հնագիտական դամբարարներ և բնակելի տարածքներ: Անհրաժեշտ է նոր շենքի կառուցում՝ ճարտարապետական յուրօրինակ լուծումներով՝ իին բնակավայրի ավանդույթների և ժամանակակից մոտեցումների գուգորդմամբ:

**3. Մեծամոր պատմահնագիտական արգելոց-թանգարանը** (գ. Տարոնիկ, Հավ. 10.8) տեղակայված է առանձին կառույցում, անհատական նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ՝ նկուղային, առաջին և երկրորդ հարկերում: Թանգարանի շենքն իր արտաքին տեսքով գուսապ է, բայց հնավայրի բաց, ընդարձակ դաշտում չի կորցնում իր արժեքությունը, ընդհակառակը, դաշտից սկսվող աստիճանները խորհրդավոր միտումով տանում են դեպի

ժամանակակից շենքի ներսը, ուր միջավայրը ստեղծում է հնադարյան մարդկային կեցության պատկերներ(Հավ. 3.8): Բավարար վիճակում է: Ունի պահոցների արդիակացման խնդիր: Լինելով բաց երկնքի տակ թանգարանի տարատիպ՝ ունի շրջակայքի վերանորոգման խնդիր:

**4. «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարանը** (Երևան, Բագրատունյաց 1, Հավ. 10.9) տեղակայված է առանձին կառուցում, հարմարեցված, անհատական նախագծմամբ: Զբաղեցնում է 3հա տարածք՝ իրար միացած կլոր կամ քառանկյուն հիմք ունեցող կացարաններով, թեք ու փոքր փողոցներով: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.8): Ոչ բարվոք վիճակում է: Ունի կապիտալ վերանորոգման խնդիր:

**5. «Գառնի» պատմամշակութային արգոց-թանգարանը** (գ.Գառնի, Հավ. 10.10) մի քանի ծավալներով, համակառուց է՝ տաճար + բաղնիքի հատվածը: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական: 2002-2003 թթ. Լինսի հիմնադրամի միջոցների հաշվին մասնակի վերականգնվեց պարսպապատը, անտիկ բաղնիքն ամբողջովին առնվեց ծածկի տակ, նորոգվեցին պալատական դահլիճի և հարակից շինությունների պատերը, կառուցվեցին անցուղիներ, դիտակետ, սպասարկման սրահ և սանհանգույց: 2009 թ. ռադիոֆիկացվեց արգելոց-թանգարանի ողջ տարածքը, և տաճարի շուրջը տեղադրվեց գեղարվեստական լուսավորության համակարգ, ինչը հնարավորություն ընձեռեց երեկոյան ժամերին երաժշտության ուղեկցությամբ, բազմերանգ լուսային լուծումներով ընդգծել հուշարձանի ճարտարապետական և գեղարվեստական յուրահատկությունները: Ունի բացօթյա ցուցադրական տարածք: Հատուկ ամրակայված տարածքում ցուցադրվում է խճանկար հատակով մ.թ.ա. III դարի բաղնիքը(Հավ. 3.8): Առանձին հանգստի գոտիներից և դիտակետերից ցուցադրման օբյեկտ են հանդիսանում շրջակա գեղատեսիլ բնատեսարաններն ու

բնության հուշարձանները: Արգելոց-թանգարանն ունի գիշերային գեղարվեստական լուսավորություն և հնչյունային համակարգեր, որոնք հուշարձանային համայիրների ցուցադրման հնարավորություն են ընձեռում երեկոյան ժամերին, ընդգծում դրանց գեղագիտական մանրամասները: Ցուցադրությունը համալրված է տեղեկատվական և կողմնորշիչ վահանակներով, առկա է հնգալեզու բրայլան համակարգով ստեղծված տեղեկատու վահանակ: Բավարար վիճակում է: Շարունակական, հաջողված արդիականացման փուլում է:

**6. «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարան** (ք.Էջմիածին, Հավ. 10.10): Զվարթնոց տաճարի հարավային կողմում հնագետ Կ. Ղաֆարյանի ղեկավարությամբ կառուցվել է թանգարանային շենքը(ճարտ.՝Ն. Բունիաթյան, 1937): Սկզբում այն ունեցել է փոքր ցուցադրություն՝ ձևավորված մեկ սրահի մեջ՝ 80 քմ մակերեսով: 1957 թ. հուշարձանի տարածքում վերականգնվել է VII դարի բնապատմական միջավայրը, կատարվել է տարածքի կանաչապատում, ստեղծվել բնապատմական միջավայր և այգեպուրակային համայիր: Թանգարանային շենքն ընդարձակվել է, տարածքը գրեթե քառապատկվել է (ճարտ. Լ. Սադոյան, 1988), 2003 թ. ավարտվել են ներքին հարդարման աշխատանքները: Ցուցադրությունում տեղ են գտել պեղումների ժամանակ Զվարթնոցի տարածքից հայտնաբերված գտածոներ: Տեղակայված է առանձին կառույցում, հատուկ նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ: Այժմ ցուցադրության համար թանգարանն ունի 3 սրահներ՝ երկուաը մշտական, մեկը՝ ժամանակավոր և շրջիկ ցուցադրությունների կազմակերպման համար(Հավ. 3.8): Ունի բացօթյա ցուցադրություն: Բավարար վիճակում է: Շարունակակական, հաջողված արդիականացման փուլում է:

**7. «Գոշավանք» պատմաճարտարապետական արգելոցի թանգարանը(գ. Գոշ,Հավ. 10.11)** տեղակայված է առանձին կառույցում, հարմարեցված նախագծմամբ:

Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.8): Ներկայացված են ազգագրական բնույթի շուրջ 100 նյութ: Ոչ բարվոք վիճակում է: Ունի համալիր վերականգնման անհրաժեշտություն:

**8. «Դիլիջան» ժողովրդական ճարտարապետության արգելոց-թանգարանը** (ք.Դիլիջան, Շարամբեյան 5, Հավ. 10.11) պատմամշակութային ժառանգություն է, ստեղծվել է Դիլիջան քաղաքի թաղամասում, որի լավ պահպանված, XX դարասկզբին բնորոշ երկհարկանի տները պատկանել են հայտնի առևտրականներ Անանովներին և Բադալովներին: 1970-ական թթ. թաղամասը ենթարկվել է ճարտարագիտական պատշաճ ուսումնասիրության, կատարվել են վերականգնողական աշխատանքներ՝ հարազատ մնալով կառուցների ոճին ու ոգուն:

Մի քանի ծավալով համակառույց է, հատուկ նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների բևեռացված դասավորությամբ(Հավ. 3.8): Բավարար վիճակում է: Շարունակական, հաջողված արդիականացման փուլում է:

**9. «Լոռի Բերդ Քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցը** (Հավ. 10.11) տեղակայված է առանձին կառուցում, հարմարեցված նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ: Ոչ բարվոք վիճակում է: Ունի կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն:

**10. «Գլածորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանը** (գ.Վերնաշեն, սբ.Հակոբ Եկեղեցի, Հավ.10.12) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.9): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ վերանորոգման անհրաժեշտություն:

**11. Կումայրի արգելոց-թանգարանն** (ք.Գյումրի, Հավ.10.12) աշխարհի 100 անհետացող թանգարան-արգելոցներից մեկն է: Հիմնվել է պատմական շենքերը պահպանելու նպատակով: Ընդգրկում է Գյումրի քաղաքի պատմական միջուկը(Հավ.

3.9): Պահպանման տարածքը կազմում է ավելի քան 1000 հա, ու չնայած օրենքով արգելվում է շենքերի ձեռափոխությունները, այդուհանդերձ շատերը հասցրեցին խաթարել որոշ կառույցների տեսքը: Քաղաքացիական շինարարության մեջ քաղաքի ճարտարապետական կերպարը բնորոշող կառույցներից առաջնակարգ տեղ են գրավում Եկեղեցիները, որոնցից այսօր կանգուն են «Ս.Ամենափրկիչը», «Ս. Նշանը», «Ս. Գրիգորը», Ռուսական ժամատունը, զորակայանների տարածքում գտնվող ուղղափառ երկու Եկեղեցիները: Քաղաքի առավել արժեքավոր ճարտարապետական կառույցներից կարելի է թվարկել Զիթողցյանների, Դրամիյանների, Ծաղիկյանների, Վեքիյանների եկամտաբեր տները, բաղնիքները, գարեջրի գործարանը, առևտրական ուսումնարանն ու իգական գիմնազիան, Աղաբաբյանների, Մազմանյանների, Գառգալոյանների և այլոց մենատները: Արգելոցի համար լուրջ պատմական-մշակութային արժեք են ներկայացնում նյութական կոլտուրայի բազմաթիվ հուշարձաններն, որոնք առնչվում են հայ և համաշխարհային մշակույթի ու քաղաքական-հասարակական կյանքի ականավոր գործիչների անվան հետ: Տեղակայումը՝ տարբեր ծավալների կառույցների համախմբվածություն (Հավ. 3.9): Ցուցադրությունը կազմակերպված է հաջորդական դասավորությամբ: Բավարար վիճակում է: Ունի համալիր վերականգնման անհրաժեշտություն:

#### **1.4. թանգարան-ինստիտուտ (1); (Հավ. 5.10)**

**1. Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ** (Երևան, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Հավ. 10.13): Թանգարանային ցուցադրությունը, մինչև 2014թ., տեղաբաշխված էր Երեք սրահներում: 2012-2015թթ. հիմնանորոգվել է թանգարանի նախկին շենքը, ավելացվել են ևս երկու խոշոր մասնաշենքեր, և նախկին 3 ցուցասրահների փոխարեն ցուցադրությունը այժմ տեղաբախշված է 12 նորաբաց սրահներում: Տեղակայված է հատուկ նախագծված առանձին կառույցում: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների հաջորդական դասավորությամբ

(Հավ. 3.9): Թանգարանի երկիարկանի շենքը (ճարտ.)՝ Ս. Քալաշյան, Լ. Մկրտչյան, Ա. Թարխանյան, քանդակագործ՝ Ֆ. Առաքելյան, գեղ. մշակումը՝ <. Քոչար) կառուցված է բարձունքի մի կողմում՝ չեզոքացնելու համար Հուշահամալիրի խիստ ազդեցիկ տպավորությունը: Տանիքը հարթ է՝ երեսպատված բետոնե սալիկներով: Թանգարանի և հարկը ստորգետնյա է, այստեղ գործում են վարչական, ինժեներա-տեխնիկական ծառայությունները, ինչպես նաև 170 հոգու համար նախատեսված Կոմիտասի անվան դահլիճը: Այստեղ են տեղակայված նաև գիտական ու թանգարանային արժեքների պահոցները, գրադարանը, ընթերցասրահը: Թանգարանային ցուցադրությունը տեղակայված է II հարկում՝ ընդգրկելով մոտ 1000քմ տարածք:

Այցելուներն իջնում են թանգարանի ստորին հարկերը, որտեղ զուսաճարտարապետությունը, ծայնային և վիզուալ էֆեկտները զուգակցված են իրական պատմական փաստաթղթերի ու լուսանկարների հետ: Հաջորդ սրահը ներկայացնում է վերածննդի երկար ու դժվարին ճանապարհը: Թանգարանի վերջին սրահը հին հայկական շինություններին բնորոշ բացօթյա ներքին բակն է: Կիսաշրջանաձև, 12 հավասար հատվածների բաժանված բազալտե պատի վրա փորագրված են օտարերկրացի, ժամանակի ակնառու պետական գործիչների, դիվանագետների, գիտնականների, գրողների՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտող խոսքերը:

Թանգարանում ստեղծվել են բացառիկ պայմաններ ֆոնդային միավորների պահպանության համար, արդիականացվել են տեխնիկական միջոցները: Բավարար վիճակում է: Շարունակական, հաջողված արդիականացման փուլում է:

### **1.5. Եկեղեցական թանգարաններ (4);(Հավ. 5.11)**

Այս խմբում ներառվում են Մայր Տաճարի չորս թանգարանները:

**1. Ալեք և Մարի Մանուկյան Գանձատունը**(ք. Էջմիածին, Մայր Աթոռ, Հավ.10.13) պատմամշակութային ժառանգություն է: Մայր Աթոռի տարածքում ամենամեծ և ամենանոր թանգարանային կառույցն է (ճարտ.)՝ Բ.Արզումանյան): Պարունակում է

դասական հայ ճարտարապետության նոր և յուրահատուկ գծեր: Երկիարկանի կառուցում են գտնվում ոչ միայն հայ եկեղեցու թանգարանային նմուշները, այլև Գարեգին I կաթողիկոսի անունը կրող գրադարանը:

Թանգարանը տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, հաջորդական դասավորությամբ 3 սրահներում(Հավ. 3.10): Բավարար վիճակում է: Ունի շարունակական արդիականացման անհրաժեշտություն՝ յուրահատուկ չափանիշների պահպանմամբ:

**2. Խրիմյանի անունը կրող թանգարանը** (Հավ. 10.14) գտնվում է Հին Վեհարանի հարավ-արևմտյան հատվածում: Կառուցվել է Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի կողմից 1896թ., իբրև գործող վեհարան է ծառայել 20 կաթողիկոսների համար: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ շենքը հիմնովին նորոգվեց և ստացավ հիմնադիր Հայրապետի անունը: Հին Վեհարանի երկրորդ հարկում է գտնվում ընդունարանը, գահասրահը՝ Ծաղկյա դահլիճը, կաթողիկոսի պաշտոնական գրասենյակը, կաթողիկոսական բնակարանը, սեղանատունը և օժանդակ այլ սենյակներ: Տեղակայված է այլ նշանակության կառուցի՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ (Հավ. 3.10) :Խրիմյան թանգարանն այժմ վերանորոգման փուլում է, վիճակը բավարար է: Ունի շարունակական արդիականացման անհրաժեշտություն:

**3. Վեհարանի թանգարանը** (Հավ. 10.14) գտնվում է հայրապետական նստավայրի վերևի հարկում: Շենքը երկիարկանի է, քարաշեն (ճարտ.՝ Պ. Զոհրաբյան): Այստեղ են գտնվում Կաթողիկոսության վարչական գրասենյակները, Հայրապետի բնակարանը, ընդունարանն ու թանգարանը (Հավ. 3.10): Բավարար վիճակում է: Կա շարունակական արդիականացման անհրաժեշտություն:

**4. Մայր Տաճարի թանգարանը** (Հավ. 10.14) գործող ամենահին թանգարանն է Հայաստանում [1, Էջ 50]: Գտնվում է տաճարի հարավ-արևելյան մասում: Շինությունը ձգվում է Մայր Տաճարի ավագ խորանի ողջ լայնությամբ՝ հարավային և արևելյան կողմերով: Մինչ թանգարանի կառուցումը ավանդական սրբազն մասունքները պահպել են բեմի հետևում գտնվող Մայր Տաճարի սրահներում և արևելյան պահոցներում: Դրանց դասավորվածությունը դժվարացնում էր այդ իրերի ցուցադրությունը: Իսկ թանգարանի կառուցումը հնարավորություն տվեց նմուշների ցուցադրության համար նոր պահարաններ ավելացնել և հարմար տեղ հատկացնել ավելի մեծ իրերի համար: Այս վայրը նաև վկայում է տաճարի բազմաշերտ կառուցվածքի մասին և այցելուներին հնարավորություն է տալիս տեսնելու, թե ինչպես են ժամանակի ընթացքում փոխվել Տաճարի շերտերը՝ իրենց գույնով ու կառուցվածքով: Տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ (Հավ. 3.10): Վիճակը բավարար է: Ունի շարունակական արդիականացման անհրաժեշտություն:

#### **1.6. Բուհական թանգարաններ (10); (Հավ. 5.12 - 5.14)**

**1. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պատմության թանգարանը**(Սայաթ-Նովայի 1ա, Հավ. 10.14) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորվածությամբ 2 սրահներում (Հավ. 3.10): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

**2. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Հայաստանի բժշկության պատմության թանգարանը**(Երևան, Կորյուն 2, Հավ. 10.15)

տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորվածությամբ (Հավ. 3.10): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

**3. Վ.Արժունու անվ. մարդու անատոմիայի թանգարանը** (Երևան,Կորյունի 2, Հավ. 10.15) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորվածությամբ(Հավ. 3.10): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

**4. Երևանի պետական համալսարանի պատմության թանգարանը**(Երևան, Ա.Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան, կենտրոնական մասնաշենք 7-րդ հարկ, Հավ. 10.15) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական՝ հաջորդական դասավորվածությամբ 2 սրահներում (Հավ. 3.11): Ցուցադրությունը կազմված է 2 բաժնից՝ համալսարանի պատմության և հնագիտության: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

**5. Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանը** (Երևան, Տիգրան Մեծի 17, Հավ. 10.15) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորվածությամբ 4 սրահներում (Հավ. 3.11): Թանգարանը

զբաղեցնում է 248 մ<sup>2</sup> տարածք: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**6. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պատմության թանգարանը** (Երևան, Տերյան 74, ՀԱԱՀ, I մասնաշենք, 422 սենյակ,Հավ. 10.16) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորվածությամբ (Հավ. 3.12): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

**7. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի անատոմիական գիտա-ուսումնական թանգարանը** (Երևան,Կորյուն 17, ՀԱԱՀ IV մասնաշենք,Հավ. 10.16) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական՝ սրահների հաջորդական դասավորվածությամբ (Հավ. 3.12): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

**8. Վ. Բրյուսովի անվան թանգարանը** (Երևան, Թումանյան 42, Հավ. 10.16) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորվածությամբ (Հավ. 3.12): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

**9. Ֆիզիկական կոլտուրայի հայկական պետական ինստիտուտի պատմության թանգարանը**(Երևան, ԱլեքՄանուկյան 11, Հավ.10.16) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված

նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորվածությամբ (Հավ. 3.12): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

**10.Վ.Սարգայանիանվ.** **Ռազմական ինստիտուտի թանգարանը** (Երևան, Նոր Նորքի 6-րդ միկրոշրջան, Շոպրոնի 77, Հավ. 10.16) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորվածությամբ (Հավ. 3.12): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք, ժամանակակից թանգարանային դիզայնի չափորոշիչներով ձևավորման անհրաժեշտություն:

### **1.7. Հուշային թանգարաններ( 8); (Հավ. 5.14-5.15)**

Ճարտարապետական տեսանկյունից, հուշային բնույթի թանգարանները՝ անկախ ուղղվածությունից, շատ ընդհանրություններ ունեն: Նախագծման տեսանկյունից դրանք բաժանվում են.

- մեմորիալ միջավայրում պահպանվող կառույցների,
- ցուցադրանքը լրացուցիչ սրահներով ընդարձակող կառույցների,
- թանգարանների նոր շենքերի

Հուշային թանգարանների տիպաբանությունը ընդգրկում է թանգարան-հուշարձան, հուշային կառույցների համալիր, հուշարձանի և ցուցադրական կառույցների միասնական համալիր, դիորամաներ, համայնապատկերներ [69]:

#### **1.7.1 Անվանական /5/**

**1. Կ. Դեմիրճյանի թանգարանը** (Երևան, Ղ.Փարպեցի 7, Հավ. 10.16) տեղակայված է առանձին կառույցում, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական

դասավորությամբ երկու ցուցարարաններում: Թանգարանն ունի քաղաքական գրականության գրադարան, նիստերի դահլիճ (Հավ. 3.12): Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Թանգարանի ընդհանուր մակերեսը 299մ<sup>2</sup>, որից ցուցադրական՝ 126.5 մ<sup>2</sup>: Բավարար վիճակում է: Ունի արդիականացման անհրաժեշտություն:

**2. Ֆիդայական շարժման «Զորավար Անդրանիկ» թանգարանը** (Երևան, Կաշեգործների 233/1, Հավ. 10.17) տեղակայված է առանձին երկիարկանի կառույցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ դասավորությամբ 2 սրահներում(Հավ. 3.12): Բավարար վիճակում է, ունի արդիականացման անհրաժեշտություն:

**3. Մուշեղ Գալշոյանի տուն-թանգարանը**(գ. Կաթնաղբյուր, Հավ. 10.17) տեղակայված է առանձին, հատուկ նախագծված երկիարկան կառույցում: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ դասավորությամբ(Հավ. 3.12): Բավարար վիճակում է, ունի ընթացիկ արդիականացման անհրաժեշտություն:

**4. Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանը** (Նոր-Նորք համայնքի I զանգված, Ֆ. Նանսենի4/4, Հավ.10.17) տեղակայված է հատուկ նախագծված առանձին կառույցում, (ճարտ.՝ Ա. Սոխիկյան): Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ դասավորությամբ: Բավարար վիճակում է, ունի ընթացիկ արդիականացման անհրաժեշտություն:

**5. Գևորգ Չառչի տուն-թանգարանը** (գ. Աշնակ, Հավ. 10.17) տեղակայված է հատուկ նախագծված առանձին կառույցում (ճարտ.՝ Ռ. Իսրայելյան): Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման անհրաժեշտություն:

### **1.7.2 Տուն-թանգարան /3/**

**1. Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանը** (գ.Արարատ, Գ.Նժդեհի 7, Հավ. 10.18) տեղակայված է հատուկ նախագծված առանձին կառույցում: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների՝ հորիզոնական, հաջորդական դասավորությամբ: Թանգարանը բաղկացած է 2 սրահից՝ ձախակողմյան և աջակողմյան (Հավ. 3.12): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման անհրաժեշտություն:

**2. Միկոյան եղբայրների թանգարանը**(գ. Սանահին, Հավ. 10.18) տեղակայված է առանձին երկիարկանի կառույցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ դասավորությամբ (Հավ. 3.12): Ցուցադրությունը սկսվում է թանգարանի բակից: Ոչ բարվոք վիճակում է: Ունի ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով կապիտալ վերակառուցման անհրաժեշտություն: Գտնվում է վերանորոգման փուլում:

**3. Ստեփանավանի մշակույթի կենտրոն Ստեփան Շահումյանի տուն-թանգարանը** (ք. Ստեփանավան, Գ.Նժդեհի 2, Հավ.10.18) պատմամշակութայինժ առանգություն է: Հատուկ նախագծված, մի քանի ծավալներով երկիարկանի համակառույց է: Ներկայացվել է մրցանակի: Տեղակայված է այլ նշանակության կառույցի՝ Շահումյանի ծննդյան 100-ամյակի առթիվ կառուցված հուշահամալիրի կազմում, որն էլ իր մեջ ներառում է նաև տուն-թանգարանը: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է, սրահների բնեուացված դասավորությամբ (Հավ. 3.13): Ունի կապիտալ վերանորոգման, ջերմախոնավային, օդափոխության, անվտանգության նոր համակարգերի անհրաժեշտություն:

## **2. << Արվեստի թանգարաններ (53) (Հավ. 6.1 - 6.14 )**

### **2.1 Թանգարան /21/(Հավ. 6.1 - 6.5)**

**1. Հայաստանի ազգային պատկերասրահը** (Երևան,Արամի1, Հավ. 10.19) գրադարձնում է Աբովյանի փողոցի արական գիմնազիայի համար նախատեսված երկիարկանի տուֆակերտ շենքը (ճարտ.՝ Վ. Օ. Սիմոնսոն), իսկ Նալբանդյան

փողոցի մասնաշենքի 4 հարկերում տեղակայվում են ֆոնդապահոցները, վերականգնման արվեստանոցը, գիտական բաժինները, հաշվառման և պահպանության բաժինը: Տեղակայված է առանձին, 9 հարկանի կառույցում՝ թանգարանների շենքերի համալիրում, իրականացված է հատուկ նախագծմամբ:Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահներիուղաձիգ, բնեուացված դասավորությամբ (Հավ. 3.13):Որպես թերություն նշվում է ցուցադրական և ֆոնդապահոցների տարածքների ոչ բավարար լինելը, ջերմախոնավային, անվտանգության, հակարդեհային արդիական համակարգերի բացակայությունը: Ունի առանձնացված, նորակառուց շենքի անհրաժեշտություն:

**2. Էջմիածնի պատկերասրահ՝ Խորեն Տեր-Հարությանի թանգարանը** (ք.Էջմիածին, Արարատյան 3, Հավ. 10.19) տեղակայված է առանձին երկիհարկանի կառույցում՝ Էջմիածնի նախկին կինոթատրոնի շենքում, հատուկ նախագծմամբ հարմարեցված, վերակառուցված: Թանգարանը զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների հորիզոնական, հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.14): Որպես թերություն նշվում է ցուցադրական անբավարար տարածքը: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**3. Մարտունու պատկերասրահը** (Մարտունի, Շահումյան 6, Հավ. 10.19) տեղակայված է առանձին երկիհարկանի կառույցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը՝ սրահների ուղաձիգ դասավորությամբ (Հավ. 3.14): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**4. Ալավերդու պատկերասրահը** (Ալավերդի, Կախոյան 7, Հավելված 10.19) տեղակայված է առանձին, միահարկ կառույցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ: Որպես թերություն նշվում է ցուցադրական

անբավարար տարածքը: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**5. Եղեգնաձորի պատկերասրահը** (Եղեգնաձոր, Մոմիկի 1, Հավ. 10.19)

տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների հորիզոնական դասավորությամբ(Հավ. 3.14): Մասնաճյուղը վերանորոգվել է, ցուցասրահները համապատասխանում են արդի ցուցահանդեսային պահանջներին: Որպես թերություն նշվում է ցուցադրական անբավարար տարածքը: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**6. Հրազդանի պատկերասրահը** (Հրազդան, Սպանդարյան 2, Հավ. 10.19)

տեղակայված է այլ նշանակության, երկիարկանի կառուցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը՝ սրահների ուղղաձիգ, բևեռացված դասավորությամբ: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**7. Սիսիանի պատկերասրահը** (Սիսիան, Սիսակյան 39, Հավ.10.20) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.14): Որպես թերություն նշվում է ցուցադրական անբավարար տարածքը: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**8. Ջերմուկի պատկերասրահը** (Ջարենցի 1, Հավ. 10.20) տեղակայված է առանձին կառուցում՝ նախկին իյուրանոցի շենքում, հատուկ նախագծմամբ հարմարեցված, վերակառուցված: Զբաղեցնում է երկու հարկաբաժին: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը՝ սրահների ուղղաձիգ դասավորությամբ(Հավ. 3.14): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**9. Գավառի Հ.Բունիաթյանի անվ. պատկերասրահը** (Գավառ, Զորավար Անդրանիկի 5, Հավ. 10.20) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում,

վարձակալված: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ: Չունի սեփական ցուցադրական տարածք: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**10. Ժամանակակից արվեստի թանգարանը** (Երևան, Մաշտոցի 7, Հավ. 10.20) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Զբաղեցնում է երկու հարկաբաժին, ընդհանուր մակերեսը՝ 1104 մ<sup>2</sup>: Ցուցադրությունը սկսվում է նախասրահից, կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ՝ 541 մ<sup>2</sup> մակերեսով ցուցասրահում: II հարկի ցուցասրահի մակերեսը՝ 244 մ<sup>2</sup> է, ֆոնդադարանը՝ 126,84 մ<sup>2</sup>, վարչական մասը՝ 106 մ<sup>2</sup> (Հավ. 3.14): Որպես թերություն նշվում է ցուցադրական, ֆոնդապահոցների ոչ բավարար տարածքները, ջերմախոնավային, անվտանգության, հակահրդեհային արդիական համակարգերի բացակայությունը: Ունի կապիտալ, ժամանակակից տեխ. լուծումներով վերակառուցման անհրաժեշտություն:

**11. Վանաձորի կերպարվեստի թանգարանը** (ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 52) տեղակայված է հատուկ նախագծված, առանձին, եռահարկ կառուցում: Ընդհանուր մակերեսը կազմում է 1500 մ<sup>2</sup>: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ դասավորությամբ 3 սրահներում (Հավ. 3.15): Բավարար վիճակում է: Ունի ժամանակակից, տեխ. լուծումներով վերակառուցման և արդիականացման անհրաժեշտություն:

**12. Ռուսական արվեստի թանգարանը** (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու) (Երևան, Խահակյան 38, Հավ. 10.20) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին՝ անտրեսուլով: Ցուցադրությունը կազմակերպված է բևեռացված դասավորությամբ՝ 7 սրահներում (Հավ. 3.15): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**13. Գեղագիտության ազգային կենտրոն. Մանկական ստեղծագործության թանգարանը** (Երևան, Աբովյան 13, Հավ. 10.20) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ դասավորությամբ (Հավ. 3.15): Զբաղեցնում է երկու հարկաբաժին: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**14. Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի Երևանի ժողովրդական արվեստի թանգարանը**(Երևան, Աբովյան 64, Հավ. 10.21) տեղակայված է առանձին կառույցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Զբաղեցնում է երկու հարկաբաժին, ունի նաև կիսանկուլ: Ընդհանուր մակերեսը՝ 775մ<sup>2</sup>: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ, բևեռացված դասավորությամբ 6 սրահներում՝ 574.6մ<sup>2</sup>: Յուրաքանչյուր հարկում գործում է 3 ցուցասրահ, յուր.<sup>1</sup> 287,3 մ<sup>2</sup>: Ի հարկի երկու ցուցասրահներում ներկայացված է հայկական գորգարվեստը: Կենտրոնական սրահը ծառայում է նաև որպես դահլիճ տարաբնույթ միջոցառումների իրականացման համար, միաժամանակ ներկայացնում է հայկական ավանդական բնակարանի՝ գլխատան վերարտադրություն (Հավ. 3.15): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**15. Դիլիջանի ժողովրդական արվեստի թանգարանի** (ք. Դիլիջան, Գետափնյա 1, Հավ. 10.21) շենքը քաղաքի ամենահին, XIX դ. շինություններից է: Տեղակայված է առանձին, երկհարկանի կառույցում, հատուկ հատակագծմամբ հարմարեցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ դասավորությամբ՝ 9 սրահներում (Հավ. 3.15): Որպես թերություն նշվում է ցուցադրական, ֆոնդապահոցների ոչ բավարար տարածքները, ջերմախոնավային, անվտանգության, հակահրդեհային արդիական համակարգերի բացակայությունը: Ունի կապիտալ,

ժամանակակից տեխ. լուծումներով վերակառուցման անհրաժեշտություն:

**16. Փայտարվեստի թանգարանը** (Երևան, Պարոնյան 2, 4, Հավ. 10.21)

տեղակայված է այլ նշանակության 2 կառույցների կազմում, հարմարեցված է հատուկ հատակագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ընդհանուր մակերեսը 268մ<sup>2</sup> է: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների բնեոացված դասավորությամբ, զբաղեցնում է 230մ<sup>2</sup> տարածք: Այն պայմանականորեն բաժանվում է երեք մասի(Հավ. 3.16): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**17. Միջին Արևելքի թանգարանը** (Մարկոս և Սաբրինա Գրիգորյանների հավաքածու) (Երևան, Արամի 1, Հավ. 10.22) տեղակայված է այլ նշանակության կառույցի՝ Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին՝ 256մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորվածությամբ 4 սրահներում(Հավ. 3.16): Թանգարանն ունի հարուստ գրադարան և տեսադարան: Բավարար վիճակում է: Ունի առանձնացված շենքի անհրաժեշտություն: Արդիականացվել է 2015թ.:

**18. Պավլոս Բորյոյանի անվան տիկնիկային արվեստի թանգարանը**(Երևան, Սայաթ-Նովա 4, Հավ. 10.22) տեղակայված է այլ նշանակության կառույցի՝ Երևանի տիկնիկային թատրոնի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ մեկ սրահում (Հավ. 3.17): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**19. Գաֆէսճեան արվեստի կենտրոնը** («Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամ) (Երևան, Թամանյան 10, Հավ. 10.22) տեղակայված է այլ նշանակության հինգ հարկանի կառույցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հատուկ նախագծմամբ (ճարտ՝ Զ. Շորոսյան, Դ. Հոթսըն, 2009): Կենտրոնաձիգ է,

ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ, բնեռացված դասավորությամբ 6 սրահներում և բացօթյա հարթակներում (Հավ. 3.17):

Կենտրոնի որոշ ճարտարապետական մանրամասներից են՝ Կասկադի հիմքից մինչև գագաթ՝ 302 մ; Հիմքից մինչև վերին հարթակ՝ 450 մ; Լայնությունը՝ 50 մ; Զավարտված հատվածի բարձրությունը՝ 78 մ; Վերին հարթակի բարձրությունը՝ 118 մ; Թեքությունը՝  $15^{\circ}$ ; Աստիճանների թիվը՝ 572:

**1. Առաջին սրահը** ներկայացնում է գեղարվեստական ապակեգործության ընտրանի; «Խանջյան» սրահում է գտնվում Գ. Խանջյանի (1926–2000) մոնումենտալ որմնանկարը; «Սասունցի Դավիթ» սրահում է «Հայաստանի համար» մշտական ցուցադրությունը, որը ստեղծել է Յ. Բրիխստովան, ընդգրկում է ավելի քան 100 աշխատանք: «Արծիվ» սրահում ներկայացված է «Կոլեկցիոների ներաշխարհում» մշտական ցուցադրությունը: «Սվարովսկի Բյուրեյյա պալատը» ներկայացնում է Սվարովսկի բյուրեյյա ջահերի՝ աշխարհի ամենախոշոր մասնավոր հավաքածուն: Շարժասանդուղըների սրահում ցուցադրված է Զ. Լ. Գաֆէսճեանի քանդակների ընտրանին (Հավ. 3.17):

Գաֆէսճեան արվեստի կենտրոնը ներկայացնում է նաև բացօթյա տեղադրված աշխատանքներ՝ Գաֆէսճեան քանդակների պարտեզում, Կասկադ համալիրի արտաքին հարթակներում, ինչպես նաև 50-ամյակի հուշահամալիրի հատվածում: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**20. Ե. Զարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանը**(Երևան, Արամի 1, Հավ. 10.23) տեղակայված է առանձին երկհարկանի կառույցում, հարմարեցված է հատուկ նախագծմամբ, թանգարանների շենքերի համալիրում: Կենտրոնաձիգ է, և հարկում տեղակայված է վարչական մասը, II-ում՝ ցուցադրությունը: Թանգարանի ընդհանուր մակերեսը 1915 մ<sup>2</sup> է, որից վարչական մասը զբաղեցնում է 1129 մ<sup>2</sup>: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ՝

հաջորդական դասավորվածությամբ 5 ցուցարահներում՝ 573,7մ<sup>2</sup> մակերեսով։ Առաջին երկուսում ներկայացված է հայ գրականությունը, III-ում՝ թատերարվեստը, IV-ում՝ կինոարվեստը, V-ում՝ երաժշտարվեստը։ Սրահների գունային ձևավորումն ինքնանպատակ չէ։ Գրականության երկու սրահներում իշխում է թանաքագույնը, իսկ թատրոնի և երաժշտարվեստի սրահներում՝ կարմրաշագանակագույնը /թատրոններում և համերգասրահներում առավել ընդունված գույները/ (Հավ. 3.18):Նկուղային հարկն ունի 211,3մ<sup>2</sup> մակերես։

Որպես թերություն նշվում է ցուցադրական, ֆոնդապահոցների ոչ բավարար տարածքները, ջերմախոնավային, անվտանգության, հակարդեհային արդիական համակարգերի բացակայությունը։Արդիականացվել է 2011-2012թթ.: Ունի կապիտալ, ժամանակակից տեխն. լուծումներով վերակառուցման կամ առանձնացված շենքի անհրաժեշտություն։

**21. Գրատպության թանգարանը** (Երևան, Տերյան 72) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված է հատուկ նախագծմամբ (2016): Զբաղեցնում է մեկ հարկաբաժին։ Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորությամբ 3 սրահներում։ Բավարար վիճակում է։ Ունի ընթացիկ արդիականացման կարիք։

## **2.2 Հուշային /30/(Հավ. 6.6 - 6.14 )**

### **2.2.1 Անվանական /7/**

**1. Հովի. Թումանյանի թանգարանը**(Երևան,Մոսկովյան 40, Հավ. 10.23) պատմամշակութային ժառանգություն է (ճարտ.' Գ. Աղաբաբյան): Թումանյանի վերջին՝ թիֆլիսյան բնակարանի կրկնօրինակն է։ 1969 թ. կառուցվում է կից շինություն, որտեղ կազմակերպվում է Թումանյանի կյանքն ու գործունեությունը ներկայացնող մշտական ցուցադրություն։ 1985 թ. I հարկում բացվում է «Վերնատունը», իսկ 1990 թ.' Թումանյանի մահից հետո մշտական ցուցադրության

մեջ ընդգրկվեց նաև ընտանիքի Երևանյան բնակարանի հյուրասենյակը, նույնպես հարկում:

Երևանի կենտրոնում, բարձունքին գտնվող այս թանգարան հասնելու համար հարկավոր է հաղթահարել 54 աստիճան. սա մեծ հայի ապրած կյանքի տարիները խորհրդանշող թիվն է: Տեղակայված է հատուկ նախագծված առանձին, երկհարկանի կառույցում: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ, բնեոացված դասավորությամբ(Հավ. 3.18):Առաջին հարկում տեղակայված են 4 ցուցասրահներ: II հարկի 6 սենյակներում և պատշգամբում ծավալվում է հուշային հատվածը՝ լիովին վերականգնված է աշխատասենյակը, Թիֆլիսից տեղափոխվել է ողջ կահ-կարասին: Ընդհանուր մակերեսը՝  $1394 \text{ м}^2$ , I և II հարկերինը, յուր.՝  $636 \text{ м}^2$ : Առանձին սրահում ներկայացված է <. Թումանյանի անձնական բացառիկ անձնական գրադարանը՝ մոտ 8000 հատորով: II հարկում է գտնվում ժամանակավոր ցուցադրությունների և միջոցառումների սրահը: Ցուցադրության առանձին մաս է կազմում «Զմեռային այգին», որը հատկացված է քանդակի հավաքածուին: Թանգարանն ունի նաև նկուղային հարկ՝  $121,5 \text{ м}^2$  մակերեսով: Բավարար վիճակում է: Ունի ժամանակակից տեխն. լուծումներով վերանորոգման կարիք:

**2. Երվանդ Քոչարի թանգարանը** (Երևան, Մ.Մաշտոց 39/12, Հավ.10.24) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է Մաէստրոյի արվեստանոցի տեղում՝ այլ նշանակության կառույցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Թանգարանին հատկացված մասը միահարկ է՝ անտրեսուլով: Տնօրենի առանձնասենյակը, 6-րդ ցուցասրահն ու գրասենյակը երկրորդ հարկաբաժնում են: Հիմնական կրող պատերը, աստիճանները քարաշեն են: Ունի 2 մուտք՝ գլխավոր և հետնամուտք: Ընդհանուր մակերեսը՝  $249 \text{ м}^2$  է, որից ցուցադրությանը հատկացված է  $147 \text{ м}^2$ , վարչական մաս՝  $22 \text{ м}^2$ , տնտեսական գոտի՝

40մ<sup>2</sup>: Նոյն բնակելի շենքի բակում գտնվում է երկհարկանի պահեստը՝ 40մ<sup>2</sup>, քարե պատերով, օդափոխման 2 փոքր պատուհանով, առանձին մուտքով [8, Եջ 47]: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորությամբ 5 ցուցասրահներում (Հավ. 3.19): Թանգարանի մշտական ցուցադրությունը սկսվում է նախարարից, որտեղ տեղակայված են հանդերձարանը, տոմսարկությունը, հուշանվերային գոտին: 6-րդ ցուցասրահը հատկացված է ֆոնդային հավաքածուին: Որպես թերություն նշվում է ցուցադրական, ֆոնդապահոցների ոչ բավարար տարածքները: Ցուցադրական տարածքի սահմանափակության պատճառով առաջարկված է դիզայներական լուծում՝ առանձնացված պահարանում՝ շարժական վահանակների վրա ներկայացված են քոչարյան ստեղծագործությունների վերատպություններ [57, Եջ 83]: Թանգարանի լիարժեք գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆունկցիոնալ գոտիներից բացակայում են գրադարանը, կինոդասախոսական դահլիճը, կրթական պարապմունքների սենյակները: Ունի ժամանակակից տեխն. լուծումներով վերակառուցման անհրաժեշտություն:

**3. Սերգեյ Փարաջանովի թանգարանը** (Երևան, “Զորագյուղ” ազգագրական թաղամաս, 15, Հավ. 10.24) տեղակայված է հատուկ նախագծված առանձին երկհարկանի կառույցում: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված սրահների ուղղաձիգ դասավորությամբ (Հավ. 3.17): Թանգարանի հուշային հատվածում վերականգնվել են արվեստագետի թիֆլիսյան ու կիւյան բնակարանների հարդարանքի որոշ հատվածներ: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**4. Միեր Աբեղյանի թանգարանը** (Էջմիածին, Կոմիտասիհրապարակ 2, Հավ. 10.24) տեղակայված է այլ նշանակության միահարկ կառույցի կազմում, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական,

սրահների հաջորդական դասավորությամբ (Հավ. 3.19): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ աղիականացման կարիք:

**5. Մինաս Ավետիսյանի թանգարանը** (գ. Զաջուռ, Հավ. 10.24) տեղակայված է հատուկ նախագծված առանձին կառուցում, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների հորիզոնական, հաջորդական դասավորությամբ (Հավ. 3.19): Որպես թերություն նշվում է ֆոնդապահոցների ոչ բավարար տարածքը, անվտանգության, հակահրդեհային արդիական համակարգերի բացակայությունը: Ունի կապիտալ, ժամանակակից տեխն. լուծումներով վերակառուցման անհրաժեշտություն:

**6. Ռուբեն Սևակի թանգարանը** (Էջմիածին, Հավ. 10.24) տեղակայված է այլ նշանակության կառուցի՝ XVIII դարում կառուցված «Ղազարապատ»<sup>12</sup> պատմական շենքի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորությամբ (Հավ. 3.20): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**7. Մարիամ և Երանուի Ասլամազյան քույրերի պատկերասրահը** (ք.Գյումրի, Աբովյան 242, Հավ. 10.25) տեղակայված է այլ նշանակության երկհարկանի կառուցի կազմում, հարմարեցված, անհատական նախագծմամբ: Վերակառուցվել և վերանորոգվել է «Լինսի» հիմնադրամի միջոցներով՝ 2004 թ.: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ դասավորությամբ: Առաջին հարկում ցուցադրվում են Երանուի Ասլամազյանի, իսկ երկրորդ հարկում՝ Մարիամ Ասլամազյանի աշխատանքները (Հավ. 3.20): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ

<sup>12</sup> Մայր Տաճարի հարավային մասով ձգվող երկար շինություն է: Կառուցվել է Կաթողիկո սՂազար Զահկեցու օրոք (1737-1751 թթ.) և կոչվել նրա անունով: Շենքի կառուցման սկզբնական նպատակն է եղել առաջին հարկում տեղավորել և սնել Մայր Աթոռի միարաններին, իսկ երկրորդ հարկում պետք է ապրեին ճեմարանականները և Մայր Աթոռ եկած ուխտագնացները: (<http://armchurch.info/project1/ղազարապատ>)

արդիականացման կարիք:

### **2.2.2 Տուն-թանգարան /24 /**

#### **1.Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանը (ք. Երևան, Նալբանդյան 21, Հավ.10.25)**

Խորհրդային Հայաստանի առաջի բազմաբնակարան շենքերից է, ընդգրկված է Երևանի պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցանկում՝ որպես հանրապետական նշանակության հուշարձան։Հանրապետության առաջին երաժշտական թանգարանն է։ Տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, հարմարեցված, անհատական նախագծմամբ(ճարտ.՝ Ն.Բունիաթյան, 1925-26)։ Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, բևեռացված դասավորության 3 սրահներում՝ թեմատիկ-ժամանակագրական սկզբունքով։ Հիմնական ցուցադրության տարածքը զբաղեցնող երկու սրահներից առաջինում ներկայացված է կոմպոզիտորի կյանքի ուղին, երկրորդում՝ստեղծագործական ուղին(Հավ. 3.20)։ Թանգարանն արդիականացվել է 2012թ.։ Ապահովվել է ժամանակավոր ցուցադրությունների ու միջոցառումների համար տեխնիկական արդի հնարավորություններով կահավորված սրահով /30-40 մարդու նստատեղով/՝ տեղակայվածկիսանկուղային հարկում։ Բավարար վիճակում է։ Ունի ընթացիկ արդիականացման կարիք։

#### **2. Ա. Խաչատրյանի տուն-թանգարանը (Երեւան, Զարոբյան 3, Հավ. 10. 25)**

պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է այն առանձնատանը, որը 1947թ. Ա. Խաչատրյանին նվիրել էր Խորհրդային Հայաստանի կառավարությունը /ճարտ.՝ Մ. Գրիգորյան/։ Ճարտարապետի մահից հետո թանգարանի շենքի նախագծային աշխատանքներն ավարտեց ճարտ. Է. Ալթունյանը։

Տեղակայված է հատուկ նախագծված, առանձին, երկիրկանի կառույցում,։ Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ ուղղությամբ։ Միահարկ առանձնատունը պահպանվել է անփոփոխ, բաղկացած է 5 ընդարձակ սենյակներից, ունի տնամերձ այգի։ Կից, երկիրկանի տուն - թանգարանի շենքը

կառուցվել է այգու տարածքում: Շենքի ճակատային մասում վեր խոյացող հինգ կամարները կամերտոն են հիշեցնում (Հավ. 3.21):

I հարկում հուշատունն է, ֆոնդադարանը, գրադարանը, աշխատասենյակները: Ճեմասրահից ոլորապտույտ աստիճանները տանում են լիհարկ, որտեղ գտնվում են 10 ընդարձակ ցուցասրահները, համերգասրահը և ծայնադարանը: Հիմնանորոգվել է, արդիականացվել է մշտական ցուցադրությունը /ճարտ./՝ Հ. Քոչար, 2008/: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**3. Արմեն Տիգրանյանի տուն-թանգարանը** (Գյումրի, գոյություն ունի միայն փաստաթղթերում): Իրականում այստեղ անօթևան ընտանքիներ են բնակվում: Տեղակայված է հարմարեցված նախագծմամբ առանձին կառույցում: Կենտրոնաձիգ է, սրահների ուղղաձիգ դասավորությամբ: Որպես թերություն նշվում է ցուցադրական, ֆոնդապահոցների ոչ բավարար տարածքների, ջերմախոնավային, անվտանգության, հակարդեհային արդիական համակարգերի բացակայությունը: Վթարային վիճակում է: Ունի կապիտալ, ժամանակակից տեխ. լուծումներով վերակառուցման անհրաժեշտություն:

**4. Ավետիք Խսահակյանի տուն-թանգարանը**(Երևան, Զարոբյան 7, Հավ. 10. 25) պատմամշակութային ժառանգություն է, կառուցված սրբատաշ սև տուֆ քարով (ճարտ./՝ Պ.Մսրյան): Երբ առանձնատունը վերածվում է տուն-թանգարանի, շենքը ենթարկվում է մասնակի փոփոխության. Երկրորդ հարկի հետին մասում կառուցվում են մեծ սրահ և աշխատասենյակներ: Տեղակայված է առանձին երկիարկանի կառույցում, հարմարեցված նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ ուղղությամբ և բաղկացած է 2՝ հուշային, և բանաստեղծի կյանքն ու գրական ժառանգությունը ներկայացնող մշտական մասերից(Հավ. 3.21): Ընդհանուր մակերեսը՝  $401,5\text{m}^2$ , որից I հարկ՝  $195,5\text{m}^2$ , լիհարկ՝  $167,9\text{m}^2$ , նկուղային հարկ՝  $38\text{m}^2$ : Թանգարանի բնական շարունակությունն է

համարվում այգին: Այստեղ տեղադրված է Ռ. Իսրայելյանի նախագծած տուֆակերտ նստարանը, Ն. Նիկողոսյանի կերտած՝ Իսահակյանի բրոնզաձոյլ կիսանդրին: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**5. Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը** (ք.Գյումրի, Վարպետացփող 91, Հավ. 10.25)տեղակայված է բանաստեղծի հայրական տանը՝ առանձին կառուցում պատմամշակութային ժառանգություն հանդիսացող շենքում, հատուկ նախագծմամբ հարմարեցված, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորությամբ (Հավ. 3.21): Բաղկացած է 2 մասից՝ հուշատնից և ժամանակավոր ցուցադրությունների հատվածից: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**6. Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը** (գ.Դսեղ, Հավ.10.26) տեղակայված է բանաստեղծի հայրական տանը, առանձին կառուցում պատմամշակութային ժառանգություն հանդիսացող շենքում, հարմարեցված է հատուկ նախագծմամբ, վերակառուցված: Ընդհանուր մակերեսը՝  $270\text{m}^2$ , որից I հարկ՝  $216 \text{ m}^2$ , II հարկ՝  $54 \text{ m}^2$ : Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ, քսեռացված դասավորությամբ 5 սրահներում, որոնցից 4-ը՝ առ աջ ի ն հարկում են (Հավ. 3.21): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**7. Դ. Դեմիրճյանի տուն-թանգարանը** (Երևան, Աբովյան29, բն. 4,28, Հավ. 10.26) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Ընդհանուր մակերեսը՝  $78 \text{ m}^2$ : Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորությամբ 4 սրահներում(Հավ. 3.21): Ցուցադրությունն ընդգրկում է երեք հուշային սրահ և մեկ ցուցասրահ: 2017թ.-ից վերանորոգման փուլում է:

**8. Ե. Զարենցի տուն-թանգարանը** (Երևան,Մ.Մաշտոց 17,Արամի 6, Հավ. 10.26) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է այլ նշանակության կառուցի

կազմում, հարմարեցված էհատուկ նախագծմամբ, վերակառուցված: Ընդհանուր մակերեսը՝ 626,3մ<sup>2</sup>: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ դասավորության 3 սրահներում(Հավ. 3.22): Վերականգնված է հուշատան մասը: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**9. Խ. Աբովյանի տուն-թանգարանը** (Երևան, Քանաքեռ 2., տուն 4, Հավ. 10.27) տեղակայված է հատուկ նախագծված, առանձին, երկիարկանի, պատմամշակութային ժառանգություն հանդիսացող կառուցում: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների բևեռացված դասավորությամբ(Հավ. 3.22): Հարթ տանիքով միահարկ տունը, բաղկացած երեք սենյակից և մեծ պատշգամբից, շուրջ 200 տարի առաջ կառուցել էր նրա պապը՝ Ապովը: Վերակառուցման ընթացքում ամրացվել են պատերը, վերանորոգվել պատշգամբի փայտե ճաղերն ու բազրիքները, պատուհանների փեղկերը, դռներն ու թռնիրը: Տունը կահավորվել է Ապօվենց հետնորդների մոտ պահպանված և այն ժամանակներին բնորոշ կենցաղային իրերով: Կից տարածքում 1979 թ. կառուցվեց նաև թանգարանի նոր մասնաշենքը (ճարտ.՝ Լ. Սադոյան), որի ծավալն ամբողջությամբ բարձրացված է գետնի մակերեսից՝ խաչատուր Աբովյանի տոհմական բնակարանի վրա: Թանգարանի շենքի հյուսիսային երկիարկանի մասում տեղադրված են ցուցասրահները, դահլիճն ու աշխատասենյակները: 2005 թ. թանգարանը հիմնանորոգվել է, 2010թ. արդիականացվել է ցուցադրությունը: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**10. Պերճ Պոռշյանի տուն-թանգարանը** (ք. Աշտարակ, Պոռշյան 4, Հավ. 10.27) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է երկիարկանի առանձին կառուցում (1990), հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների բևեռացված դասավորությամբ հուշային տանը և դրան կից 3 ցուցասրահներում(Հավ. 3.22): Ընդհանուր մակերեսը՝ 604մ<sup>2</sup>: Թանգարանն ունի

մառան, թոնրատուն: Վերանորոգվել է 2008 թ., նորացվել է նաև ցուցադրությունը: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**11. Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանը** (ք. Էջմիածին, Մ. Խորենացի 2/41, Հավ.10.27) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է բանաստեղծի հայրական տանը: Առանձին կառուցում է, հարմարեցված է անհատական նախագծմամբ, վերակառուցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ դասավորության 6 սրահներում(Հավ. 3.22): Բանաստեղծի անձնական տունը պահպանված է նույնությամբ, միայն արտաքուստ երեսպատված է հայկական տուֆաշերտով: 1.5 հարկանի շենք է՝ 215 մ<sup>2</sup> մակերեսով: Ունի 4 սենյակ, միջանցք, խոհանոց, ընդարձակ պատշգամբ, նկուղներ: Ցուցադրական տարածքը 75 մ<sup>2</sup> է, որի մեջ մտնում են բանաստեղծի հյուրասենյակն և ննջասենյակը: Տուն-թանգարանի ընդհանուր մակերեսը 700 մ<sup>2</sup> է:

**12. Պարույր Սևակի տուն-թանգարանը** (գ. Զանգակատուն, Հավ. 10.28) տեղակայված է առանձին կառուցում, հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Նախատեսված էր բանաստեղծի հայրական տանը կից կառուցել թանգարանային համալիր՝ բաղկացած նախասրահից բացվող ընդարձակ ցուցասրահներից, մատուռ-զանգակատնից, միջոցառումների համար նախատեսված ամֆիթատրոնից և այլն: Համալիրից կառուցվեց միայն նախասրահը, որի ներսում էլ կազմակերպվեց ցուցադրությունը՝ հորիզոնական ուղղությամբ (Հավ. 3.22): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**13. Ստեփան Զոյանի տուն-թանգարանը** (ք. Վանաձոր, Ս. Զոյանի 24, Հավ. 10.28) պատմամշակութային ժառանգություն է, ստեղծված է գրողի՝ 1960-ական թթ. կառուցված առանձնատան հիման վրա (ճարտ.-ր՝ Լ. և Կ. Զորյաններ, 1962-1964): Շենքը վարդագույն տուֆից է: Ուներ նախասրահ, հյուրասենյակ, աշխատասենյակ, ննջարան և կոմունալ հարմարություններ: Կատարվել են շենքի ամրացման և

վերանորոգման աշխատանքներ՝ վերացնելու համար Երկրաշարժի հետևանքները (1990): Երկրաշարժից հետո Վանաձորում գործող միակ գրական թանգարանն է: Հբաղեցնում է 1440 քմ. ընդհանուր տարածք: Տեղակայված է Երկիարկանի առանձին կառույցում, հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ, բնեոացված դասավորության 7 ցուցասրահներում (Հավ.3.23): I հարկում են նախասրահը, Ղարաքիլսայի սրահը, Երրորդ սրահը, աշխատասենյակը: II հարկում գործում է երեք ցուցասրահ, որոնցից հուշային է ննջարանը: Բավարար վիճակում է: Կա ժամանակակից տեխ. լուծումներով վերակառուցման անհրաժեշտություն:

**14. Հովհաննես Շիրազի տուն-թանգարանը** (ք.Գյումրի, Վարպետաց փողոց 101, Հավ. 10.29) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, հատուկ նախագծմամբ հարմարեցված, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ. 3.23): Ընդհանուր մակերեսը՝ 376մ<sup>2</sup>, որից I հարկ՝ 238.18 մ<sup>2</sup>, II հարկ՝ 21.60 մ<sup>2</sup>: Ունի նկուղային հարկ՝ 116.18 մ<sup>2</sup> մակերեսով: Բավարար վիճակում է: Կարիք ունի ժամանակակից տեխ. լուծումներով վերակառուցման:

**15. Ակսել Բակունցի տուն-թանգարանը** (Սյունիք, Հավ.10.29) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է գրողի ապրած տանը՝ առանձին կառույցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է սրահների բնեոացված դասավորությամբ (Հավ.3.24): Թանգարանը բաղկացած է 3 սենյակից, թոնրատնից, բաց պատշգամբից, նկուղից: Ունի այգի: Ընդհանուր մակերեսը՝ 0,186 հա: Թանգարանի մակերեսը՝ 199.6մ<sup>2</sup>, որից I հարկ՝ 152,2 մ<sup>2</sup>, II հարկ՝ 27 մ<sup>2</sup>, կիսանկուղ՝ 20,4 մ<sup>2</sup>: Արդիականացվել է 2013 թ.: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

## **16. Սերո Խանզադյանի տուն-թանգարանը (Գորիս, Արգումանյան 32, Հավ.10.29)**

տեղակայված է այլ նշանակության առանձին, երկհարկանի կառուցում, հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ, բևեռացված դասավորությամբ ցուցասրահներում (Հավ.3.24): Վերանորոգվել է սենյակներից մեկը, որտեղ հավաքվել և պահպանվում են գրողի իրերը, գրքերը, մասունքները, մինչև շենքի վերջնական վերականգնումը: Թանգարանի մակերեսը՝  $295,1\text{m}^2$ , որից I հարկ՝  $148,6 \text{ m}^2$ , II հարկ՝  $146,5 \text{ m}^2$ : Անբավարար վիճակում է: Ունի կապիտալ, ժամանակակից տեխ. լուծումներով վերակառուցման կարիք:

## **17. Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանը (Երևան, Բաղրամյանանցուղի 1, 2-րդ մուտք, 4-րդ հարկ, բն.26, Հավ. 10.29) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, բանաստեղծությունը ապրած տանը, հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հոիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորությամբ: 2008թ. ամռանը ցուցասրահի է վերածվել 13մ երկարությամբ տնտեսական պատշգամբը: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:**

## **18. Մ. Սարյանի տուն-թանգարանը (Երևան, Սարյան 3, Հավ. 10.30)**

պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է առանձին կառուցում՝ հարմարեցված է հատուկ նախագծմամբ, վերակառուցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների՝ ուղղաձիգ, բևեռացված դասավորությամբ: Թանգարանի եռահարկ կառուցը՝ պատկերասրահը, կցվել է նկարչի ապրած երկհարկանի առանձնատանը, որը 1932 թ.կառուցվել էր պետության կողմից: Մշտական ցուցադրությունը ներկայացված էր թանգարանի երեք հարկերում՝ ժամանակագրական կարգով: Թանգարանի ընդհանուր մակերեսը  $790,8 \text{ m}^2$  էր, որից՝ I հարկ՝  $306 \text{ m}^2$ , II հարկ՝  $290,4 \text{ m}^2$ , III հարկ՝  $176,9 \text{ m}^2$ , նկուղային հարկ՝  $17,5 \text{ m}^2$ (ճարտ. Մ.

Գրիգորյան, 1967):

Կապիտալ վերանորոգումից հետո վերաբացվել է 2016թ. նոյեմբերի 8-ին, ավելացված մեկ հարկով<sup>13</sup>: Այժմ թանգարանն ունի ընդարձակված ցուցադրություն՝ 445,2 մ<sup>2</sup>, որից՝ I հարկի ցուցադրական տարածքը՝ 171,7 մ<sup>2</sup> /հուշային մասը՝ 116,7 մ<sup>2</sup>/, II հարկի ցուցասրահները՝ 176,4 մ<sup>2</sup>, III հարկինը՝ 97,1 մ<sup>2</sup>: Ֆոնդադարանը՝ 36,9 մ<sup>2</sup>(Հավ.3.25): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**19. Գևորգ Գրիգորյանի (Զիոտտո) թանգարան-արվեստանոցը** (Երևան, Մաշտոց 45ա, Հավ. 10.30) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ դասավորության սրահներում(Հավ.3.24): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**20. Հակոբ Կոջոյանի և Արա Սարգսյանի տուն-թանգարանը**( Երևան, Պուշկինի 70, Հավ. 10.30) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է առանձին կառույցում՝ հատուկ նախագծմամբ հարմարեցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ դասավորության սրահներում: Շենքի առաջին հարկը հատկացված է Ա. Սարգսյանին, իսկ երկրորդ հարկում ներկայացված է Հ. Կոջոյանի ստեղծագործությունը(Հավ.3.24): Շենքը վերջին անգամ նորոգվել է 1970-ականներին: Անբավարար վիճակում է: Ունի կապիտալ, ժամանակակից տեխ. լուծումներով վերակառուցման կարիք:

**21. Մերգեյ Մերկուրովի տուն-թանգարանը** (Գյումրի, Հաղթանակի 47, Հավ. 10.30) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է քանդակագործի հայրական տանը՝ մեկհարկանի առանձին կառույցում, հարմարեցված է հատուկ

<sup>13</sup> Վերանորոգման արդյունքների նկարագրությունը տրված է՝ Գլուխ 3, էջ 128-129:

նախագծմամբ, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորությամբ՝ նախասրահ, արվեստանոց, քանդակների, դիմակների սրահներ (Հավ.3.26): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**22. Հարություն Կալենցի թանգարանը** (Երևան, Հ.Կալենց 18, Հավ.10.31) տեղակայված է առանձին, երկհարկանի կառույցում՝ Ա. և Հ. Կալենցների տուն-արվեստանոցի հիման վրա, հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ դասավորությամբ: I հարկում ներկայացված է Հ.Կալենցի, II-ում՝ Ա. Կալենցի արվեստը (Հավ.3.26): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**23. Մեեր Մկրտչյանի թանգարանը** (ք.Գյումրի, Ռուսավելի 30, Հավ. 10.31) պատմամշակութային ժառանգություն է, տեղակայված է այլ նշանակության, երկհարկանի կառույցի կազմում, հարմարեցված է անհատական նախագծմամբ, վերակառուցված: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ դասավորությամբ (Հավ.3.26): I հարկում տեղակայված է փոքրիկ կինոսրահ, որտեղ կազմակերպվում են նաև դասընթացներև այլ միջոցառումներ: II հարկում հուշային սենյակն է՝ ցուցադրվում են թատերական հագուստների նմուշներ և կինոնկարներին վերաբերվող նյութեր: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

### **2.3. Թանգարան - ինստիտուտ (2)**

**1. Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը** (Երևան, Կառավարական տուն 3, Հավ. 10.31) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, հարմարեցված է հատուկ նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Թանգարանը հիմնական ցուցադրություն կազմակերպելու տարածքը չունենալու պատճառով իր միակ ցուցասրահում

կազմակերպում է թեմատիկ ժամանակավոր ցուցադրություններ(Հավ.3.26): II սրահը ծառայում է որպես գրադարան և դահլիճ: Ունի տարածքի կազմակերպման խնդիր, ինչպես նաև ճարտարապետական լուծումներով արդիականացման անհրաժեշտություն:

**2.Կոմիտասի թանգարան-ինստիտուտ** (Երևան, Արշակունյաց 28, Հավ. 10.31):  
Կոմիտասի անվան զբոսայգում գտնվող նախկին մշակույթի պալատի՝ (ճարտ. Կ. Հակոբյան, 1950) հիման վրա կառուցվել է թանգարան-ինստիտուտի նոր շենքը (ճարտ. Ա. Մեսչյան, 2015): Արդյունքում թանգարանը տեղակայված է հատուկ նախագծված առանձին, երկիրականի կառուցում, այլ նշանակության կառույցի հետ համակցությամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ: Թանգարանի ընդհանուր մակերեսը կազմում է 3457մ<sup>2</sup>, որից I հարկի տարածքը՝ 1590մ<sup>2</sup>, II հարկինը՝ 1180մ<sup>2</sup>, նկուղը զբաղեցնում է 475մ<sup>2</sup>, տանիքը՝ 212մ<sup>2</sup>: Հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով, ունի համերգասրահ, մշտական և ժամանակավոր ցուցադրություններ: Այստեղ գործում են գիտահետազոտական կենտրոն, համերգային դահլիճ, երաժշտական ստուդիա, գրադարան (Հավ.3.27): Բավարար վիճակում է: Շարունակական, հաջողված արդիականացման փուլում է:

### **3. << գիտատեխնիկական թանգարաններ (6); (Հավ. 7.1 - 7.2)**

Հաշվի առնելով վառ արտահայտված որոշակի առանձնահատկությունները, գիտության և տեխնիկայի թանգարաններն իրենց ճարտարապետությամբ խիստ առանձնանում են: Ի տարբերություն այլ թանգարանների, անհրաժեշտ են ճարտարապետական կազմակերպման հատուկ հնարավորություններ ցուցադրելու համար նրանցում տեղակայված տեխնիկական միջոցները գործնական կիրառության ընթացքում, ներկայացնելու դրանց կառուցվածքային և աշխատանքային առանձնահատկությունները:

### **3.1.Թանգարան(4)**

**1. Հայաստանի երկաթուղային թանգարանը** (Երևան, Տիգրան Մեծ 58, Հավ. 10.32) գտնվում է Երևանի երկաթուղային կայարանի շենքում (ճարտ.՝ Է. Տիգրանյան, 1955): Տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է մեկ սրահում(Հավ.3.28): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**2. Գիտության և տեխնիկայի թանգարանը** (Երևան, Հ.Էմինի 123, Հավ. 10.32) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**3. Կապի թանգարանը** (Երևան, Ազատության պող. 24/1, Հավ. 10.32) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ(Հավ.3.28): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**4. «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ** (Երևան, Մաշտոցի 53, Հավ. 10.32), (ճարտ.՝ Մ. Գրիգորյան, 1957): Նոր՝ գիտական մասնաշենքը, կառուցվել է 2011թ., ճարտ.՝ Ա. Մեսյան: Ունի 12000 քմ մակերես, լիարժեքորեն համապատասխանում է արխիվային և թանգարանային արդիական պահանջներին: Մասնաշենքը կատարյալ պայմաններ է ապահովում գիտաշխատողների համար՝ առանձին աշխատասենյակներ, նորագույն տեխնոլոգիաներ, թվայնացված ձեռագրերի սպասարկում: Նորակառուց հսկահամալիրը և Մատենադարանի կոթողայինշենքը կառուցված են Սիսիանի մոխրագույն բազալտից: Ի սկզբանե խնդիր է դրվել, որ

Նորակառուց համալիրի ամենաբարձր կետը հավասար լինի գոյություն ունեցող գլխավոր մասնաշենքի քիվի նիշին: Մաշտոցի պողոտայի կողմից տեսադաշտում շարունակում է գերիշխողլինել Մատենադարանի հիմնական գործող շենքը: Նորակառուցի ներսում ևս, նորագույն լուծումներին զուգահեռ, պահպանվել են հայկական ճարտարապետությանը բնորոշ առանձնահատկությունները: Շինության ներսում միջանցքների անցուղիներին տրվել են կամարաձև լուծումներ, տեղադրվել են զարդանախշերով սյուներ: Ներքին հարդարման աշխատանքների համար օգտագործվել է մարմար ու տրավերտին: Նորակառուց գիտական համալիրն ապահոված է անվտանգության, ջերմախոնավային կայուն ռեժիմի պահպանման, հակահրեհային համակարգերով, բունկերային տիպի պահոցներով: Կառույցի 1 հարկում է գտնվում գրադարանը, II-ում՝ ձեռագրապահոցն է՝ առանձին ընթերցասրահով, վերականգնողական բաժինը, մանրանկարիչների աշխատասենյակները և համակարգչային բաժինը, III հարկում՝ ավելի քան 200 տեղանոց դահլիճն է՝ ապահոված տեսահամակարգով և միաժամանակյա թարգմանության համար նախատեսված խցիկներով: Այս հարկում են արխիվը, ինչպես նաև վարչական կառավարման բաժինը և նոր համալիրը իին՝ կոթողային շենքին կապող մասնահատվածը: IV հարկում են գտնվում Մատենադարանի հիմնադիր տնօրեն՝ Լ. Խաչիկյանի անունը կրող ընթերցասրահը, թվայնացման և կայքեզի սպասարկման բաժինը, ինչպես նաև ժամանակավոր ցուցադրությունների համար նախատեսված ցուցասրահը:

**Մատենադարանի ցուցադրական համալիրը** գտնվում է իին կոթողային շենքում՝ 3300մ<sup>2</sup>, գբաղեցնում է 2 հարկաբաժին, նախկին 1 ցուցասրահի փոխարեն այժմ բաղկացած է 15 ցուցասրահներից, նախատեսված նաև ժամանակավոր և ցուցադրությունների համար, պահպանվել են աշխատասենյակները, լաբորատորիաները և ստրատեգիական պահոցները:

Մատենադարանի ցուցադրության սրահները բաժանված են թեմատիկ սկզբունքով, դրանք են. կենտրոնական ընդհանուր սրահը, միջնադարյան մանրանկարչական դպրոցների ձեռագրերը և միջնադարյան բժշկության սրահը, հնատիպ գրքերի երկու սրահները, արևելյան ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի, նվիրատվությունների, քարտեզների, վիրտուալ սրահները:

Տեղակայված է հատուկ նախագծված առանձին կառուցում: Ցուցադրությունը կազմակերպված է ուղղաձիգ (Հավ.3.28): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

### **3.2 Հուշային՝ տուն-թանգարան/2/**

**1. Օրբելի եղբայրների տուն-թանգարանը** (ք.Ծաղկաձոր, Օրբելիեղբ.12, Հավ.10.33) տեղակայված է առանձին միահարկ կառուցում, հատուկ նախագծմամբ հարմարեցված: Տուն-թանգարանի հիմնական ցուցադրությունը բաղկացած է երկու մասից՝ գիտական և հուշային, կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, երեք սրահների հաջորդական դասավորությամբ(Հավ.3.29): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**2. Նորայր Սիսակյանի տուն-թանգարանի** (Աշտարակ, Ղափանցյանիող.25, Հավ. 10.33) շենքը հիմնադրվել է ԽIXդարի վերջում, պատմամշակութային ժառանգություն է: Վերանորգվելէ 1989 թ.: Թանգարանը տեղակայված է առանձին, երկհարկանի կառուցում, հարմարեցված նախագծմամբ: Կենտրոնաձիգ է, ցուցադրությունը կազմակերպված է սրահների ուղղաձիգ դասավորությամբ(Հավ.3.29): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

### **4. << արդյունաբերական թանգարանները (2) ; (Հավ. 8.1)**

**1.«Նոյ գործարանի» թանգարանը** (Երևան, Ծովակալիսակովի 9, Հավ. 10.33) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ցուցադրությունը

կազմակերպված է հորիզոնական(Հավ.3.29): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**2. Արարատ այցելուների կենտրոնը** (Երևան, Ծովակալ Իսակովի 2, Հավ.10.33) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում՝ որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական, սրահների հաջորդական դասավորությամբ (Հավ.3.29): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

### **5. << Բնագիտական թանգարանները(4) ;(Հավ.9.1)**

**1. Հովի. Կարապետյանի անվ. երկրաբանական թանգարանը** (Երևան, Մարշալ Բաղրամյան 24ա, Հավ. 10.34) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, հարմարեցված նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորվածությամբ 5 սրահներում (Հավ.3.30): Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**2. Կենադանաբանական թանգարանը**(Երևան, Պ. Սևակի 7) տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում որպես բաղադրիչ մաս, հարմարեցված նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, սրահների հաջորդական դասավորվածությամբ: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**3. Հայաստանի բնության պետական թանգարանը** (Երևան, ՏիգրանՄեծ 34, Հավ. 10.34) տեղակայված է առանձին եռահարկ կառույցում, հարմարեցված նախագծմամբ, վերակառուցված: Ցուցադրությունը կազմակերպված է բևեռացված դասավորվածությամբ 4 ցուցասրահներում (Հավ.3.30): Ունի գրադարան, լաբորատորիաներ, արվեստանոցներ: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

**4. «Սևան» Ազգային պարկի բնապահանական թանգարանը** (ք. Սևան, Սայաթ-Նովայի 14, Հավ. 10.34) տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, հարմարեցված նախագծմամբ: Զբաղեցնում է մեկ հարկաբաժին: Ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորվածությամբ երկու՝ մեծ և փոքր սրահներում (Հավ.3.30): Ունի գրադարան, չունի ֆոնդային տարածքներ: Բավարար վիճակում է: Ունի ընթացիկ արդիականացման կարիք:

Հայաստանի 125 թանգարանային շենքերի ճարտարապետական կազմակերպման առանձնահատկությունների համակարգման արդյունքը կարելի է նկարագրել ընդհանրական սխեմայում, ուր ներառված են դրանց ծավալատարածական լուծումները, հարկայնությունը, գործառական կառուցվածքի տեսակները, թանգարանների բնույթն ու տիպը, պատմամշակութային ժառանգության օբյեկտ լինելը, արդիականացմանն ուղղված հնարավոր եղանակները (Հավ.3.31): Համակարգման արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանի 125 թանգարանային շենքերից առանձին կառուցում տեղակայված են 59 թանգարան, որից հատուկ նախագծմամբ իրականացված են 20, հատուկ նախագծմամբ, հարմարեցված՝ 39 թանգարան: Այլ նշանակության կառուցում տեղակայված են 61, մի քանի ծավալով են հանդես գալիս 4 թանգարան, բոլորը՝ հարմարեցված նախագծմամբ: Ուսումնասիրված թանգարաններից 67-ը տեղակայված են միահարկ կառուցներում կամ զբաղեցնում են մեկ հարկաբաժին այլ նշանակության կառուցներում, իսկ 54-ը՝ երկու և ավելի հարկայնության են: Ըստ թանգարանների գործառնական կազմակերպման արդյունքների ուսումնասիրության, 70 թանգարաններում ցուցադրությունը կազմակերպված է հորիզոնական ուղղությամբ, հաջորդական դասավորության սրահներում, 11-ում՝ բևեռացված դասավորության, իսկ 44-ում՝ ուղղաձիգ ուղղությամբ, ուղղաձիգ բևեռացված դասավորության սրահներում:

Պատմամշակութային ժառանգության օբյեկտ են հանդիսանում 42 թանգարան:

## **Եզրակացություն Երկրորդ գլխի**

1.Հաստատվել է, որ Հայաստանի թանգարանների կազմավորման պատմությունը սկսվում է դեռևս մ.թ.ա. VIII դարից, բայց որպես ճարտարապետական օբյեկտներ դրանց հիմնադրումը սկսվել է XIX դարի կեսերից: Թանգարանների հիմնադրումն ու շինարարությունն առավել զարգացում ապրեց Խորհրդային ժամանակաշրջանում՝ հիմնականում հարմարեցված նախագծումներով, բայց այդ տարիներին և ազգային ինքնատիպ ճարտարապետության ոճով թանգարաններ կառուցվեցին:

2. Փաստվել է, որ XX-XXI դարերում առավել կարևորվեց հատուկ նախագծմամբ, առանձին կառուցներում թանգարանների հիմնադրումն ու կառուցումը:

3. Հիմնավորվել է << թանգարանների անհամապատասխանությունը միջազգային չափնիշներին, քանի որ դրանց մեծամասնությունը հիմնվել է խորհրդային ժամանակաշրջանում և ժառանգել ժամանակի գաղափարական, տնտեսվարական և ճարտարապետաշինարարական կարծրատիպերը, իսկ հետխորհրդային տարիներին թանգարանների վերակառուցումը և նորերի հիմնումը ընթացել է տարերայնորեն, առանց միասնական մոտեցման և գիտական հիմնավորման:

4. Պարզվել է, որ.

- թանգարաններ հիմնադրվել և գործում են << բոլոր մարզերում, բայց տոկոսային ամենամեծ խտությամբ դրանք տեղակայված են մայրաքաղաք Երևանում:
- Հայաստանի թանգարանային ցանցը բովանդակում է միջազգայնորեն տարբերակված բոլոր բնույթների և տիպերի թանգարաններ՝ պատմության, արվեստի, գիտության և տեխնիկայի, արդյունաբերական, բնագիտական: Միայն Էկոթանգարաններն են, որ գտնվում են նախնական ձևավորման փուլում:
- գործող 125 թանգարաններից միայն 20-ն են իրականացված հատուկ

նախագծմամբ և տեղակայված են առանձին կառուցներում:

5. Թանգարանային կառուցների ընդհանուր ճարտարապետական վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ ուսումնասիրված թանգարանային շենքերի ոճական առանձնահատկությունները, կոնստրուկտիվ լուծումներն արտացոլում են դրանց ճարտարապետական ձևաստեղծման և զարգացման փուլերը, իսկ գործառնական գոտևորման, ներքին, արտաքին միջավայրերի ձևավորման առումով դրանք ունեն որակի և գրավչության տարբեր մակարդակներ:

6. Բացահայտվել է, որ «Հանգարանների մեծամասնությունը կարիք ունի հատուկ մշակված նախագծային առաջարկներով կապիտալ ձևափոխումների»:

### ԳԼՈՒԽ 3

## **«ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»**

Արդի ժամանակաշրջանում, ինչպես ողջ աշխարհում, Հայաստանում ևս թանգարանները դառնում են պատմամշակութային ժառանգության սկզբնաղբյուրների և դրանց տեղեկատվության շտեմարան, անընդմեջ զարգացող հանրային գիտահետազոտական և գիտամշակութային կենտրոն, ոչ ֆորմալ

կրթության միջավայր: Այսինքն, թանգարանային գործունեությունը ձեռք է բերում ավելի մեծ սոցիալ-մշակութային նշանակություն, աճում է թանգարանների դերը հասարակության կրթական մակարդակի բարձրացման, մշակութային ժառանգության պահպանման և մեկնաբանման, մշակութային իդենտիֆիկացման, ժամանցի կազմակերպման առումով: Թանգարանները գրավիչ գործոն կարող են հանդիսանալ նաև մեր երկրի տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող ոլորտի՝ Մշակութային տուրիզմի ինդուստրիայի զարգացման համար [58, Էջ 708]:

Այսօր նշանակալի պահանջարկ ունի թանգարանների ունիվերսալ գրավչությունը և արդի թանգարանագիտական, մշակութաբանական հայեցակարգերի փոփոխությունները, այցելուի ցուցահանդեսներին և ցուցադրանքին ինտերակտիվ մասնակցության կարևորությունը համապատասխանաբար իրենց արտացոլումը պետք է գտնեն հայաստանյան թանգարանային ճարտարապետության նորարարական մոտեցումներում: Հայաստանի թանգարանների արդիականացմանը, նորերի տարածական կազմակերպմանը կամ նախագծմանն ուղղված ճարտարապետության առաջանդրանքները կազմելուց առաջ նպատակահարմար է իրականացնել որոշակի հետազոտություններ, որոնք հաշվի են առնում.

- Թանգարանների ցուցադրման նպատակառուղղվածությունը, որը կարող է լինել ցուցադրողակենտրոն, նմուշակենտրոն, այցելուակենտրոն
  - թանգարանային գործառույթի սուբյեկտների՝ այցելու-հավաքածու-միջավայր փոխազդեցությունը
  - ցուցադրվող նմուշի ներկայացման խորությունը՝ թռուցիկ, ճանաչողական, ակադեմիկ, ձևը՝ ցուցանակային, վերբալ, վիդեո, դասախոսություն
  - թանգարանի տնտեսվարությունը՝ տոմսերի եկամուտները, միջոցառումների անցկացումը, սրճարանների գոյությունը, հուշանվերային գործունեությունը և այլն:
- Թանգարանային շենքի մշակութային լինելու գործոնը թանգարաններն առավել

գրավիչ է դարձնում արարողակարգային միջոցառումներն այնտեղ անցկացնելու համար: Հետևաբար, Հայաստանում նոր կառուցվող կամ հիմնադրվող թանգարանների համար ընդհանուր ճարտարապետական կազմակերպման պահանջ կարող է դառնալ մեծ մակերեսներով սրահների առկայությունը, ինչպես նաև արդիական է թանգարանային հավելյալ գործառույթներին համապատասխան թանգարանների հանրային տարածքները համակարգել ըստ ներքոնշյալ գոտիների:

**Կրթական՝** լսարաններ, խմբակային պարապմունքների սենյակներ, հանդիպումների, ընդունելությունների, շնորհանդեսների անցկացման տարածքներ և այլն; **Գիտական՝** կարինետներ, հրատարակչական բլոկ; **Մշակութային՝** ցուցադրական տարածքներ, կինոդահիճներ; **Հանգստի՝** կանաչ գոտիներ, ձմեռային այգիներ, հյուրասենյակներ, սրճարաններ; **Տեղեկատվական՝** գովազդային և հուշանվերային բլոկ:

### **3.1 Արդիականացման հիմնախնդիրները և հնարավորությունները.**

Այսօր թանգարանների հասարակական դերի աճն անհնար է առանց ժամանակակից թանգարանային շենքերի կառուցման, արդեն իսկ գոյություն ունեցողների գործառական վերակազմավորման ու արդիականացման, ինչն էլ կարևորագույն խթան կհանդիսանա այցելուներին հրապուրելու գործում:

Հայաստանի 125 թանգարանների ճարտարապետական համալիր ուսումնասիրության արդյունքում առանձնանում են հետևյալ հիմնախնդիրները.

• Թանգարանները, քաղաքաշինական տեսակետից ժառանգելով շահեկան դիրքեր ՀՀ քաղաքների գլխավոր հատակագծերի համատեքստում և գտնվելով վերջիններիս ակտիվ գոտիներում, չեն մասնակցում քաղաքային միջավայրի նորովի զարգացմանը:

• Թանգարանային շենքերի գերակշիռ մասը չունի ցուցադրական և ֆոնդային հավաքածուների պահպանման բավարար տարածքներ:

• Սահմանափակ են սրահների ճկուն փոխակերպման հնարավորությունները:

• Թանգարանային տարածքները չեն բավարում ճարտարապետական

կազմակերպման, գործառական գոտևորման արդի պահանջներին. չկան կրթասենյակների, կինո-դասախոսական դահլիճների, մասնագիտացված հուշանվերային խանութի, սրճարանների, հանգստի և ժամանցի կազմակերպմանը հատկացված հատուկ մակերեսներ:

- Թերի է թանգարանների արտաքին և միջավայրային գոավիչ ձևավորումը:
- Բացակայում են տեխնիկական միջոցների /անհատական համակարգիչներ, հզորսերվերային միավորումներ, փաստաթղթերի, թանգարանային առարկաների վերականգնման, թվայնացման սարքեր/ տեղակայման համար անհրաժեշտ տարածքներ, միկրոֆիլմերի ստեղծման պայմաններ:
- Թանգարանները հագեցած չեն արդի տեխնոլոգիական նորամուծություններով:
- Թանգարանային շենքին առաջադրված, բոլոր յուրահատկությունները հաշվի առնող, անհատական մոտեցմամբ մշակված ճարտարապետական հատուկ նախագծային առաջարկների բացակայություն:
- Բոլոր թանգարներն ունեն ինժեներատեխնիկական արդիական համակարգերի անհրաժեշտություն:

- Հիմնախնդիրներն առավել մասնագիտորեն վերլուծելու համար անհրաժեշտ է.
- Իրականացնել թանգարանային շենքերի տեխնիկական վիճակի լրացուցիչ հետազոտություններ:
  - Արդիականացնել և տեղայնացնել սեյսմագինվածության աստիճանը:
  - Մշակել միջազգային նորմերին համապատասխան տեղայնացված չափորոշիչներ:

Խիստ արդիական է թանգարանային շենքի հողատարածքի ընտրության ճարտարապետական նախագծման փուլում հաշվի առնել սեյսմակայունության չափորոշիչները, հաշվի առնելով Հայաստանի գերակտիվ սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը և երկրաշարժերի պարբերականության վիճակագրությունը:

Հայաստանի 125 թանգարանների ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ թանգարանների հեռանկարային զարգացումը կարող է իրականացվել ներքին վերահատակագծմամբ, շենքի մեծացմամբ կամ ընդարձակմամբ:

Հայաստանի Հանրապետության 125 թանգարանները կարիք ունեն.

✓ Հիմնարար վերանորոգման, արդիական համակարգերի տեղադրման, նոր ճարտարապետական լուծումների - **8**

✓ Նոր շենքերի կառուցման – **5**

✓ Վերակառուցման - **22**

✓ Ընթացիկ, մասնակի արդիականացման – **90**

Բնորոշվել են արդիականացման ներքոհիշյալ հնարավորությունները.

• Թանգարանային շենքերի արդիականացումը ենթադրում է տարբեր մասնագիտական միջոցառումների առանձին կամ համալիր կիրառում, ինչպիսիք են՝

✓ Վերանորոգումը<sup>14</sup>

✓ Վերակառուցումը

✓ Ընդարձակումը

✓ Հարմարեցումը

• Արտադրական շենք-շինությունների վերակառուցման միջոցով նոր թանգարանային տարածքների ստեղծում:

### **3.3. Արդիականացման ընթացիկ իրադրությունը, արդիականացման հայեցակարգային առաջարկներ**

«Հանկախության տարիներին թանգարանները դիմագրավեցին ժամանակի ծանր մարտահրավերներին: 2001-2002թթ.«Լինսի» հիմնադրամի գործունեության շնորհիվ Հայաստանում վերանորոգվել է շուրջ 12 թանգարան՝ շինարարական նոր նյութերի

<sup>14</sup> 2018թ. դրությամբ 5 թանգարան վերանորոգման փուլում են

օգտագործմամբ, լուսավորության, սան-հիգիենիկ համակարգերի տեղադրմամբ: Անկախության 25 տարիների ընթացքում կառուցվել է 6 նոր թանգարանային շենք /Ֆեղասպանության, Կոմիտասի թանգարան-ինստիտուտները, ֆ. Նանսենի, Զորավար Անդրանիկի, Մ. Գալշոյանի թանգարանները, Մատենադարանի նոր մասնաշենքը/, հարմարեցմամբ հիմնադրվել է Գաֆեսճեան արվեստի կենտրոնը, որը չնայած տեղակայված է այլ նշանակության կառուցի կազմում, սակայն բոլոր չափորոշիներով՝ մակերեսների, գործառնական գոտևորման, ինչպես նաև իրականացվելիք գործառույթների մակարդակով լիովին համապատասանում է միջազգային թանգարանային կենտրոն լինելուն:

Արդիականացման միտումներով վերանորոգվել են.

Պ. Պողոսյանի թանգարանը՝ 2008թ..արդիականացվել է թանգարանի մշտական ցուցադրությունը, ինժեներատեխնիկական՝ ազդանշանային, հակահրդեհային, չեռուցման, ջերմախոնավային և լուսավորության համակարգերը:

Արամ Խաչատրյանի թանգարանը՝ 2006-2008թթ. հիմնավերանորոգվել է, ամբողջովին արդիականացվել է թանգարանի մշտական ցուցադրությունը, ինժեներատեխնիկական՝ ազդանշանային, հակահրդեհային, չեռուցման, ջերմախոնավային և լուսավորության համակարգերը: Թանգարանում տեղակայվել են առողջիո, վիդեո համակարգեր:

2011 - 2012թթ. ամբողջովին արդիականացվել է Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի ցուցադրությունը, ինժեներատեխնիկական՝ ազդանշանային, հակահրդեհային, չեռուցման, ջերմախոնավային և լուսավորության համակարգերը: Թանգարանում տեղակայվել են առողջիո համակարգեր(Հավ.3.18):

2013թ. վերանորոգվել է Ա. Բակունցի թանգարանի պատշգամբը, իրականացվել են ներքին հարդարման աշխատանքներ, ծևավորվել է նոր էքսպոզիցիա:

Միջին Արևելքի թանգարանը՝ 2015թ. արդիականացվել է թանգարանի

ցուցադրությունը, ջեռուցման, ջերմախոնավային և լուսավորության համակարգերը (Հավ.3.16)

2016թ. արդիականացվել է Դսեղի Հ. Թումանյանի տուն-թանգարանի ցուցադրությունը (Հավ.3.21), ջեռուցման, ջերմախոնավային և լուսավորության համակարգերը:

2009թ. բացվեց Մատենադարանի նոր մասնաշենքը (ճարտ.' Ա. Մեսչյան),

2015թ.' Կոմիտասի թանգարան-ինստիտուտը (ճարտ.' Ա. Մեսչյան) թանգարանը (Հավ.3.27):

2012-2015թթ. վերակառուցվել, կրկնակի չափով ընդարձակվել ու լիարժեքորեն արդիականացվել է Հայոց ցեղասպանության թանգարանը (ճարտ.' Ս. Քալաշյան):

2016թ. հիմնարար վերանորոգումից հետո վերաբացվեց Մ. Սարյանի թանգարանը՝ ավելացված չորրորդ հարկով: Արդյունքում թանգարանը հնարավորինս համապատասխանեցվել է միջազգային չափորոշչչներին: Ավելացված 4-րդ հարկում տեղակայված է կինոդասախոսական դահլիճը՝  $78,4\text{m}^2$ : Ստեղծվել են նաև կրթական լսարան, սրճարան՝  $51,5\text{m}^2$ , առանձնացված հուշանվերային գոտի՝  $21,4 \text{ m}^2$ : Արդիականացվել են ինժեներատեխնիկական՝ ազդանշանային, հակարդեհային, ջերմախոնավային և լուսավորության համակարգերը: Թանգարանը համալրվել է ժամանակակից տեխնոլոգիական միջոցներով՝ առողջության, տեղակայված են այլ լսողական և վիդեո համակարգեր, ստեղծվել են հենաշարժական խնդիրներ ունեցող այցելուների տեղաշարժն ապահովող հնարավորություններ: Նախկին բաց պատշգամբը վերածվել է գրադարանի: Այժմ բաց է Վարպետի տան բնակելի հատվածը(Հավ.3.25):

Վերանորոգման միջոցով արդիականացման փուլում են.

Դ. Դեմիրճյանի (Հավ.3.21), Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության, Զոտոտոյի, Արա Սարգսյանի և Հ. Կոջոյանի, Միկոյան եղբայրների թանգարանները:

Արդիականացման հայեցակարգային նախագծեր են մշակված «Էրեբունի», «Մեծամոր», «Շենգավիթ», «Կարմիր բլուր» պատմահնագիտական արգելոց-թանգարանների համար:

• Էրեբունի հնավայրի ամենակարևոր հատվածը նրա միջնաբերդն է: Միջնաբերդի պահպանության բարելավումն այսօր հրատապ առաջնահերթություն է: Այս ուղղությամբ առաջարկվում են հետևյալ գործողությունները.

ա) Ամրոցի պատերի փլուզված հատվածների մասնակի վերականգնում և ամրակայում, բ) Խալիի աստծո տաճարի և կից զիկուրատի վերականգնում որմնանկարների տեղադրում, գ) Արգիշտի արքայի պալատի և կից զիկուրատի վերստեղծում և որմնանկարների իրականացում, դ) Կարասային սրահի մի հատվածի վերականգնում, ե) Միջնաբերդի տարածքի բարեկարգում, մոտեցման ուղիների կազմակերպում, Էլեկտրական լուսավորության և ձայնային սարքերի տեղադրում (Հավ. 4. 1):

Այդ ծրագրի իրականացման արդյունքում «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը կդառնա Երկրի հարուստ պատմությունը և ժառանգությունը ներկայացնող մշակութային և զբոսաշրջային կենտրոն /Ծրագրի և նախագծի համակարգող՝ Գ. Գյուրջյան, ճարտ.-ր՝ Ա. Սարգսյան, Հ. Սանամյան /:

• «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարանի վերականգնման և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման առաջարկի նպատակն է ցուցադրել 500-ամյա բնակատեղիի պատմությունը և ժառանգությունը՝ ստեղծելով զբոսաշրջային կենտրոն:

Առաջարկվում է ստեղծել.

❖ Թանգարանային համալիր.

ա) ցուցասրահ, ժամանակավոր ցուցադրությունների սրահ, բ) Կոնֆերանս սրահ-կինոսրահ, գ) Ֆոնդապահոց, պահեստ, դ) գրադարան, ե) գրասենյակ, տոմսերի

վաճառքի կրպակ, զ) տեսաձայնային ինովացիոն սարքավորումներով, ինտերակտիվ քարտեզներով, այլ ցուցադրական և համակարգչային ծրագրերով հագեցվածության ապահովում:

❖ Այցելուների և զբոսաշրջիկների համար սպասարկման ենթակառուցվածքների հատված.

ա) սրճարան՝ փակ և ամառային, որը կիանդիսանա նաև հնագիտականպեղումների հարթակ, թ) հուշանվերների և գրքերի վաճառքի կրպակ, այցելուների լուսանկարահամնման համար համապատասխան միջավայրի ձևավորում, զ) արտաքին լուսավորության ապահովում, դ) անցակետերի ապահովում, ե) տարածքի ցանկապատում:

❖ Էքսկուրսիոն երթուղու մշակում.

ա) Երթուղու ծրագրով անցուղիների վերականգնում, կամուրջների և հարթակների տեղադրում, թ) ժամանակավոր ցուցադրությունների սրահների և տաղավարներիկառուցում՝ գորգագործության և մանածագործության արհեստի ցուցադրությամբ, զ) Երթուղու ծրագրով հնագիտական կառույցների վերականգնում, ամրակայում, դ) հնավայրի ողջ տարածքի կահավորում QR կոդերով, ցուցանակներով, առողջիո-գիդերի համակարգի ներդրում և այլն (Հավ. 4. 2):

Ծրագրի և նախագծի համակարգող՝ Գ. Գյուրջյան, ճարտ.-ր՝ Ա. Սարգսյան, Հ. Սանամյան:

• «Կարմիր բլուր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը ներկայացրել է հնավայրի թանգարանի և զբոսաշրջիկների սպասարկման ենթակառուցվածքների ստեղծման նախագիծ, ըստ որի առաջարկվում է ստեղծել.

ա) թանգարանային համալիր, որը կներառի՝ ցուցասրահ, ժամանակավոր ցուցադրությունների սրահ, ֆոնդապահոց, պահեստ, գրադարան, գրասենյակ, թ) ուրարտական ռազմարվեստի բաց թանգարանի կառուցում՝ կահավորված

ժամանակաշրջանին հարիր, գ) թանգարանի հին շենքի վերակառուցում՝ տնտեսական նպատակներով օգտագործելու համար, դ) տեսաձայնային ինովացիոն սարքավորումներով, ինտերակտիվ քարտեզներով, այլ ցուցադրական և համակարգչային ծրագրերով հազեցվածության ապահովում:

Այցելուների և զբոսաշրջիկների սպասարկման ենթակառուցվածքների հատվածում.

ա) սրճարան՝ փակ և ամառային, որը կարող է հանդիսանալ նաև հնագիտական պեղումների դիտահարթակ, բ) այցելուների համար գինու և գարեջրի համտեսման սրահի կառուցում, գ) հուշանվերների և գրքերի վաճառքի կրապակ, այցելուների լուսանկարահանման համար համապատասխան միջավայրի ծևավորում, դ) մուտքի հանգույցի և անցակետի կազմակերպում, ե) առանձնացված ավտոկայանատեղիի կազմակերպում:

Ծրագրի և նախագծի համակարգող՝ Գ. Գյուրջյան, ճարտ.-ր՝ Ա. Սարգսյան, Հ. Սանամյան (Հավ. 4. 2):

Այս ծրագրերի իրականացման արդյունքում թանգարանների տարածքը կբարեկարգվի, դրանք կունենան նոր թանգարանային շենքեր, ֆունկցիոնալ համապատասխան գոտևորում, հուշանվերների վաճառակետ, ինչպես նաև հնագույն ժամանակների հայկական բնակելի տները, գործառույթները, ծեսերը, խոհանոցը ներկայացնող և թանգարանի ուղղվածությանը համահունչ հատուկ տարածքներ՝ որոնք, արդյունքում, մշակութային զբոսաշրջությունը զարգացնող յուրատեսակ խթան կհանդիսանան:

2016թ. անցկացվեց մրցույթ՝ Հայաստանի Ազգային պատկերասրահի նոր շենքի կառուցման առաջադրանքով: Նոր թագարանային շենքը պետք է նախագծվեր Մաշտոցի պողոտային եւ Անտառային փողոցի միջև՝ Մատենադարանի և Կասկադ համալիրի հարևանությամբ: Տարածքը պարսպապատ է: Այստեղ գտնվող համալիրը

ծառայում է իբրև ընդունելության և հանգստի տուն բարձրաստիճան հյուրերի համար: Համալիրի կառուցները նախագծվել են տարբեր ժամանակահատվածներում տարբեր հեղինակների կողմից: Հողակտորն ունի խիստ արտահայտված թեքություն և բաժանված է հարթակների՝ ըստ բարձրության:

Ներկայացվել էր 6 հայեցակարգային նախագիծ՝ «Ա.Սարդարյան ճարտարապետական արվեստանոցը», «Լսոն Քրիստոֆորյանի ճարտարապետական արվեստանոցը», «Միեր Չերքեզյան ճարտարապետական արվեստանոցը» /«Հայնախագիծ ԲԲԸ»/ (Հավ. 4. 3), «ԱՐԻՍԿՈՓ», «ՔԵԼՔՇՈՊ», ճարտարապետական արվեստանոցները, ճարտարապետ Կարեն Հարությունյանը:

«Ա.Սարդարյան ճարտարապետական արվեստանոցի» առաջարկով պատկերասրահի համալիրը տեղադրված է Մ. Մաշտոցի պողոտայի ձևավորված կառուցապատման կարմիր գծից ներս, ինչը նպաստում է կառուցի մոնումենտալ կերպարի ընկալմանը, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում կազմակերպել ավտոկայանատեղեր ճակատի երկայնքով: Մասնավորապես առաջարկվում է վերակառուցել Մատենադարանի թեքահարթակը որպես ծածկած ավտոկայանատեղի, կազմակերպել նաև բացօթյա կայանատեղ: Առաջարկվում է ստեղծել ավտոմոբիլային մոտեցում դեպի Մատենադարանի վերին հարթակ: Պահպանելով գոյություն ունեցող հիմնական կառուցները, ավելացվել են նոր մասնաշենքեր Մաշտոցի պողոտայի /մինչև 5 հարկ/ և տարածքի հյուսիս-արևելյան կողմերից /4 հարկ/, որոնք կապված են երկայնական սրահային մասնաշենքով /2 հարկ/: Գոյություն ունեցող մասնաշենքերն օգտագործվում են որպես վարչական և գիտակա-ուսումնական տարածքներ, իսկ նոր կառուցված հատվածները՝ որպես ցուցասրահներ և ֆոնդային պահոցներ: Հին և նոր մասնաշենքերի միջև առաջացած ներքին բակը օգտագործվում է բացօթյա ցուցադրությունների համար: Բակի հատվածում հին մասնաշենքի հարթ տանիքը օգտագործվում է որպես բացօթյա

սրճարան: Նախատեսվում են 1 ծառայողական և 2 տարածքի սպասարկման մուտքեր: Նոր կառուցի ծավալն աստիճանաբար նվազում է դեպի բակային հատվածը, որը թույլ է տալիս կազմակերպել հիմնական ցուցարանների բնական լուսավորությունը:

Պատկերասրահի մուտքը կազմակերպված է 2 նիշերով:

Առաջին մուտքը կազմակերպված է անմիջապես Մ. Մաշտոցի պողոտայից, վերելակով և ներքին աստիճաններով կապվում է նախասրահի հետ:

Երկրորդ մուտքը կազմակերպված է հանդիսավոր աստիճաններով անմիջապես դեպի նախասրահ, որը հնարավոր է օգտագործել որպես բացօթյա ցուցարահ: Այս հատվածը տեսանելի է նաև երկրորդ հարկում նախագծված սրճարանից:

Ճակատային հատվածում նախատեսված է խոշոր ինֆորմացիոն էկրան, կառուցի երեսապատման համար առաջարկվում է տրավերտինե խոշոր սալերի կիրառում, ինչը համահունչ կլինի գոյություն ունեցող կառուցապատմանը:

Նախատեսվում է գոյություն ունեցող մոտ 500ք.մ տարածքներին ավելացնել 15800 ք.մ տարածք (Հավ. 4.3):

«Լևոն Քրիստափորյանի ճարտարապետական արվեստանոցի» ճարտարապետ Վ. Միջյանի նախագծով առաջարկվում է գոյություն ունեցող համալիրի հիմնական կառուցների պահպանում, վերակառուցած և հարմարեցված համաձայն պատկերասրահի պահանջներին:

Պատկերասրահի գլխավոր մուտքը նախատեսված է Մ. Մաշտոցի պողոտայի կողմից Կորյունի փողոցի առանցքով: Շենքը հանդես է գալիս հսկայական շքամուտքի տեսքով: Ծավալի աստիճանային լուծումը թույլ է տալիս որոշ չափերով պահպանել գոյություն ունեցող այգու ծառերը: Նախատեսվում է կապել Մաշտոցի պողոտան Անտառային փողոցի հետ նոր շրջանցող ճանապարհով, ազատ թողնելով դեպի Մատենադարանի մոտեցումը: Համալիրը բաղկացած է բուն պատկերասրահի դահլիճների ծավալից և նրան հարող երկրորդ ծավալից, որը մի ծածկի տակ է առնում

արդեն գոյություն ունեցող կառուցները: Այս երկու ծավալները կապող օղակ է հանդիսանում արվեստների փողոց-ճեմասրահը:

Այն իրենից ներկայացնում է հանգստի գոտի կանաչ տարածքներով, որտեղ կարող են տեղադրվել քանդակներ: Այստեղ կլինեն նաև հուշանվերային կրպակներ: Տարածքը կծառայի որպես հանգստի և հանդիպումների վայր թանգարանի այցելուների համար: Գոյություն ունեցող տնակները կձևափոխվեն որպես անվանական ցուցարաններ:

Պատկերասրահի հիմնական ցուցարանները գտնվում են նորակառուց յոթհարկանի մասնաշենքում: Պատկերասրահի մշտական հավաքածուի դիտարկումը սկսում է վերին նիշից: Վերելակների միջոցով հնարավոր է բարձրանալ վերջին հարկ և յուրաքանչյուր դահլիճի վերջում գտնվող թեքահարթակով իջնել ներքևի հարկ: Ցուցարահի դահլիճների բնական լուսավորությունը ապահովվում են դահլիճների ելուստների հատակի լուսավորության ճեղքերի միջոցով: Առաջարկվում է պատկերասրահի և կասկադի միջևն ընկած տարածքն ազատել կառուցապատումից և կանաչապատել, ինչի արդյունքում արվեստի 2 օջախները միմյանց հետ կկապվեն հանգստի գոտիով (Հավ. 4. 4):

«ԱՐԻԿՈՒՊ»ճարտարապետական արվեստանոցի նախագծով պատկերասրահի շենքը բազմահարկ է՝ 6 հարկ՝ 5.20 մ բարձրությամբ: Ներքին տարածությունը բազմալուս է, հարկից հարկ կարելի է բարձրանալ հարմարավետ թեքուղով: Շենքում նախատեսված է տեղադրել մարդատար եւ բեռնատար վերելակներ, էվակուացիոն աստիճանավանդակներ, սանհանգույցներ հարկաբաժիններում:

Անտառային փողոցի վրա բացվող ճակատը մեկ ու կես հարկանի է՝ 8 մ բարձրությամբ, որը մոտ է հարեւանությամբ գտնվող կառուցների բարձրությանը: Մաշտոցի պողոտայի վրա բացվող ճակատը, որը գտնվում է համալիրի ամենախորքում, պատված է U-Glass տիպի ապակյա երկարավուն սալերով: Ճակատը

գուրկ է ակտիվ ճարտարապետական էլեմենտներից. հանդիսանում է յուրահատուկ «գործվածք», ֆոն գոյություն ունեցող կառուցների համար: Պատկերասրահի ճակատը՝ լուսաթափանց, բայց ոչ թափանցիկ, օրվա մութ ժամերին կճառագայթի մեղմ կաթնագույն լուս՝ ստեղծելով անկրկնելի լուսային կերպար: Անտառային փողոցի կողմից կազմակերպված է ծառայողական մուտք՝ պատկերասրահը սպասարկելու համար (<ավ. 4. 4):

Ներկայացված նախագծերից և ոչ մեկը ընդունվեց: Ուսումնասիրելով դրանք, գալիս ենք հետևողական, որ նրանք լիակատար չեն համապատասխանել առաջադրված ճարտարապետանախագծային պահանջներին և առաջարկված գաղափարների հիման վրա ճարտարապետների համար պետք է մշակվի նոր առաջադրանք՝ միջազգային մակարդակով հստակեցված չափանիշներով:

Ատենախոսության ընդհանուր վերլուծության և թանգարանային շենքերի ճարտարապետական նախագծմանն առաջադրված միջազգային չափորոշիչների ուսումնասիրման արդյունքում ակնհայտ երևում է, որ առանձին կառուցներում կամ այլ նշանակության շենքերում տեղակայված, հարմարեցված նախագծմամբ բոլոր թանգարաններն ունեն տարածքի գործառնական գոտևորման խնդիր, ինչի արդյունքում անհնար է դառնում իրականացնել թանգարանային արդի գործառույթները: Որպես օրինակ հիշատակելի են <Հրազդանի Երկրագիտական, Ե. Զարենցի. Ալ. Սպենդիարյանի, Ե. Քոչարի, Ս. Փարաջանովի թանգարանները:

Բակի կողմից ընդլայման-կառուցապատման աշխատանքների իրականացմամբ թանգարանները կընդլայնվեն կամ կմիանան բակերում տեղակայված այլ մասնաշենքերի կամ պահեստների վերին հարկերի հետ: Արդյունքում կստեղծվեն հին և նոր մասնաշենքերը միացնող ժամանակակից ճարտարապետական լուծումներով կապուղիներ, թանգարանի բնույթին համապատասխան ցուցանմուշների թեմատիկ ցուցադրման երթուղիներով լրացուցիչ տարածք: Թանգարանները կունենան

կինոդասախոսական դահլիճ, կրթական, վարպետաց դասերի սենյակներ, ընդլայնված ֆոնդադարաններ, հուշանվերների վաճառակետ և ժամանցի գոտի [59, Էջ 433] (Հավ. 4. 5): Ակնհայտ է դառնում, որ թանգարանային շենքերի արդիականացմանն ուղղված նմանտիպ մասնագիտական միջոցառումներ հնարավոր է իրականացնել բոլոր այն թանգարաններում, որոնք ունեն հարակից այգիներ, նկուղներ, կամ այլ նշանակության կառուցներում զբացեղնում են որոշակի հարկաբաժին և հետագայում նոր տարածքների ձեռքբերման հաշվին հնարավոր կդառնա դրանց ընդարձակումը:

Երևանում այժմ կառուցվում է «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանը (ճարտ.' Տ. Բարսեղյան/): Այս կառուցում հաշվի են առնված Գլուխ 1.4-ում արծարծված բոլոր նկատառումները և այն կարող է նախատիպ հանդիսանալ Հայաստանում ժամանակակից արվեստի մշակութային կենտրոն-թանգարանների ձևավորման համար (Հավ. 4. 6):

Հայկական նորագույն թանգարանաշինության օրինակ կարելի է համարել Լու Անչելեսում հիմնադրված Հայկական Ամերիկյան թանգարանի նախագիծը, 10 առաջատար ամերիկահայ մշակութային, բարեգործական և կրոնական ոչ առևտրային հաստատությունների միասնական առաջնորդությամբ: 2017 թ. ապրիլին Գլենդելի քաղաքային խորհուրդը համաձայնել է մինչև 95 տարով վարձակալության հանձնել թանգարանին հատկացված տարածքը տարեկան \$ 1 վարձավճարով [51]:

Հայ-ամերիկյան մշակութային կենտրոն - թանգարանի նախագիծը ներկայացվել է Alajajian Marcoosi Architects ճարտարապետական բյուրոի կողմից (գլխ. ճարտ.' Ա. Ալաջայյան): Ժանգարանը շրջապատվելու է իրապարակով, որտեղ տեղակայված է լինելու «խաղաղության այգին», ունենալու է մշտական և ժամանակավոր ցուցադրությունների, կրթական սենյակների առանձնացված հատվածներ, ուսուլսների կենտրոն, թատրոն: Արդի պահանջներին համահունչ, նախագիծը

նախատեսվում է որպես մշակութային կենտրոն, որը «խթանում է անհատների մշակութային բազմազանությունը՝ հակադրվելով ազգայնական նախապաշտումներին» [87, Յ ավ. 4. 7]:

**Թանգարանային շենքերի արդիականացմամբ, նոր շենքերի նախագծման գործընթացում գործառական հարմարավետության ստեղծման համար անհրաժեշտ է.**

- Նորագոյն թվային տեխնոլոգիաների ներդրման արդյունքում մեծացնել թանգարանային շենքի ցուցադրական և հասարակական գոտիների շահագործման հնարավորությունները:
- Տեղեկատվության ստացման արագացում՝ թվայնացման, էլեկտրոնային կատալոգների ստեղծման, ձայնատեսողական միջոցների կիրառման հաշվին:
- Պարզ և արագ կողմնորոշում /տեղեկատվական նշանների համակարգեր, ուղեցույցեր, ձայնային ազդանշաններ/
- Լուսավորության մասնագիտականլուծումների ապահովում բնական և արհեստական լուսավորության համադրմամբ և հատուկ՝ թանգարանայինչափորոշիչներին համապատասխանող լուսավորող սարքավորումների կիրառմամբ
- Տնտեսական և ակուստիկ պահանջները բավարարելու համար տեղադրել արդիական ինժեներատեխնիկական սարքավորումներ և համակարգեր, ֆիզիոլոգիական և տեխնոլոգիական պայմանների ապահովմամբ ստեղծել անհրաժեշտ միկրոկլիմա:

- Լուսագունային հարաբերությունների ներդաշնակությամբ,ճարտարապետական ոճերի սինթեզով ապահովել ներքին միջավայրի ոճային միասնությունը:
- Ցուցադրական և սպասարկման տարածների համարավետ նախագծում՝ հանգստի և աշխատանքի մթնոլորտ ապահովող տարբերակված գոտևորմամբ և

այցելուների անհատական պահանջների կանխատեսմամբ:

- Հաշվի առնել շենքի գործառական կառուցվածքի հնարավորությունները և ազատ նախագծման սկզբունքներովկանխել կառուցի բարոյական ծերացումը:

Հաշվի առնելով Գլուխ1-ում ներկայացված թանգարանների նախագծմանն առաջադրվող պահանջները, նաև հիմք ընդունելով միջազգային այլ չափորոշիչներ [68], [42], [46], առաջարկվում է թանգարանի նախագծման կամ արդիականացման համար համանշանակ մոդել (Սխեմա 8, Հավ. 4. 9), ժամանակակից թանգարանային գործառույթների համար անհրաժեշտ գործառնական գոտիներով (Հավ. 4. 8):

#### ❖ Մուտքի գոտի (1)

##### • Նախարահ (2)

- Հանդերձարաններ (3)
- Դրամարկη (4)
- Տեղեկատվական ծառայություններ (5)
- Հուշանվերային կենտրոն (8)
- Բուֆետ (7)
- Սանհանգույցներ (6)
- Պահակակետ (9)


#### ❖ Ցուցադրական, հանրահոչակման մաս

- Ցուցարահներ (10-12)
- Կինո-դասախոսական դահլիճ (13)
- Կրթական ծրագրերի սենյակներ (14-16)

#### ❖ Ֆոնդային հավաքածուի գոտի

- Ֆոնդապահոցներ (17-18)
- Ֆոնդային աշխատողների սենյակներ (19)
- Արհեստանոցներ (20)
- Լաբորատորիաներ (20)

- ❖ **Գիտական աշխատանքի համար նախատեսված տարածքներ**
  - Գրադարան – ընթերցասրահ (**21**)
  - Թանգարանային հավաքածուի վերաբերյալ տեղեկատվական ծառայություններ (**23**)
    - Նոր տեխնոլոգիաներով կահավորված սենյակ՝ չցուցադրվող թանգարանային առարկաների ուսումնասիրման համար /սենսորային կրպակներ, համակարգիչներ, այլ/ (**22**)
- ❖ **Աշխատակազմին հատկացված տարածքներ**
  - Վարչական աշխատողների սենյակներ (**24-26, 30**)
  - Գիտական աշխատողների սենյակներ (**27-29, 31**)
- ❖ **Տնտեսական գոտի**
  - Օժանդակ սենյակներ (**39**)
  - Ծառայողական սենյակներ (**35**)
  - Տնտեսական պահեստներ (**37**)
  - Սենյակներ ինվենտարի համար (**36**)
  - Տեխնիկական սենյակներ (**38**)



**Սխեմա 8.** Թանգարանի նախագծման կամ արդիականացման համանշանակ մոդել՝ թանգարանային տարածքի գործառնական գոտուորմամբ

Այսօրվա ճարտարապետի կարգախոսն է «Հիշողություն և նորարարություն»: Ճարտարապետն իր առաքելությունը տեսնում է ոչ թե անցյալի վարպետների հնարքների կրկնօրինակման, այլ անցյալի հիշողությունները փոխանցելու նոր ճարտարապետանախագծային լեզու ստեղծելու մեջ, դրանով իսկ ապահովելով ավանդույթների երկարակյացությունն ու ապագան: Ինչպես գրել է իսպանացի արդի ճարտարապետ Է. Սոբեհանոն. «Ժամանակակից ճարտարապետությունը անցյալի և ներկայի խտացումն է և հիմքը»[59] :

### **Եզրակացություն Երրորդ գլխի**

- 1.Մշակվել են թանգարանների արդիականացմանն ուղղված ճարտարապետական լուծումներ՝ գոյություն ունեցող թանգարանների համար առկա տարածքների

վերակառուցմամբ, նոր հիմնադրվողների համար՝ հատուկ նախագծումներով:

2. Հիմնավորվել է, որ Հայաստանում քաղաքային խիտ կառուցապատված միջավայրում գտնվող թանգարանային շենքերի արդիականացմանն ուղղված միջոցառումներն անհրաժեշտ է դիտարկել գոյություն ունեցող ծավալների շրջանակներում՝ ժամանակակից տեխնոլոգիաների լայն ներմուծմամբ և օժանդակ հասարակական տարածքների շահագործման հաշվին՝ /տանիքներ, նկուղներ, բակեր/:

3. Առաջարկվել են թանգարանների ճարտարապետական արդիականացմանն ուղղված լուծումներ՝ վերանորոգումը, վերակառուցումը, ընդարձակումը, հարմարեցումը:

4. Ցոյց է տրվել, որ թանգարանային շենքերի արդիականացմամբ, նոր շենքերի նախագծման գործընթացում գործառական հարմարավետության ստեղծման համար արդիական է հաշվի առնել նորագույն թվային տեխնոլոգիաների ներդրման, կառուցիչ էքստերյերի և ինտերյերի լուսավորության գիտականորեն հիմնավորված լուծումների ապահովման, տեղեկատվական նշանների համակարգերի, ուղեցույցերի, ձայնային ազդանշանների պարզ և արագ կողմնորոշմամբ, ճարտարապետական ոճերի սինթեզով թանգարանային ներքին միջավայրի գեղագիտական միասնության ապահովման հնարավորությունները:

5. Մշակվել է թանգարանային տարածքի գործառնական գոտևորման մոդել՝ համաձայն առաջարկված դրույթների՝ թանգարանային արդի գործունեությունը պատշաճ իրականացնելու համար:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ցոյց է տրվել, որ թանգարաններն իրենց կայացման պատմական ուղու ընթացքում դրսևորվել են որպես մեկ միասնական համակարգ, որպես անցյալի քաղաքակրթությունները, մշակութային ժառանգությունը բովանդակող և ներկայացնող, համընդհանուր խնդիրներ ու նպատակներ ունեցող հաստատություններ, որոնց նախատիպերում էլ առկա էին այն հիմնական, գլխավոր

գործառական գոտիները, որոնք կարևորվում և արժնորվում են այսօր: Հայաստանի թանգարանների կազմավորման պատմությունը սկսվում է մ.թ.ա. VII դարից, սակայն թանգարաններն որպես տիպարանական օբյեկտ ձևավորվեցին խորհրդային ժամանակաշրջանում (հարմարեցված տարածքներ, վարչական շենքեր և առանձին, հատուկ նախագծված կառույցներ): Արդի ճարտարապետության մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ. խորհրդային կարծրատիպերը փոխարինվում են ազատ ու ինքնատիպ նոր ոճաբանական լուծումներով, ձգտելով թանգարանային ճարտարապետությունը հնարավորինս համապատասխանեցնել միջազգային օրինակելի թանգարանի գաղափարին, միաժամանակ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները:

«Փոփոխվող թանգարան փոփոխվող միջավայրում» կարգախոսին համապատասխան այսօր ձևավորվում է թանգարանային ճարտարապետության և ցուցադրվող հավաքածուի անբաժան և ներդաշնակ միասնության տեսլականը, որի բաղադրիչ մասերն են՝ թանգարանային ճարտարապետության բացարձակ ինքնատիպությունը, ցուցահանդեսներին և ցուցադրանքին այցելով ինտերակտիվ մասնակցության կարևորությունը՝ ժամանակակից նորարարական տեխնոլոգիաների լայնածավալ օգտագործմամբ:

2. Բացահայտվել է, որ արդի թանգարանային բաղաքականության մեջ թանգարանագիտական և մշակութաբանական հայեցակարգերի փոփոխություններին համպատասխան թանգարանային կառույցներին առաջադրվող այժմեական ճարտարապետական պահանջներից են.

- թանգարանի ներքին միջավայրի ներկայացումը իբրև «կենդանի» տեղակատվական տարածություն՝ սրահների ճկուն փոխակերպման հնարավորությամբ,
- թանգարանի՝ որպես բազմագործառական կենտրոնի կերպարի ստեղծումը

արտաքին և միջավայրային գրավիչ ձևավորմամբ՝ արդի ճարտարապետական հորինվածքների, շինարարական թեթև ու դյուրաշարժ կոնստրուկցիաների կիրառմամբ:

3. Արձանագրվել է թանգարանների տարածքի ֆունկցիոնալ, ճարտարապետական կազմակերպման, ոճական ու կոնստրուկտիվ լուծումների, էքստերյերի և ինտերյերի ձևաստեղծման խիստ տարբեր մակարդակներ և որակ: <Ետագրութված թանգարանները խմբավորվել և դասակարգվել են ըստ.

ա. ժամանակագրության՝

բ. աշխարհագրական տեղաբաշխման՝ << մարզերում և Երևանում;

գ. սեփականության ձևի՝ պետական, համայնքային, մասնավոր

դ. բնույթի՝ պատմության, արվեստի, գիտության և տեխնիկայի,

արդյունաբերական, բնագիտական, գյուղատնտեսական;

ե. տիպի՝ թանգարան, արգելոց-թանգարան, հուշային, բուհական, կոմպլեքս;

զ. արդի վիճակի;

է. թանգարանային շենքերի ճարտարապետական կազմակերպման

առանձնահատկությունների՝

օ) առանձին կառույցում՝ հատուկ նախագծմամբ իրականացված,

օ) այլ նշանակության կառույցում տեղակայված,

օ) հարմարեցված;

ը. հատակագծային լուծումների՝

օ) սրահների՝ հորիզոնական ուղղությամբ, հաջորդական,

օ) ուղղաձիգ կամ բևեռացված դասավորությամբ;

թ. առկա խնդիրների՝

օ) նոր շենքերի կառուցման անհրաժեշտություն,

օ) ոչ բավարար տարածքներ,

- հակահրդեհային, տեսահսկողական ազդանշանային արդիական համակարգերի բացակայություն;

Ժ. արդիականացման հնարավորությունների՝

- վերանորոգման,
- վերակառուցման,
- ընդարձակման,
- հարմարեցման միջոցով:

4. Մշակվել են հետևյալ առաջարկները.

- Հայաստանում հրատապ է միջազգային նորմերին համապատասխան թանգարանների նախագծմանն առնչվող տեղայնացված չափորոշիչների սահմանումը:
- Նորագույն ճարտարապետահատակագծային հայեցակարգերի, նորագույն տեխնոլոգիաների և դիզայներական մոտեցումների համադրությամբ գործառնական, միաժամանակ գեղագիտական միջավայրի ստեղծում, ինչը շինության գոյատևման վճռորոշ և կարևորագույն նախապայման կհանդիսանա, հնարավորինս երկարագելով կառուցի բարոյական ծերացումը:
- Թանգարանային տարածքների գործառնական գոտևորման համանշանակ մոդելի ներկայացում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան:

## **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Աբեղյան, Մ. Գեորգ Դ մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց.-  
Վաղարշապատ:- 1899.- 91 էջ:
2. Դրասխանակերտցոյ, Յ. Պատմութիւն հայոց:-Թիֆլիս: - 1912:-427 էջ:
3. Հարությունյան, Ս. Հայ իին վիպաշխարհը, Եր.: «Արևիկ», 2004թ.-240 էջ:
4. Հայկական սովետական հանրագիտարան/Խմբ.' Վ. Համբարձումյան.-Երևան:  
Հայ սովետական հանրագիտարան հրատարակչություն, 1981.- < 7. - 720 էջ:
5. Ղաֆարյան, Կ. Հայաստանի թանգարանների պատմությունից//Լրաբեր  
Հասարակական Գիտությունների.-Եր., 1972.- №10.- 20-35 էջեր:
6. Մալումեան, Խ. Խրիմյան. կենսագրական տեսութիւն, Թիֆլիս, 1892.- 96 էջ:
7. Սիմոնյան, Հ. Սա մեր երկիրն է, Հայաստան.- Երևան, 2007. - 496 էջ: ISBN 978-  
99930-4-959-3:
8. Քոչար Կ. Երվանդ Քոչարի թանգարան. Արդի խնդիրներն ու զարգացման  
հեռանկարները//ԵրճՇՊՀ Գիտ.աշխ. ժողովածու.- Երևան, 2012.-< III /46/.-էջ 46-52:
9. Քոչար Կ. Ակնարկ թանգարանների կազմավորման ու զարգացման  
մասին//ԵրճՇՊՀ Գիտ.աշխ. ժողովածու.- Երևան, 2013,- < II /49/.- էջ 82-90:
10. Քոչար Կ. Թանգարանների կազմավորումն ու տարատեսակները  
դարում//ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ.- Երևան, 2014.-<. IV (55).-էջ 86 – 98:
11. Քոչար Կ. Թանգարանային շենքերի նախագծմանն առաջադրվող հիմնական  
պահանջները//ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ.- Երևան, 2015.-<.I (56).-էջ 63-

75:

12. ՔոչարԿ. Հ. Թանգարանային շենքերի առանձնահատկություններն ըստ դրանց  
տիպերի և բնույթի//ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ.- Երևան, 2016.-Հ. II (61).-Էջ

30 – 40:

13. Альберти. Десять книг о зодчестве // М.-1937.- Т.1. 793 с.
14. Арутюнова, А. Новый объем: Знаменитый голландский музей получил  
современный корпус // Ведомости, 21.09.2012, 36(318).
15. Арутюнян В.М., Асратян М.М., Меликян А.А. Архитектура Советской Армении.-  
М.- 1972.-160 с.
16. Бабаян Л.М., Яралов Ю.С. Рафаэл Исраелян. – М., 1986. – 191 с.
17. Буцко, А. Музей на набережной//Вокруг света, М. – 01.02.2009.
18. Валентайн, К. Психология красоты.-М.-Л.: Пучина, 1926.- 136 с.
19. Вилла д'Эсте. Вилла Адриана. Григорианская вилла. Тиволи. - Рим: Lozzi Roma.-  
64 с.
20. Гиберти, Л. Commentarii. – М., ИЗОГИЗ, 1938. - 104 с.
21. Григорян А.Г., Товмасян М.Л. Архитектура Совет. Армении.- М.-1986.-320 с.
22. Дженкс, Ч. Зрелищный музей – между храмом и торговым центром.  
Осмысление противоречий//Пинакотека. М., 2000. № 12.
23. Зюйлен, Г. ван.«Все сады мира».- М., «Астрель, ACT», 2002. -176с.
24. Захарченко, И. Н. Художественных музея как храм современной культуры.-  
Sociologist's Warehouse. 2006.
25. Зайпель, В. Текущая политика музеев Австрии // Музей как сообщество в  
условиях глобализации. – М., 2002. – С. 92–93.
26. Зауров, И. Между линиями // Пинакотека. 2000. № 12.-144 с.

27. Калачева, Н.М. Вариации музейной архитектуры: Ф.Л.Райт и Ф. Гери// Сборник научных трудов Sworld по материалам международной научно-практической конференции.–М., 2012. – Т. 26. – № 2.- 107 с.
28. Лелина, Е. И. Педагогические музеи в России второй половины XIX - начала XX веков : история становления и развития/ Санкт-Петербург. 2008. 316стр.
29. Лорд Б., Лорд Г.Д. Менеджмент в музейном деле. – М.: Логос.– 2002. – 256 с.
30. Мальро, А. Голоса безмолвия / Пер. с фр. В.Ю. Быстрова под ред. А.В. Шестакова; прим. А.В. Шестакова. – СПб.: Наука, 2012. – 871 с.
31. Милюгина, Е. Г. Музей изящных искусств, Бостон. -М.: Белый город, 2016. -224 с.: 201 ил.- (Музеи мира). - ISBN 978-5-7793-4028-1.
32. Меликсет-бек, Л. М. Из истории археологических изысканий в Армении// «Տեղեկագիր» (<ши. գիլ.), 1947, №6.
33. Музеи. Энциклопедический словарь Брокгауза и Ефрон: В 86 томах (82 т. и 4 доп.). – СПб., 1890–1907.
34. Музеи 90-х // Артхроника, 2002, № 4.-120 с.
35. Низовский, А.Ю. Величайшие храмы мира: Энциклопедический справочник.- М.: Вече, 2006. - 576 с.
36. Николаенко, В. А. Императорский Сельскохозяйственный музей в Санкт-Петербурге и некоторые вопросы аграрной истории России второй половины XIX и начала XX вв./ Санкт-Петербург, 2000г.- 212 с.
37. Ожегов, С. И. Толковый словарь русского языка. –М.: АСТ, 2014.- 736 с.
38. Петрикова, С. Музеи мира. Центр Пауля Клее в Берне//Третьяковская галерея”.- М., 2007. № 1. С.71-75.
39. Раппапорт, А. Герцог и Де Мерон меняют лицо. Свое и Лондона// Архитектор.- 2006.

40. Ревякин, В.Художественные музеи:Справ.пособие//М.:Стройиздат,199.-248 с.
41. Ревякин, В., архит. Оленев А. Рекомендации по проектированию музеев. // Разработчик: ЦНИИЭП им. Б.С.Мезенцева.-Стройиздат, Москва, 1988, 50 с.
42. СНиП 2.08.02-89. Общественные здания и сооружения. Госстрой России,- М., ГП ЦПП, 2003.
43. Третьякова, Т. Н. Музейеведение: Учебное пособие.-Челябинск: УралГУФК, 2011. -304 с.
44. Хрусталева, М. Дом-музей: история и будущее музейной архитектуры// Музей. - 2008.- № 6.- С. 5-20.
45. Шипунова, Е. Музеи новой эры // Музей. – №7, 2008.
46. Шулика, Т.О. Методические указания к выполнению курсового проекта «Масштабный объект общественного назначения с функцией экспонирования (музей света, музей дизайна, музей современного искусства, музей места)» для студентов, обучающихся по направлению «Дизайн архитектурной среды»/- М.: МАРХИ, 2015. – 13с.
47. Шульц, Б. Музей на пороге смены времен: определение места музея // Музей как сообщество в условиях глобализации. – М., 2002. – 113 с.
48. Юренева, Т. Ю. Музей в мировой культуре.- РУССКОЕ СЛОВО-РС, 2003. - 536 с.- ISBN 5-94853-099-X.
49. Юсупова, М. Реставрация музейных ценностей. Научные и практические работы // Труды ГИМ. – М., 1999. Вып. 107.
50. Speech: Музей. – М., 2013. № 11. – 288 с.
51. Armenian American Museum Announces Major Community-Wide Events// Asbarez, Los Angeles 2018. 26 Р.
52. Bezombes D. La Grande Galerie du Muséum national d'histoire naturelle :

Conserver c'est transformer, Paris, Le Moniteur, 1994,168 p. - ISBN 2-281-19083-8

53. Gottfried, M. Das Wiener Kaiserforum. Utopien zwischen Hofburg und Museumsquartier//Böhlau Verlag, Wien 2001.165 p. - ISBN 3-205-99196-6.
54. Grandet, O.«The médiathèque at the musée du quai Branly in Paris: virtual, but more than that », Art Libraries Journal, vol. 32, no 4, 2007. - ISSN 0307-4722.
55. Guerzoni, G. The Twentieth Century Museum..M 9. A new museum for a new city. Concorso Internationale di Architettura. Allegato a Casabella n.09/2010, pp.25-31.
56. Kimmelman, M. "Why Is This Museum Shaped Like a Tub?". The New York Times. Retrieved 9 October 2013.
57. Kochar. K.H, Safaryan A.Yu. Spatial and Temporal Illusions in E. Kochar Museum in Yerevan //Scientific papers of National University of Architecture & Construction of Armenia.- Yerevan, 2014.-V. IV (55).- P. 80 - 85:
58. Kochar K. Innovative Methods to organize cultural tourism in Yerevan//Proceedings of 7th International Conference Contemporary Problems of Arhitecture and Construction, - Florence – Italy, 2015.- P.707-712.
59. Kochar K. Ervand Kochar's relations with Georgian artists as reflected in the context of architectural modernization of Ervand Kochar Museum //Proceedings of 9th International Conference Contemporary Problems of Arhitecture and Construction, - Batumi – Georgia, 2017.- P.433-436.
60. Lydekker, R.Sir William Flower.- London by J.M.Dent & Co, New York by E.P.Dutton & Co.-1906. 191p.
61. Marrota, A. Contemporary Museums//Skira Editore S.p.A./Milano/Italy /-2010.352 p.
62. Nesselrath, Heinz-Günther. Das Museion und die Große Bibliothek von Alexandria. In: Tobias Georges u.a. (Hrsg.): Alexandria (= Civitatum Orbis Mediterranei Studia. Bd. 1). Mohr Siebeck, Tübingen 2013.- ISBN 978-3-16-151673-3.

63. Trask, J. Things American: Art Museums and Civic Culture in the Progressive Era// University of Pennsylvania Press, Philadelphia. 2012. 312 p.
64. Palterer, D. e Zangheri L.II nuovo Museo dell'Opera di Santa Maria del Fiore Firenze, Edizioni Polistampa, Firenze 2001 . 576 p. - ISBN 88-8304-344-8.
65. Petit Futé. Paris. 2007.336p.ISBN 2-7469-1701-7.
66. Premoli, F. Linguaggi Dell'allestire Oggi//Corso di formazione permanente - Museografia e Allestimento//, Yerevan, 4/10 ottobre 2012.
67. van Velzen, A.G., "Stampertje": 15 jaar (1985 - 2010) columns in het personeelsblad "Stampede" van het Stedelijk Museum Amsterdam. Amsterdam, 2010.
68. Wise, C. Chief Editor; Associate Editor: Erdös Anne. Museum architecture. Museum. Vol XXVI, n° ¾. Switzerland: Unesco, 1975. 281p.
69. Zeiger, M. New Museums: Contemporary museum architecture around the world // New York: Universe, 2005. 208 p. - ISBN: 0-7893-1227-1

### **Համացանցային իրատարակություններ**

70. Дизайн музеиных помещений. Мастерская музеиных проектов А. Антонца.  
<http://museum-design.com.ua/news/12-museum-project-and-structure-of-premises>.
71. Евсютина, Д. Музей Гуггенхайма в Нью-Йорке.2011.  
[www.archandarch.ru/главная/музеи/музей-гуггенхайма/](http://www.archandarch.ru/главная/музеи/музей-гуггенхайма/)
72. Мартовицкая, А.Изобретая память места. 24.09.2013 .  
<https://archi.ru/russia/50410/izobretaya-pamyat-mesta>
73. Открылся Центр Пауля Клее в Берне. 20.06.2005.  
<http://archi.ru/world/128/otkrylsya-centr-paulya-klee-v-berne>
74. Поправко, Е. А.; ред. Касаткина М. Музееоведение//Учебное пособие для студентов специальности 020600 "Культурология"// - Владивосток : ВГУЭС, 2006.  
[http://abc.vvsu.ru/Books/muzeebed/page0002.asp .](http://abc.vvsu.ru/Books/muzeebed/page0002.asp)

75. Северенчук, А. Здания музеев: три типа против стереотипа.  
[www.forma.spb.ru/ Arch project/steni-bez-muzeia.shtml](http://www.forma.spb.ru/Arch%20project/steni-bez-muzeia.shtml)
76. Тарасова, О. Берегись велосипеда  
<http://archi.ru/world/52786/beregis-velosipeda>
77. Шипунова, Е. Современные тенденции в музейной архитектуре. 6 стр.  
[http://museumstudy.ru/wp-content/uploads/2015/12/shipunovasovr\\_tendencii\\_v\\_muz\\_archi.pdf](http://museumstudy.ru/wp-content/uploads/2015/12/shipunovasovr_tendencii_v_muz_archi.pdf).
78. Экомузеи. Российская музейная энциклопедия.  
[http:// www.museum.ru/ RME/sci\\_eco.asp](http://www.museum.ru/RME/sci_eco.asp)
79. Якубчук, Ф. Стены –старые и новые .05.11.2014.  
<http://archi.ru/world/58372/steny-starye-i-novye>
80. Bianchini, R. August 30, 2016. London. The Switch House and the New Tate Modern.  
<https://www.inexhibit.com/case-studies/tate-modern-expansion-herzog-de-meuron/>
81. Henderson, J. Tate Modern builders Carillion win £400m Battersea Power Station contract. 23<sup>rd</sup> May 2013.  
[http://www.yourlocalguardian.co.uk/news/local/10439829.Tate\\_Modern\\_builders\\_win\\_400m\\_Battersea\\_Power\\_Station\\_contract/](http://www.yourlocalguardian.co.uk/news/local/10439829.Tate_Modern_builders_win_400m_Battersea_Power_Station_contract/)
82. International Council of Museums (ICOM). STRATEGIC PLAN 2016-2022  
[http://icom.museum/fileadmin/user\\_upload/pdf/Strategic\\_Plan/ICOM\\_STRATEGIC\\_PLAN\\_2016-2022\\_ENG.pdf.](http://icom.museum/fileadmin/user_upload/pdf/Strategic_Plan/ICOM_STRATEGIC_PLAN_2016-2022_ENG.pdf)
83. National Committees of European Countries(ICOM). Support Culture and Museums to Face the Global Crisis and Build the Future. 2013.  
[http://icom.museum/fileadmin/user\\_upload/pdf/Statements/ENG/Lisbon\\_Declaration\\_ENG.pdf .](http://icom.museum/fileadmin/user_upload/pdf/Statements/ENG/Lisbon_Declaration_ENG.pdf)

84. Marzo, C. Di. Apre a Firenze il Nuovo Museo dell'Opera del Duomo.

[http://www.archiportale.com/news/2015/10/architettura/apre-a-firenze-il-nuovo-museo-dell-opera-del-duomo\\_48574\\_3.html](http://www.archiportale.com/news/2015/10/architettura/apre-a-firenze-il-nuovo-museo-dell-opera-del-duomo_48574_3.html).

85. Museum het Rembrandthuis. <https://www.rembrandthuis.nl/en/rembrandt-2/rembrandts-house/history/>

86. Nauze, N. L'architecture des musées au XX<sup>e</sup> siècle, la période contemporaine et l'inflation muséale. 2008.

[http://arts-plastiques.ac-rouen.fr/grp/architecture\\_musees/architecture\\_xxe.htm](http://arts-plastiques.ac-rouen.fr/grp/architecture_musees/architecture_xxe.htm)

87. Oh, E. Alajajian Marcoosi Architects Propose Armenian American Museum for California. 2016

<https://www.archdaily.com/779685/alajajian-marcoosi-architects-propose-armenian-american-museum-for-california>

88. Sveiven, Megan. AD Classics: Fondation Cartier / Jean Nouvel. 2010.

<https://www.archdaily.com/84666/ad-classics-fondation-cartier-jean-nouvel>

89. <http://jardin.fondationcartier.com/en/1961/the-fondation-cartier-s-garden>

90. Zentrum Paul Klee. Architecture.

<http://www.zpk.org/en/service-navigation/about-us/architecture-107.html>

## **ՀԱՎԵԼՎԱԾ**

1. Ատենախոսության կառուցվածքը
2. Թանգարանային ճարտարապետության զարգացման  
առանձնահատկությունները
3. Հայաստանի Հանրապետության թանգարանների ճարտարապետությունը
4. Հայաստանի Հանրապետության թանգարանային շենքերի  
ճարտարապետական արդիականացման հեռանկարները
5. Հայաստանի Հանրապետության Պատմության թանգարանները
6. Հայաստանի Հանրապետության Արվեստի թանգարանները
7. Հայաստանի Հանրապետության Գիտության և տեխնիկայի թանգարանները

- 8.** Հայաստանի Հանրապետության Արդյունաբերական թանգարանները
- 9.** Հայաստանի Հանրապետության Բնագիտական թանգարանները
- 10.** Հայաստանի Հանրապետության թանգարանների հիմնադրման  
պատմական տվյալներ, այլ մանրամասներ ցուցադրության  
կազմակերպման վերաբերյալ